«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ – 2015

ՆԱԽԱԲԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանի (այսուհետ՝ ԵՄՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ուսումնական հաստատության նախաձեռնությամբ և նրա կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվել և համակարգվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած է եղել 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագիտական խմբի առջև դրված էր երկու խնդիր՝

1) հավատարմագրման նպատակով իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային չափանիշներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է ԵՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների, և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ըստ Որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 16

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 16

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 16

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 20

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 20

I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 21

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 24

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 28

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 33

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 38

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 42

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 46

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 50

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 53

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 56

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 60

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 61

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ 61

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 64

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 67

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 68

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 69

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ ԵՄՀ-ն, համաձայն իր տեսլականի, հավակնում է «պատրաստել փոփոխությունների պատրաստակամ անհատների, ովքեր կդառնան նորարար, մրցունակ ու սոցիալապես պատասխանատու մասնագետներ և օրինակելի քաղաքացիներ»: Իր առաքելությունը ԵՄՀ-ն նախանշում է երեք մակարդակներում.

1) ուսուցում՝ ուսուցանել որակի ապահովման ազգային չափանիշներին համապատասխան, իրականացնել բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն սոցիալական, հումանիտար գիտությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում՝ նպատակաուղղված աշխատաշուկայի պահանջներին և կարիքներին, ստեղծել համագործակցային միջավայր կրթության շահառուների համար՝ նպաստելով արդիական գիտելիքների, հմտությունների և կարողությունների փոխանցմանն ու տարածմանը, համագործակցային մեթոդների միջոցով ուսանողների մոտ զարգացնել սովորելու հմտություններ, ինչպես նաև պատրաստակամություն ընդունելու նորը և անընդհատ կատարելագործվելու, նպաստելով հարափոփոխ միջավայրում վերջիններիս մրցունակության ապահովմանը,

2) հետազոտություն՝ իրականացնել հետազոտություններ՝ ուղղված կրթության բովանդակության արդիականացմանը, միջազգայնացմանը, ինչպես նաև համալսարանի անընդհատ զարգացմանը, իրականացնել ՀՀ սոցիալ-տնտեսական առաջընթացին և միջազգայնացմանը միտված կիրառական հետազոտություններ,

3) հանրային ծառայություն՝ ուսուցման և հետազոտության ոլորտներում ստացված արդյունքներին հաղորդակից դարձնել հասարակական լայն շրջանակների՝ տարածելով ձեռք բերված դրական փորձն ու գիտելիքը:

Համալսարանը 2002թ. անցել է հավատարմագրում մինչ 2011 թվականը գործող պետական հավատարմագրման չափանիշների և կարգի համաձայն: Հավատարմագրման ներկա գործընթացին համալսարանը մասնակցել է իր դիմումի համաձայն:

ԵՄՀ-ն արտոնված է բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում իրականացնել 4 բակալավրական և 4 մագիստրոսական կրթական ծրագրեր, սակայն իրականացնում է 3 բակալավրական (Կառավարում, Իրավագիտություն և Օտար լեզուներ) և 2 մագիստրոսական (Կառավարում և Իրավագիտություն): Իրականացվող Իրավագիտություն մագիստրոսական ծրագիրը հավատարմագրված չէ: Նոր է սկսվել դասընթացների ծրագրերի նկարագրումը կրթական վերջնարդյունքներով (գիտելիք, հմտություն, կարողություն): Ըստ էության, կրթական ծրագրերից միայն մեկն է (Իրավագիտություն-բակալավրական ծրագիր), որ կազմված է պատշաճ մակարդակով, այն էլ արտաքին դրամաշնորհային ծրագրի շնորհիվ: Կրթական և առարկայական ծրագրերի,

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

դասավանդման և գնահատման մեթոդների միտվածությունը վերջնարդյունքներին հստակ չէ:

Ուսանող/դասախոս հարաբերակցությունը վերջին տարիներին եղել է 13-ից 15, սակայն ներկայումս 11 է: Նման միտումները մտահոգիչ են, հատկապես եթե հաշվի առնվի նաև այն, որ ԵՄՀ-ն ֆինանսական միջոցների սղության պատճառով չի կարողանում առաջարկել մրցակիցներից ավելի բարձր աշխատավարձ՝ խթանելու որակյալ մասնագետների ներհոսքը: Դասախոսների միջին տարիքը վերջին տարիներին աճել է և ներկայումս կազմում է 44.7 (օրինակ, 2011 թ. եղել է 36.3): Քիչ են գիտական աստիճան կամ կոչում ունեցող մասնագետները: Դասախոսական կազմում կան անդամներ, որոնք դասավանդում են մեծ թվով առարկաներ: Որոշ դեպքերում պայմանագրային հիմունքներով ներգրավվում են մասնագետներ իրենց առարկաներով, որոնք ոչ միշտ են բխում ՄԿԾ-ների ուսումնական պլանների պահանջներից:

Համալսարանի ենթակառուցվածքներն ու ռեսուրսները ներկայումս բավարարում են մասնագիտական կրթության տրամադրման համար: Չնայած համալսարանը ընդլայնվելու հնարավորություններ ունի՝ ներկայումս որոշակի խնդիրներ կան տարածքների հետ կապված. բավարար պայմաններ չկան մարզադահլիճում, դասապրոցեսը կազմակերպվում է երկհերթ, բացի այդ նույն հարկաբաժնում միաժամանակ **ընթանում են ավագ դպրոցի և համալսարանական խմբերի դասեր**[2]: Ֆինանսական ռեսուրսների ձևավորման հիմնական աղբյուրը ուսանողների վարձավճարներն են, որոնք մեծամասամբ ծախսվում են աշխատավարձի վճարման վրա: Ուսանողների փոքր թիվը և ըստ այդմ՝ ուսանող/դասախոս ցածր հարաբերակցությունը ստիպում են որոնել ֆինանսական այլընտրանքային աղբյուրներ: Այս առումով բուհի ղեկավարությունը անհանգստացած է ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացման խնդրով:

ԵՄՀ-ում մտահոգված են ուսանողների ուսումնառությամբ, միջավայրի ուսանողակենտրոնության և տրամադրվող կրթության վերաբերյալ ուսանողների տեսակետով: Միասնական ընդունելության քննությունների կազմակերպման հետ կապված կտրուկ նվազել է դիմորդների քանակը: Ուսանողների ներհոսքը ապահովվում է հենակետային վարժարանի շրջանավարտների կամ հեռակա ուսուցման ձևից առկա տեղափոխվածների հաշվին: Բուհում անցկացվող ընդունելության քննությունները (հեռակայի և մագիստրատուրայի համար) փաստացի անցկացվում են հարցազրույցների ձևով: Հարցումների միջոցով համալսարանը կարողանում է վերհանել ուսանողների կրթական կարիքները, սակայն կանոնակարգված և նպատակային չեն այդ կարիքների բավարարմանն ուղղված հետագա գործընթացները: Խնդիրներ կան ուսանողներին լրացուցիչ խորհրդատվությունների և օժանդակությունների տրամադրման կազմակերպման հարցերում: Ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են համալսարանական միջավայրից, իրենց ուսուցումից և արժևորում են համալսարանի կողմից գործնական կրթություն առաջարկելու ձգտումը:

ԵՄՀ հայտարարված հետազոտական նպատակները հավակնոտ են, իսկ հետաքրքրությունները՝ ոչ հստակ: Հետազոտությունները ընդհանուր առմամբ կարգավորված չեն և իրավիճակային են. չկան ամբիոնային թեմաներ, որոնք անմիջապես կապ ունեն կրթական ծրագրերի իրականացման հետ: Չնայած բուհում իրականացվում են որոշակի քայլեր, սակայն դեռևս փոքր է հետազոտական թեմաներում ուսանողների մասնակցությունը, որը պայմանավորված է բուհում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների փոքր ծավալով: Հետազոտության ոլորտում միջազգայնացման ձգտումները նկատելի են, սակայն արդյունքները շոշափելի չեն: Չեն հատկացվում բավարար ֆինանսական միջոցներ, իսկ հետազոտությունները չեն ապահովում որևէ տեսակի ֆինանսական հոսքեր:

---

[2] Փոփոխվել է համալսարանի դիտողությունների հիման վրա: Հին տեքստում եղել է. «... ընթանում են **դպրոցական, քոլեջային** և համալսարանական խմբերի դասեր»:

Միջազգային համագործակցությունը կարևորվում է ԵՄՀ ղեկավարության կողմից: Համալսարանը հավակնում է դիրքավորվել՝ որպես միջաջգայնացման բարձր աստիճան ունեցող ուսումնական հաստատություն: Վերջին տարիներին միջազգային կոնսորցիումների, համագործակցության պայմանագրերի և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող այցելությունները և վերապատրաստումները նպաստել են ուսումնական միջավայրի, առարկայական ծրագրերի և դասավանդման մեթոդների զարգացմանը: Համալսարանում օտար լեզուներով դասավանդումն իրականացվում է խիստ սահմանափակ, և օտար լեզվի իմացության մակարդակը դեռ շարունակում է մնալ միջազգայնացման գործընթացներին խոչընդոտող հիմնական խնդիրներից մեկը:

Գործող կառավարման համակարգը բուհերին բնորոշ և ընդունելի համակարգ է, որն ընդհանուր առմամբ համապատասխանում է ԵՄՀ ռազմավարական նպատակներին և խնդիրներին: Սակայն առանձին ստորաբաժանումներ ունեն մարդկային ռեսուրսներով թերապահովվածության խնդիր: Խնդիրներ առկա են նաև կառավարման բարձր օղակներում՝ կապված մարմինների միջև գործառույթների տարանջատման հետ: Կառավարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ապահովվում են փաստաթղթերի հասանելիության, տեղեկատվական ներքին համակարգի և ինտերնետային կայքի միջոցով: Տարբեր խորհուրդների կազմերում ներգրավվածությունը, հարցումները, պարբերական հանդիպումները, վարչական մարմիններին և ստորաբաժանումներին դիմելու հնարավորությունը թույլ են տալիս փաստել, որ թե՛ դասախոսները, թե՛ ուսանողները հնարավորություն ունեն դրսևորելու իրենց շահերը կառավարչական գործընթացներում: Համալսարանը կարևորում է իր գործունեության վրա ազդող գործոնների և ներքին միջավայրի ուսումնասիրությունը, տիրապետում է դրա համար անհրաժեշտ գործիքակազմին, սկսել է իրականացնել գնահատումներ: 2014թ-ին ներդրված որակի ամբողջական կառավարման սկզբունքի տեսանկյունից գործընթացների վարչարարության մեջ գերակշռում են պլանավորման և իրականացման փուլերը, ավելի քիչ՝ գնահատումը և բարելավումը:

ԵՄՀ ղեկավարությունը և աշխատակիցները կարևորում են տրամադրվող կրթության որակը և որակի ապահովումը, չնայած ներկայումս դա ավելի շուտ պայմանավորված է հավատարմագրման պահանջներով: Որակի ներքին ապահովման համակարգը կայացման փուլում է: Կենտրոնը ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով, որը ձեռք է բերվել «Կրթության որակ և համապատասխանություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, սակայն առկա է մարդկային ռեսուրսների պակաս ինչպես կենտրոնում, այնպես էլ ստորաբաժանումներում: Որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը ներկայացված են ԵՄՀ Որակի ապահովման ուղեցույցում: Հիմք ընդունելով մշակված փաստաթղթային հենքը՝ համալսարանը կարող է իրականացնել որակի ապահովման կանոնակարգված գործընթացներ:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) Բարելավված ռազմավարական ծրագիր՝ իրականացման գործողությունների ծրագրով,
2) Բուհական միջավայրին բնորոշ կառավարման ընդունելի կառուցվածք՝ ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ կառուցվածքային ստորաբաժանումներով,
3) Ուսանողների ներգրավվածությունը կառավարման տարբեր մարմիններում,
4) Վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի, ինչպես նաև ուսանողների՝ փոխվելու, կատարելագործվելու պատրաստակամություն,

5) Պրոֆեսորադասախոսական կազմի բազմագործոն գնահատման գործընթաց՝ ինքնագնահատման, ուսանողների հարցման և ամբիոնի վարիչի գնահատման համադրմամբ,
6) Ամենամյա գիտաժողովներ և դրանց արդյունքների հրապարակում ժողովածուների տեսքով,
7) Ուսումնական պրոցեսը կազմակերպելու համար լսարանային, տեխնիկական, գրադարանային, ծրագրային և այլ անհրաժեշտ պայմանների առկայություն,
8) Գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ձգտում և այդ նպատակով ինտերնետային կայքի ակտիվ կիրառում,
9) Հասարակությանը մատուցվող ծառայությունների ուղղությամբ նկատելի գործնական քայլեր,
10) Արտաքին կապերի հաստատման և միջազգայնացման ձգտում,
11) Որակի ապահովման քաղաքականության և հաստատված ընթացակարգերի առկայություն:

Հաստատության թույլ կողմերն են.

1) Ռազմավարական պլանից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման բացակայություն,
2) Կառավարման բարձրաղիր մարմինների գործառույթների փոխծածկում,
3) Դասավանդման և գնահատման մոտեցումների և մեթոդների՝ կրթական ծրագրերի վերջնարդյունքների հետ թույլ համապատասխանեցվածություն,
4) Գիտական աստիճան կամ կոչում ունեցող դասախոսների ոչ բավարար քանակ,
5) Հետազոտական ոլորտում անորոշ հավակնություններ և հետաքրքրություններ,
6) Հետազոտական աշխատանքներում ուսանողների և դասախոսների թույլ ներգրավվածություն,
7) Այլ բուհերի հետ համագործակցության շրջանակներում բուն հետազոտական բաղադրիչի պակաս,
8) Ֆինանսական միջոցների սակավություն և ֆինանսական պլանավորման բացակայություն ըստ ռազմավարական նպատակների,
9) Միջազգային համագործակցության սահմանված ուղղությունների կամ գերակայությունների և ընդհանուր քաղաքականության բացակայություն,
10) Որակի ապահովման համակարգի փոքրաթիվ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ:

Փորձագիտական խմբի առաջարկությունները.

Առաքելությունը և նպատակները

1) Սահմանել այնպիսի տեսլական, որն արտացոլի համալսարանի զարգացման հիմնական ուղղությունները և լինի կողմնորոշիչ համալսարանում իրականացվող բարեփոխումների համար:
2) Վերամշակել ԵՄՀ Որակավորումների շրջանակը, վերանայել և հստակեցնել բուհի առաքելությունը, լրամշակել գործողությունների ծրագիրը: Հիմնավոր սահմանել կողմնորոշիչ ցուցիչների թիրախային արժեքները: Լրամշակել Համալսարանի ռազմավարական նպատակների իրականացման արդյունավետության գնահատման մեխանիզմները, ռազմավարական ցուցանիշները:
3) Ռազմավարական ծրագրի մշակման, քննարկման և հաստատման գործընթացներում ապահովել շահակիցների առավել լայն շրջանակի մասնակցություն (բացի

Կառավարման խորհրդում ընդգրկված կազմից՝ այլ հնարավոր գործատուներ, շրջանավարտներ, հասարակական կազմակերպություններ և այլն): Հստակեցնել և վերանայել ռազմավարական պլանավորման և վերանայման սխեման, նկարագրել ավելի մասնամասն՝ ներառելով պատասխանատուներին և հաշվետվողականության մեխանիզմներ:

4) Ապահովել Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնի, Որակի ապահովման կենտրոնի, հասարակայնության հետ կապերի և գովազդի բաժնի, ինչպես նաև բոլոր ամբիոնների սերտ կապն արտաքին շահակիցների հետ՝ նպաստելով նրանց կարիքների հաշվառմանը և մասնակցությանը նպատակների ձևավորմանը:

Կառավարումն ու վարչարարությունը

5) Հստակեցնել հիմնադիրների խորհրդի և կառավարման խորհրդի գործառույթները՝ ընդլայնելով վերջինիս լիազորությունները՝ գիտակրթական հաստատություններին հատուկ ինքնավարության ապահովմամբ,
6) ԵՄՀ բյուջեն կապակցել ռազմավարական նպատակներին՝ ռազմավարական պլանի իրագործման ձախողումից խուսափելու համար,
7) Կատարել հետազոտություն և վերլուծություն կառավարման համակարգի արդյունավետության և համապատասխան բարեփոխումների անհրաժեշտության վերաբերյալ,
8) Կանոնակարգել կառավարման մարմիններին և ստորաբաժանումներին դիմելու հնարավորությունը (ընդունելության ժամեր, արձագանքման ժամկետներ և այլն),
9) Հստակեցնել ներքին շահակիցների ներգրավման գործընթացների արդյունավետության գնահատման և բարելավման փուլերի մեխանիզմները,
10) Անցում կատարել պլանավորման բազմամակարդակ մոտեցմանը՝ մշակելով տարաժամկետ ծրագրեր,
11) Բացի պարբերական համալիր վերլուծությունների իրականացումից՝ մշակել և ներդնել առավել կարևոր գործոնների մշտադիտարկման կառուցակարգեր: Վերանայել համալսարանի վրա ազդող գործոնների ուսումնասիրության և վերլուծության հաճախականությունը,
12) Վարչարարության որակի կառավարման հետագա լավարկման նպատակով մշակել և կիրառել գնահատման չափելի ցուցանիշներ, որոնք կարտացոլեն հենց վարչարարության որակը,
13) Ներդնել հաշվետվողականության մեխանիզմներ բոլոր մակարդակներում,
14) Նախատեսել համալսարանում իրականացվող գործընթացների համեմատական վերլուծության պարբերական անցկացում՝ ուղղված դրանց իրական արդյունավետության գնահատմանը և բարելավմանը:
15) Մշակել շահակիցների տեղեկացվածության գնահատման կառուցակարգեր: Հասանելի դարձնել տեղեկատվությունը ոչ միայն կրթական ծրագրերի բովանդակության, այլև դրանց որակի մասին;

Մասնագիտության կրթական ծրագրերը

16) Հստակեցնել ՄԿԾ-ների վերջնարդյունքները և ապահովել դասավանդվող առարկաների կապն այդ վերջնարդյունքների հետ,
17) ՄԿԾ-ներում մանրամասնել գնահատման, դասավանդման և ուսումնառության մեթոդները և հիմնավորել դրանց համապատասխանությունը,

18) Հիմնավորել գնահատման բաղադրիչների տեսակարար կշիռները: Գնահատման համակարգը և չափանիշները համահունչ դարձնել ՄԿԾ-ների վերջնարդյունքներին,
19) Մշակել ՄԿԾ-ների պարբերական վերանայման հիմնավոր ընթացակարգ բենչմարքինգի իրականացմամբ, իրականացնել համագործակից համալսարանների կարծիքների վերհանում կամ համատեղ հետազոտություն բուհի ՄԿԾ-ների բովանդակային համահունչության վերաբերյալ,
20) Սահմանել ՄՈԳ-ի հաշվարկման սկզբունքներ:

Ուսանողները

21) Վերլուծել համալսարանի դիմորդների կազմը և ընդունելության խթանմանն ուղղված գործողություններն առավելապես ուղղել հենց այդ՝ պոտենցիալ դիմորդներին: Կատարել բուհի ընդունելության և հավաքագրման մեխանիզմների որակական ուսումնասիրություններ՝ գնահատելու կիրառվող քաղաքականության արդյունավետությունը,
22) Վերանայել ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթացների կանոնակարգումը՝ հստակ ժամանակցույցի, հավաստիության գործիքների մշակմամբ և որոշումների կայացման վրա ազդեցության մեխանիզմների ամրագրմամբ: Իրականացնել ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ,
23) Սահմանել վարչական անձնակազմին ուսանողների դիմելու կանոնակարգ ու ժամանակացույց, մշակել ուսանողների գրավոր և բանավոր դիմումների ընդունման, քննարկման և դրանց պատասխանների տրամադրման հստակ ընթացակարգ: Նաև մշակել մեխանիզմներ այդ գործընթացների գնահատման համար, կատարել վերլուծություն՝ դուրս բերելու համար բուհի համապատասխան քաղաքականության արդյունավետությունը:
24) Մշակել ուսանողների՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու հստակ կառուցակարգ: Մշակել խրախուսման մեխանիզմներ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների համար: Ձևավորել ՈւԳԸ,
25) Վերհանել և վերլուծել տեղեկացվածության և բավարարվածության ցածր աստիճան ունեցող ուսանողների կարիքները և դրանց համապատասխան մշակել բարելավման ծրագիր,
26) Մշակել Ուսանողների իրավունքների պաշտպանի գործունեության հաշվետվության կառուցակարգ, որով հնարավոր կլինի արձանագրել և փաստել պաշտպանի գործունեության արդյունքները,
27) Մշակել և կիրառել բուհի կողմից հասարակությանը մատուցած ծառայությունների որակի գնահատման այլընտրանքային մոտեցումներ, որոնք կամ կհաստատեն, կամ կճշգրտեն հարցումների արդյունքները,
28) Ուսանողների կարիերային նպաստելու և նաև մատուցվող կրթական ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով՝ ձևավորել շրջանավարտներին միավորող կառույց:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

29) Սահմանելով կրթական ծրագրի պահանջներին համապատասխան դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական հստակ որակներ՝ իրականացնել գործող պահանջների վերանայում,

30) Մշակել դասախոսական կազմի վերապատրաստման արդյունավետության գնահատման կառուցակարգ՝ պարզելու, թե որքանով է այն նպաստում դասավանդմանը և ուսումնառությանը,
31) Մշակել վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության գնահատման, խրախուսման և առաջընթացի ապահովման կառուցակարգ,
32) Մշակել վարչական և ուսումնաօժանդակ կազմի ատեստավորման մասնագիտական չափանիշեր և կատարելագործման մեխանիզմներ,
33) Ուսումնասիրել արհմիության ստեղծման անհրաժեշտությունը:

Հետազոտությունը և զարգացումը

34) Մշակել համալսարանում գիտահետազոտական գործունեության կազմակերպման առանձին ռազմավարություն,
35) Ակտիվացնել կիրառական բնույթի հետազոտական ծրագրերի իրականացումը՝ դրանք դիտարկելով ոչ թե որպես ծախսային, այլ եկամուտ բերող գործունեություն: Այս տեսակետից մշակել հետազոտական ծրագրերի կատարման արդյունավետության գնահատման կառուցակարգեր՝ միաժամանակ գնահատելով հետազոտական կոմպետենցիաների ձևավորումը սովորողների մեջ,
36) Առավել մեծ ուշադրություն դարձնել համատեղ հետազոտական ծրագրերի մշակմանը և իրականացմանը,
37) Վերանայել համալսարանում գիտահետազոտական աշխատանքների համար պատասխանատվության բաշխումը՝ դիտարկելով նոր օղակների ձևավորման հնարավորությունը:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

38) Մշակել դասավանդող կազմի՝ ռեսուրսներով բավարարվածության ուսումնասիրման մեխանիզմներ,
39) Ռազմավարական ծրագրին կից իրականացնել ֆինանսական պլանավորում՝ ըստ ռազմավարական ուղղությունների և նախատեսվող միջոցառումների՝ կանխատեսելով նաև ֆինանսական մուտքերը,
40) Մշակել ֆինանսական միջոցների բաշխման առաջնահերթությունների որոշման կառուցակարգեր,
41) Իրականացնել վերլուծություն, որով հնարավոր լինի հիմնավորել բուհի ռեսուրսային բազայի համապատասխանությունը ՄԿԾ-ների և ռազմավարական ծրագրի իրականացման պահանջներին:

Հասարակական պատասխանատվությունը

42) Հստակեցնել և կանոնակարգել ստորին ղեկավար կազմի և աշխատակազմի հաշվետվողականության մեխանիզմները,
43) Իրականացնել հրապարակայնության ապահովման մեխանիզմների արդյունավետության գնահատման համար հասարակության այլ շերտերի (ոչ թե միայն ուսանողների) կարիքների ուսումնասիրություն,
44) Մշակել հետադարձ կապի խթանման կառուցակարգեր, հատկապես՝ գործատուների կողմից,
45) Մշակել եղանակներ՝ գնահատելու հասարակության հետ կապերի ձևավորման ուղղությամբ բուհի կիրառած մեխանիզմների արդյունավետությունը և ձեռքբերումները:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

46) ԵՄՀ-ի միջազգայնացմանը նպաստելու նպատակով մշակել միջազգայնացման հայեցակարգ կամ քաղաքականություն, որից կբխեն միջազգայացման հետ առնչվող կառուցվածքային ստորաբաժանումների կոնկրետ աշխատանքային պլանները՝ դրանցում նշված կարճաժամկետ ու երկարաժամկետ գործողություններով ու վերջիններիս մոնիթորինգի ու գնահատման մեթոդաբանությամբ:
47) Առավել մեծ ուշադրություն դարձնել տեղական հաստատությունների հետ համագործակցությանը, առաջին հերթին՝ հնարավոր գործատուների և գիտակրթական հաստատությունների: Հստակեցնել տեղական կազմակերպությունների հետ կապերի հաստատման քաղաքականությունը:
48) Մշակել արտաքին կապերի նպատակայնությունն ու կրթական գործընթացի հետ դրանց կապը ապահովող և գնահատող կառուցակարգեր:

Որակի ներքին ապահովման համակարգը

49) Իրականացնել որակի ապահովման հաստատված քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության գնահատում: Իրականացնել բուհի որակի ապահովման համակարգի արդյունավետության վերլուծություններ,
50) Որակի ապահովման գործընթացներում ներգրավել դասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներ: Համագործակցել Ուսանողական խորհրդի, ինչպես նաև համալսարանի շրջանավարտների հետ: Ընդլայնել որակի ապահովման գործընթացներին գործատուների մասնակցությունը: Իրականացնել արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրություններ և վերլուծություններ:
51) Իրականացնել վարչական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների ուսումնասիրություններ և վերլուծություններ,
52) Իրականացնել գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման համար կիրառվող մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Միջազգային փորձագետը համոզմունք է հայտնում, որ ընդհանուր զեկույցի այս մասը կօգտագործվի Եվրասիա միջազգային համալսարանի շահակիցների կողմից՝ շարունակական զարգացման համար: Կայուն աճի հնարավոր է հասնել միայն ԵՄՀ-ի շահակիցների համընդհանուր որակի շնորհիվ:

<u>ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ:</u> Իր առաքելության մեջ ԵՄՀ-ն կարող է օգտագործել Օտար լեզուների ամբիոնում առկա Բլումի տաքսոնոմիան՝ ապացուցելու համար, որ համալսարանը կենտրոնանում է կրթության վրա առավել, քան «գիտելիքների»: Սա կօգնի նաև պարզաբանել «հմտությունների» և «կարողությունների» միջև տարբերությունը: Առանձնահատուկ ուշադրության են արժանի այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են՝ «վերաբերմունք», «հմտություններ», «ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ» և այլն: Ցանկալի կլիներ առաքելության մեջ զանազանել կրթական նպատակները և օգտագործվող մեթոդները:

ԵՄՀ-ն իր առաքելության մեջ պետք է պարզաբանի, թե ինչու է ուշադրությունը կենտրոնացնում «կիրառական» հետազոտությունների վրա: Սույնի վերաբերյալ առավել մանրամասն, տե՛ս 6-րդ կետում:

Օգտագործելով Մարքեթինգի և Օտար լեզուների բաժիններում առկա հմտությունները՝ ԵՄՀ-ն կարող է ներդնել տարեկան հաղորդակցման յուրօրինակ համակարգ, որի միջոցով առաքելությունը հասանելի կլինի արտաքին և ներքին շահակիցներին:

Իր տարեկան զեկույցում ռեկտորը պետք է ընդգծի, թե որն է առաքելության նպատակը, ինչպես է այն վերանայվելու, ինչ ձեռքբերումներ են գրանցվել նախորդ տարում և որոնք են լինելու գալիք տարվա առաջնահերթությունները և ինչու:

<u>ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ:</u> ԵՄՀ-ն պետք է վերլուծի, թե ինչպիսի ազդեցություն են ունենում չափազանց փոքր խմբերը ուսուցման և դասավանդման պայմանների, ինչպես նաև ֆինանսական միջոցների վրա: ԵՄՀ-ն պետք է յուրաքանչյուր կուրսի/խմբի համար սահմանի ուսանողների մինիմալ թվաքանակ:

ԵՄՀ-ն պետք է լուծումներ առաջադրի այն դեպքերի համար, երբ առանցքային պաշտոնները երկար ժամանակահատվածով թափուր են մնում: Ռազմավարական պլանավորման (պրոռեկտոր) և Որակի ապահովման պատասխանատուների պաշտոնները հենց նման առանցքային հաստիքներ են:

Համացանցային հաղորդակցությունը և ուսանողների կողմից իրականացվող կամավորական աշխատանքը գործող լուծում չեն: Նմանօրինակ դեպքերում ԵՄՀ-ն որակյալ անձնակազմով ժամանակավոր փոխարինման կարիք ունի:

<u>ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ:</u> ՄԿԾ-ների համար պատասխանատու ամբիոնները կարող են ընդհանուր հայտարարի գալ ծրագրերում և դասընթացներում հիմնական փոփոխությունների ժամանակացույցի վերաբերյալ՝ հիմք ունենալով ՊԻԳԲ շրջափուլը, որտեղ բավարար ժամանակահատված է հատկացվում նորամուծությունների ներդրման համար:

Ռեկտորը և ՄԿԾ-ների համար պատասխանատու պրոռեկտորը պետք է պրոֆեսորադասախոսական անձնակազմին տեղեկացնեն, որ ուսանողակենտրոն մոտեցումն ավելին է, քան լոկ դասավանդման ակտիվ մեթոդների կիրառությունը: Ուսանողակենտրոն մոտեցումը պետք է հատկապես կենտրոնանա ուսանողների կրթական կարիքները բավարարելու վրա (ծրագիրը պետք է հաշվի առնի ուսանողների ձեռք բերած հմտությունները և մասնագիտական սպասելիքները):

ԵՄՀ-ն պետք է որոշում կայացնի Կառավարում մասնագիտության շրջանակներում առաջարկվող մասնագիտացումների վերաբերյալ. առաջարկվող մասնագիտացումները պետք է իրականացվեն:

Վերոգրյալից զատ՝ փորձագետը նկատեց, որ Կառավարում բաժինը գնում է ընդհանրացման: Սա, թերևս, պայմանավորված է Հայաստանի իրականությանը բնորոշ տնտեսական յուրօրինակ առաջնություններով: Հայ հասարակությունը չի խրախուսում պրոֆեսիոնալիզմը փոքր և միջին ձեռնարկություններում: Մի գուցե Կառավարման մասնագիտության շրջանակներում ԵՄՀ-ն պետք է ակտիվացնի այս ոլորտը՝ առաջարկելով երկու առաջնություններ՝ ընդհանրացում կամ մասնագիտացում:

ԵՄՀ-ն, Օտար լեզուների բաժնի աշխատակիցների և մասնագիտական շրջանակների հետ համատեղ, պետք է պարզաբանումներ մտցնի «ոչ-ուսուցիչների» մասնագիտացման ուղղությամբ և կրթական ծրագրերը հարմարեցնի մասնագիտական շրջանակների պահանջներին:

Ինչպես առաջարկվեց ռեկտորի հետ վերջին հանդիպման ժամանակ, գնահատումը կարող է համարվել հմտությունների վրա հիմնված, եթե քննող դասախոսներից յուրաքանչյուրը մատրիցայի վրա կարող է մատնանշել, թե որ հարցը որ հմտության ձևավորմանն է համապատասխանում, և ապացուցի, որ հարցերը ծածկում են դասընթացի նկարագրով նախատեսված բոլոր հմտությունները: Այս դեպքում ՄԿԾ-ի ղեկավարը կկարողանա ներազդել հմտությունների վրա հիմնված գնահատման մակարդակի վրա՝ վերլուծելով մատրիցան:

ՄԿԾ-ների համար պատասխանատու պրոոեկտորը կարող է օպտիմալացնել թեզերի գնահատմանը ներկայացվող չափանիշները տարբեր մասնագիտությունների համար: Արտաքին/ներքին գնահատողները թեզերի գնահատումն իրականացնելու համար որոշակի ձևաչափերի կարիք ունեն՝ համոզված լինելու, որ գնահատումը հիմնված է հմտությունների վրա (ուսուցման ակնկալվող վերջնարդյունքներ):

Համալսարանի դասախոսներն այնպիսի տպավորություն ստեղծեցին, որ կրթական չափորոշիչները գրվում են առանց համալսարանական շրջանակների հետ խորհրդակցության: Համալսարանի ավելի ակտիվ դիրքորոշումը չափազանց ցանկալի է:

Ընդհանուր առամամբ ընդունված է կարծել, որ բակալավրի ուսանողները ավելի պատրաստ պետք է լինեն պրակտիկ աշխատանքների, մինչդեռ մագիստրոսները՝ հետազոտություն իրականացնելուն: Այնուամենայնիվ, ԵՄՀ-ի շահակիցները կարծես թե հակառակ կարծիքին են: Նրանք գնահատում են մագիստրատուրայի ուսանողների պրակտիկ հմտությունները:

Խնդիրը, թվում է, իրավագիտության գծով մագիստրատուրայի հասարակական գնահատականի մեջ է: Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանը, կարծես թե, ոչ մի առավելություն չի տալիս առաջին աստիճանի հետ համեմատ՝ բացառությամբ մի քանի իրավական գործառույթների և որպես անկախ մասնագետ կայանալու հնարավորությունների:

<u>ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ:</u> Ուսանողների ներկայիս թվաքանակի հետ կապված հնարավոր երկու սցենար կա.

- կամ ԵՄՀ-ն այս բացասական էվոլյուցիան կհաղթահարի մոտ ապագայում,
- կամ ԵՄՀ-ն պետք է խորհի այլ համալսարանների հետ համագործակցության շուրջ՝ համատեղ ծրագրերի իրականացման կամ ուսանողների ներգրավման այլ ուղղություններով:

ԵՄՀ-ն պատասխանատու է օբյեկտիվ կերպով իրականացվելիք բենչմարքինգի և Հայաստանում տիրող իրավիճակին համապատասխան ուսանողների թվաքանակի գնահատման համար:

<u>ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ:</u> ԵՄՀ-ն պետք է ուղիներ գտնի դասախոսական պաշտոններին արժեքավոր թեկնածուներ ընդունելու համար:

Ներկայիս համակարգը, որի շրջանակներում ԵՄՀ-ն ավելի շատ է վարձատրում նորեկներին, քան հիմնական անձնակազմին, բողոքի մեծ ալիք կարող է բարձրացնել:

«ԵՄՀ-ի լավագույն դասախոս» անվանակարգի սահմանումը արհեստական է, որն Արևմտյան Եվրոպայի երկրներում ոչ մի հավելյալ արժեք չի բերում պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ որպես թիմ: Սա, ըստ մեզ, հիշեցնում է Ստախանովին: Մեր կարծիքով, այս տեխնիկայի օգտագործումը կարող է երկու հետևանքների հանգեցնել.

- լավագույնի ընտրությունը կարող է հիմնված լինել դասախոսի ժողովրդականության, այլ ոչ թե հմտությունների վրա,
- շատ քիչ դասախոսներ մոտիվացված կլինեն իրենց հմտությունները թարմացնել/խորացնել, անվանակարգում չհաղթելու պարագայում:

ԵՄՀ-ն պետք է արդյունավետ նվազագույն շեմ սահմանի ուսանող/դասախոս թվաքանակների հարաբերակցության, ինչպես նաև յուրաքանչյուր խմբում/կուրսում ուսանողների նվազագույն թույլատրելի թվաքանակի համար:

<u>ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ:</u> Հետազոտությունն ու զարգացումը, կարծես, ԵՄՀ-ի թույլ կողմն է: Այս թույլ կողմը հաղթահարելու համար ԵՄՀ-ը կարող է ձեռնարկել հետևյալ քայլերը.

1. Ավելի ցանկալի է հետազոտության ու զարգացման քաղաքականության իրականացման վերջնական պատասխանատվությունը դնել պրոոեկտորի ուսերին,

ով միայն այս ոլորտը կվերահսկի: Աշխատանքային ժամանակահատվածի 50%-ը կարծես թե բավարար է:

2. Յուրաքանչյուր բաժնում հետազոտությունն ու զարգացումը (Հ&Զ) հավելյալ աշխատուժի կարիք ունի: Աշխատանքային ժամանակահատվածի 20%-ը բավարար է:
3. Վերոգրյալ երեք բաժիններից հավաքագրված երեք անձիք, Հ&Զ պրոռեկտորի հետ մեկտեղ, կկազմեն Հ&Զ Խորհուրդի միջուկը: Այս Խորհուրդը կտարբերվի Գիտական խորհուրդից: Նախընտրելի կլիներ Գիտական խորհուրդը վերանվանել Ուսումնական խորհուրդ: Նմանօրինակ քայլով կհստակեցվի այն, որ Ուսումնական խորհուրդը պատասխանատու է ՄԿԾ-ների իրականացման համար, իսկ Հ&Զ խորհուրդը՝ հետազոտությունների:
4. Հ&Զ խորհրուրդը բաղկացած կլինի մասնագիտական ոլորտի 3 ներկայացուցիչներից, որոնք գործունեություն են ծավալում Հայաստանում և փորձառություն ունեն հետազոտության ոլորտում:
5. Հ&Զ խորհուրդը բաղկացած կլինի 2 մագիստրոսից և բակալավրի 3-րդ և 4-րդ կուրսի Օտար լեզուների բաժնի ուսանողներից:

Հ&Զ Խորհուրդից բացի ռեկտորը կարող է դասընթացի յուրաքանչյուր պատասխանատուից խնդրել ցուցակ՝ հետևյալ բովանդակությամբ.

1. դասընթացի ընթացքում ուսանողների հետ քննարկվող պատմական հետազոտական գրականություն,
2. դասընթացի ընթացքում ուսանողների հետ քննարկվող արդի (վերջին 10 տարիների ընթացքում) հետազոտական գրականություն,
3. հետազոտական հետաքրքրությունների թեմաներ, որոնք կարող են ուսանողների և դասախոսների կողմից ընտրվել մոտ ապագայում:

ԵՄՀ-ը կարող է հետազոտության ոլորտում մի քանի առաջնային ուղղություններ սահմանել:

Այս ուղղությունները կարող են սահմանվել հիմք ընդունելով ԵՄՀ-ի առաքելությունը, հասարակության կարիքները, դասախոսների և ուսանողների ներկայիս հմտությունները և մոտիվացիան, հետազոտության ստացված արդյունքները վերջնականացնելու ու հասարակության մեջ ներդնելու հնարավորությունները:

Շատ հաճախ մագիստրոսական թեզերի գնահատումը վավեր չէ, երբ խոսքը վերաբերում է ֆորմալ և ոչ-ֆորմալ ցուցումներին: Երկու գնահատողները պետք է կարողանան իրենց վերջնական արդյունքներն ապացուցել՝ հիմնվելով ցուցիչների վրա: Նմանօրինակ դեպքերում ձևաչափերը կարող են օգտակար լինել: Թեզերի գնահատման հիմնական շեշադրումը պետք է լինի այն, թե արդյոք ուսանողը ձեռք է բերել համապատասխան հմտությունները (ակնկալվող վերջնարդյունքները), որոնք ներդրված էին բակալավրական/մագիստրոսական թեզեր գրելու հիմքում: Երկու գնահատողների փատացի զեկույցները շատ ընդհանրական են և վերջնական գնահատականի համար բավարար հիմքեր չեն ապահովում:

<u>ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ:</u> SS տարրերի առկայությունը գնահատելի է (2 լսարան, 2 սմարթ գրատախտակ, որոնք ունեն նաև պրոյեկտման հնարավորություն, էլեկտրոնային գրադարան, WiFi, MOODLE…):

Թերևս կարելի է նշել, որ լսարանները չափազանց «խիստ/պաշտոնական» տեսք ունեն: Մի գուցե ամբիոններին կարելի է խնդրել դրանք ավելի հարմարավետ դարձնել, ստեղծել մոդելավորման/սիմուլյացիայի լսարաններ Կառավարման (օր.՝ մինի-ձեռնարկության տեսքով) և Օտար լեզուների (օր.՝ Լեզվի լաբորատորիայի տեսքով) բաժինների համար:

Միջազգային փորձագետն անհանգստացած է ենթակառուցվածքներին հատկացվող բյուջեի կրճատմամբ. 3 տարվա ընթացքում 20%-ի կրճատում, որն ուղիղ համեմատական է ուսանողների թվաքանակի նվազմանը:

Փորձագետը հույս է հայտնում, որ հաշվապահը ռեկտորին և Խորհուրդին բացեիբաց կտեղեկացնի սույն զարգացման հետ կապված ռիսկերի մասին, որպեսզի ձեռք առնվեն անհրաժեշտ միջոցառումներ անձնակազմին և դասախոսների պաշտպանելու ուղղությամբ:

<u>ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ:</u> Համալսարանի տարեկան հաշվետվությունը պետք է ավելի ամբողջական, ավելի կոնկրետ և գրավիչ լինի ու պետք է ներկայացվի և հրատարակվի նաև հայկական լրատվամիջոցներում:

ԵՄՀ-ն կարող է ներկայացվել որպես օրինակելի կառույց՝ պատասխանատու քաղաքացիներ կրթելու գործընթացում: Ներկայիս աշխարհում, որտեղ էգոցենտրիզմը թվում է հաջողության հասնելու համընդհանուր ստանդարտ, կամավորական աշխատանքները գլոբալիզացված հասարակությանը մարդկային թթվածին են սնուցում: Միջազգային փորձագետը շոյված է այս մոտեցմամբ և ուսանողների, անձնակազմի ու հասարակության վրա դրա ազդեցությամբ:

<u>ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ:</u> ԵՄՀ-ը կարող է համալսարանի բոլոր աշխատակիցների և ուսանողների օտար լեզվով հաղորդակցվելու կարողությունների զարգացման հնարավորություններով տվյալների բազա հիմնել:

Քանզի ինքնավերլուծությունում ներկայացվող միջազգայնացման ցուցանիշները վստահելի չեն՝ ԵՄՀ-ի մտադրությունը կրկնապատկել միջազգայնացումը, դժվար է ՊԻԳԲ շրջափուլում ներկայացնել:

Հնարավոր չափանիշներից մեկը կարող է լինել 20/20/20-ը՝ 2020թ. 20% ուսանողների և 20% դասախոսների մասնակցություն:

ԵՄՀ-ը պետք է տվյալներ հավաքագրի և միջազգայնացման ուղղությամբ նպատակներ սահմանի:

<u>ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ:</u> Եթե Որակի ապահովումը ԵՄՀ-ի համար առաջնայնություն է, վերջինս պետք է Ռազմավարական պլանավորման համար պատասխանատու պրոռեկտորին և Որակի ապահովման կենտրոնի ղեկավարին փոխարինող գտնի իրենց բացակայության ընթացքում, որպեսզի համոզված լինի, որ Որակի ապահովման կենտրոնի գործընթացներն անխափան են իրականացվում:

Համալսարանական մասնագիտական շրջանակների որոշ ներկայացուցիչներ կարծես թե առաջ էին մղում ISO համակարգը: Կարծում եմ, որակի ապահովման այլ համակարգեր կան, որոնք ավելի համապատասխան են համալսարանական շրջանակներում: Չնայած այն հանգամանքին, որ ISO-ն կարող է օգտակար լինել վարչական և տեխնիկական աշխատանքների համար:

Փորձագետն առաջարկում է ուսանողական խորհրդին տեղեկացնել ուսանողների հարցման արդյունքների մասին, ինչպես նաև այն միջոցառումների մասին, որոնք իրականացվում են այս կամ այն թույլ կողմը հաղթահարելու համար:

Միգուցե ԵՄՀ-ը պետք է որոշակի ընթացակարգ սահմանի, որպեսզի կարողանա օգնության ձեռք մեկնել այն դասախոսներին, որոնք ցանկանում են սոցկայքերից պրոֆեսիոնալ կերպով օգտվել:

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրությունը

28.07.2015թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ԵՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Տիգրան Մնացականյան**, տնտեսագ. թեկնածու, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Կառավարման ամբիոն, խմբի ղեկավար,
2. **Ռոմեին Հուլպիա**, փիլիս. և մանկավ.գիտ.դոկտոր, Որակի ապահովման բելգիական VLHORA և VLHUR, ինչպես նաև նիդեռլանդական NVAO կազմակերպությունների փորձագետ, Բելգիա, անդամ,
3. **Մկրտիչ Ավագյան**, փիլ.գիտ.թեկնածու, դոցենտ, Խ.Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան, Կրթական բարեփոխումների և որակի վարչության պետ, անդամ,
4. **Գագիկ Քթրյան**, ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, բաժանմունքի պետ, Ա.Խանփերյանցի անվ. ռազմական ավիացիոն ինստիտուտ, Ուսումնամեթոդական բաժնի Որակի ապահովման և վերլուծության բաժանմունք, Հայաստան, անդամ,
5. **Աստղիկ Պետրոսյան,** մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող, Խ.Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան, Կրթության կառավարման մասնագիտություն, անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է համալսարանի հետ:
Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է Անուշավան Մակարյանը:
Թարգմանությունը կատարել է Զարուհի Սողոմոնյանը:
Արձանագրությունները կազմել են Սրբուհի Ջանջուղազյանը և Անի Եխտարյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և քարտուղարությունը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

ԵՄՀ-ը դիմել է ինստիտուցիոնալ հավատարմագրման համար 2014թ. հոկտեմբերի 8-ին՝ ՈԱԱԿ-ին ներկայացնելով դիմումը, լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունը ստուգել է դիմումի փաթեթի համապատասխանությունը ՈԱԱԿ-ի պահանջներին՝ դիմումում լրացված տվյալները, կից փաստաթղթերը և համալսարանի կողմից լրացված ՈԱԱԿ էլեկտրոնային հարցաշարը:

2014թ. նոյեմբերի 10-ին ԲՈՒՀ-ի դիմումն ընդունելու մասին որոշման հիման վրա ստորագրվել է պայմանագիր ՈԱԱԿ-ի և ԵՄՀ-ի միջև:

Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործողությունների ժամանակացույցը:

Նախապատրաստական փուլ

ԵՄՀ-ն ինքնավերլուծությունը սկսել է իրականացրել 2013թ. «Որակի ներքին ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրա հետագա բարելավման» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Վերանայված ինքնավերլուծությունը և հավելվածների փաթեթը ներկայացվել են ՈԱԱԿ 2014թ. դեկտեմբերի 29-ին: ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է ինքնավերլուծությունը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Ինքնավերլուծության զեկույցի անգլերեն և հայերեն տարբերակները և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը ՈԱԱԿ-ի կողմից ընդունվել են 2015թ. հունվարի 30-ին՝ հավատարմագրման գործընթացի համակարգողի դրական կարծիքը ստանալուց հետո:

2015թ. փետրվարի 23-ին ինքնավերլուծության զեկույցը նախնական գնահատման համար տրամադրվել է փորձագիտական խմբին, որի կազմը հաստատվել է ՈԱԱԿ տնօրենի հրամանով 2015թ. փետրվարի 24-ին: Գնահատումն իրականացվել է 2015թ. փետրվարի 24-ից մինչև 2015թ. ապրիլի 29-ն ընկած ժամանակահատվածում: Այդ ժամանակամիջոցում փորձագիտական խումբը անցել է թվով 5 վերապատրաստումների փուլ, շաբաթը մեկ անգամ պարբերական հանդիպումներ է ունեցել՝ քննարկելու բուհի ինքնավերլուծությունը և կից հավելվածների փաթեթը: Արտասահմանցի փորձագետի կողմից վերհանված խնդիրները խմբի ղեկավարի կողմից ներառվել են միասնական նախնական գնահատման հաշվետվության տեքստում: Արդյունքում դուրս են բերվել այցի ժամանակ պարզաբանման ենթակա խնդիրները և որոշվել են հանդիպումների թիրախային խմբերը:

Գործընթացի համակարգողը, խմբավորված ուսումնասիրման ենթակա խնդիրների և հարցերի հիման վրա, փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել է փորձագիտական այցի ժամանակացույցը: Ժամանակացույցում ներառվել են հանդիպումներ փորձագետների կողմից նախատեսվող բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և ռեսուրսների դիտարկումներ, այցելություններ բուհի կառուցվածքային ստորաբաժանումներ և այլն:

Բուհի ինքնավերլուծությունը

Ընդհանուր առմամբ, քննադատական մոտեցմամբ ներկայացված ինքնավերլուծության զեկույցը փորձագիտական խումբը համարեց օգտակար փաստաթուղթ՝ ԵՄՀ-ի մասին տեղեկատվություն ձեռք բերելու և բուհի հետ քննարկումներ կազմակերպելու համար: Այնուհետև, զեկույցի որոշ հատվածներ բավականաչափ հստակ չէին, և հանդիպումների ընթացքում լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտություն ունեին: Ինքնավերլուծության հավելվածներում ներկայացված մեծ քանակությամբ կանոնակարգող փաստաթղթեր թվագրված էին 2014թ. դեկտեմբեր ամսով, որից հետևում էր, որ դրանք պատրաստվել են ինքնավերլուծության հիմքերն ապահովելու նպատակով:

Նախնական այց

2015թ. ապրիլի 30-ին համակարգողը փորձագիտական խմբի ղեկավարի հետ այցելել են համալսարան՝ վերջնականացնելու այցի ժամանակացույցը[3]:

Դիտարկվել են խմբին տրամադրվող սենյակը, հանդիպումների դահլիճը և տեխնիկական միջոցները: Համալսարանին ներկայացվել են ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկը, ստորաբաժանումներն, ուր ցանկանում են այցելել փորձագետները:

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 2: ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Այցի ընթացքում քննարկվել են նաև այլ կազմակերպչական և տեխնիկական ապահովվածության հարցեր:

Փորձագիտական այց

Ժամանակացույցով նախատեսված այցին նախորդող օրը փորձագիտական խմբի բոլոր անդամները հավաքվել են ՈԱԱԿ-ում: Հանդիպման ընթացքում փորձագիտական խումբն իր նախնական տպավորություններն է փոխանակել զեկույցի վերաբերյալ, քննարկել և վերջնականացրել դուրս բերված հիմնական հարցերի/խնդիրների ցանկը, որոշել յուրաքանչյուր չափանիշին վերաբերող հարցերի պարզաբանման պատասխանատուին, ինչպես նաև քննարկել հանդիպումները՝ ըստ առանձին թիրախային խմբերի:

Այնուհետև փորձագիտական խմբի անդամները քննարկել են գնահատման սանդղակը, որը ներառում է երկու մակարդակ՝ 1) **բավարարում/համապատասխանում է** չափանիշի պահանջներին, 2) **չի բավարարում/համապատասխանում** չափանիշի պահանջներին:

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2015թ. մայիսի 11-14-ն ընկած ժամանակահատվածում:

Այցը մեկնարկել և ավարտվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպումներով: Հանդիպումներ են տեղի ունեցել ամբիոնի վարիչների, ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբի, պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմերի, շրջանավարտների, գործատուների ներկայացուցիչների հետ: Փորձագիտական խումբը հանդիպման մասնակիցներին ընտրել է պատահականության սկզբունքով: Ժամանակացույցով նախատեսված բաց հանդիպմանը համալսարանի ոչ մի աշխատակից չի ներկայացել:

Բացի տարբեր թիրախային խմբերի հետ հանդիպումներից, այցի ընթացում փորձագիտական խումբը կատարել է փաստաթղթերի ուսումնասիրություն[4] և ռեսուրսների դիտարկում[5]:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում հանդիպման մասնակիցների բաց քննարկումները:

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության նախ հավատարմագրման չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի եղանակը:

Փորձագիտական զեկույց

Այցից հետո փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը պատրաստել են հավատարմագրման զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի բոլոր անդամներն իրենց ներդրումն են ունեցել զեկույցի յուրաքանչյուր չափորոշչի փաստերի, դատողությունների և գնահատականի վերաբերյալ, ինչպես նաև արձագանքել են

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ
[5] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ամբողջական տարբերակին: Փորձագետների մեկնաբանությունները հաշվի են առնվել զեկույցի նախնական տարբերակի ամփոփման ժամանակ:

Միջազգային փորձագետը պատրաստել է իր եզրակացությունը և գործընկերային գնահատման առանձին կարծիք: Երկու փաստաթղթերն էլ թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբի ղեկավարին: Միջազգային փորձագետի կարծիքի և մոտեցումների զեկույցում ներառելու պատասխանատվությունը դրվել է խմբի ղեկավարի և համակարգողի վրա: Գործընկերային գնահատման կարծիքը ամբողջությամբ է ներառվել զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի տեղացի բոլոր անդամների կողմից հավանության արժանացած ամբողջականացված նախնական զեկույցը թարգմանվել և ուղարկվել է միջազգային փորձագետին: Նրա դիտողությունների հիման վրա նախնական զեկույցը վերախմբագրվել է, և ներկայացնում է գնահատման հիմնական արդյունքները, դատողությունները և խորհրդատվությունը:

Նախնական զեկույցը ներկայացվել է համալսարան 2015թ. հուլիսի 3-ին:

Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանություններն ԵՄՀ-ն ուղարկել է ՈԱԱԿ 17.07.2015թ.: Բուհը իր դիտողություններն ու մեկնաբանությունները ներկայացրել է հայերեն և անգլերեն լեզուներով, որոնք տրամադրվել են տեղացի և միջազգային փորձագետներին, համապատասխանաբար: Միջազգային փորձագետի պատասխանը թարգմանվել և տրամադրվել է փորձագիտական խմբին, և խմբի ղեկավարը այն ներառել է պատասխանի մեջ: 2015թ. հուլիսի 24-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով բուհի դիտողությունները և մեկնաբանությունները՝ փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 28.07.2015թ.: Զեկույցի նախնական տարբերակում խմբի կողմից կատարված փոփոխությունների վերաբերյալ նշումներ են կատարված համապատասխան էջերի տողատակերում:

Համակարգողի ստորագրությունը

28.07.2015թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն: Եվրասիա միջազգային համալսարանը հիմնադրվել է 1996 թ-ին՝ իբրև Երևանի «Մխիթար Գոշ» միջազգային համալսարան: 2002թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության որոշմամբ ստացել է պետական հավատարմագիր, և համալսարանին տրվել է պետական նմուշի դիպլոմ շնորհելու լիազորություն: 2004թ. համալսարանը վերանվանվել է Եվրասիա միջազգային համալսարանի՝ շարունակելով իր նախկին ռազմավարությունը:

Համալսարանն իր առաքելությունն է համարում որակի ապահովման ազգային չափանիշներին համապատասխան ուսուցման կազմակերպումը, հետազոտությունների իրականացումը և որպես այս ամենի արդյունք՝ հանրային ծառայությունների մատուցումը:

Համալսարանում իրականացվում է բակալավրական կրթության կազմակերպում իրավագիտության, կառավարման և օտար լեզուների մասնագիտություններով: 2004 թ.-ից համալսարանը կազմակերպում է նաև մագիստրոսական ուսուցում «Կառավարում» և «Իրավագիտություն» մասնագիտությունների գծով: Նույն թվականին հաստատությունը տեղափոխվել է հիմնադրի սեփականությունը հանդիսացող նոր մասնաշենք: 2005 թ. համալսարանը անցում է կատարել ուսուցման կրեդիտային համակարգի:

2013 թ.-ից համալսարանում գործում է ասպիրանտուրա «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում»(Ը.00.02), «Գերմանական լեզուներ» (ԺԲ.00.02) և «Հանրային իրավունք /սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում/» (Ժ.02.07) մասնագիտությունների գծով:

Ինքնավերլուծության, ռազմավարական ծրագրի և այլ փաստաթղթերի մեջ սահմանված են բազմաթիվ դրույթներ, որոնք արտացոլում են համալսարանի ձգտումներն ու հավակնությունները գործունեության տարբեր ոլորտներում:

Կրթություն: Հիմք ընդունելով Եվրոպական կրթական միասնական տարածքի ստեղծման գործընթացը՝ կրթության ոլորտում համալսարանն իր հիմնական նպատակն է համարում ուսումնառության որակի շարունակական բարելավումը և համապատասխանեցումը որակի ապահովման եվրոպական և ազգային շրջանակներին: Ըստ այդմ՝ Համալսարանը սահմանել է հետևյալ խնդիրները.

- իրականացվող կրթական ծրագրերի արդիականացման, բարելավման, գնահատման, ինչպես նաև նոր կրթական ծրագրերի իրականացման կառուցակարգերի ներդրում,
- ուսումնառության որակի շարունակական բարելավման՝ Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների մասնագիտական և մեթոդական որակավորումների բարձրացմանը նպաստող կառուցակարգերի ներդրում,
- ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին համակարգի ստեղծում՝ համապատասխան քաղաքականության մշակմամբ և մշտադիտարկման իրականացմամբ:

Հետազոտություն: Գիտական ներուժի կայուն զարգացման, հետազոտությունների և նորարարությունների կիրառելիության ապահովման նպատակով համալսարանը

կարևորում է ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացմանը միտված գիտական արդյունքների ստեղծումը, համալսարանում հետազոտական մշակույթի ձևավորումը և արտաքին շահակիցների հետ համագործակցության նոր ոլորտների զարգացումը:

Համալսարանը ձգտում է ապահովել հետազոտական ներուժի և նորարարությունների զարգացումը՝ խթանելով պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեությունը և նպաստելով նրանց նորարարական նախաձեռնություններին: Համալսարանը ձգտում է մեծացնել հետազոտական և նորարարական գործընթացներում նաև ուսանողների ներգրավվածությունը:

Հետազոտական գործունեության արդյունքները նախատեսվում է ներդնել ուսումնական գործընթացներում:

Միջազգայնացում: Միջազգայնացմանն առնչվող հավակնությունները հիմնականում սահմանված են Համալսարանի Ռազմավարական ծրագրի «Միջազգային համագործակցության ընդլայնում» նպատակի շրջանակներում: Նախատեսվում է ավելացնել իրականացվող՝ կրթական և գիտական բնույթի միջազգային համագործակցային ծրագրերի քանակը, ընդլայնել թե ուսանողների և ասպիրանտների, թե պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական աշխատակիցների միջազգային շարժունության հնարավորությունները, ինչպես նաև ապահովել շարժունություն հակառակ ուղղությամբ:

Որակի ապահովում: Համալսարանը ձգտում է ձևավորել որակի մշակույթի տարածմանը նպաստող միջավայր: Այդ նպատակով համալսարանն իր խնդիրն է համարում ռազմավարական ծրագրից բխող միջնաժամկետ և տարեկան ծրագրերի մշակումը, ներդրումը և կատարման մշտադիտարկումը:

Համալսարանը փորձում է ներդնել ներքին գործընթացների իրականացման էլեկտրոնային համակարգ, բարձրացնել բոլոր գործընթացների իրականացման արդյունավետությունը և թափանցիկությունը: Վերջինս նախատեսվում է իրականացնել արտաքին շահակիցներին հաշվետվողականության կառուցակարգերի ներդրման ճանապարհով: Համալսարանը ձգտում է նաև ընդլայնել ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը կառավարման գործընթացներին:

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է «համապատասխանություն նպատակներին» սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունն է դիտարկել որպես բուհի հիմնական հավակնություններ և նպատակներ:

I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1. Համալսարանը փորձում է իր գործունեությունն ու զարգացումն իրականացնել սահմանված առաքելությանը և տեսլականին համապատասխան, ինչպես նաև դրանցից բխող նպատակների և խնդիրների իրագործմամբ: Համալսարանի զարգացմանը վերաբերող

հիմնարար փաստաթուղթը՝ Ռազմավարական ծրագիրը, բխում է համալսարանի առաքելությունից: Համալսարանն իր գործունեությունը պլանավորել է 2014-18թթ. ռազմավարական ծրագրի մշակմամբ, որտեղ նշված են ռազմավարական նպատակներ, այդ թվում՝ ուսումնառության որակի շարունակական բարելավում, գիտական ներուժի կայուն զարգացում, հետազոտությունների և նորարարությունների կիրառելիության ապահովում, միջազգային համագործակցության ընդլայնում, ուսումնառության համար նպաստավոր ենթակառուցվածքների և ֆինանսական անկախության ապահովում, որակի մշակույթի տարածման նպաստավոր միջավայրի ձևավորում: Համալսարանը սահմանել է ռազմավարական խնդիրներ, դրանց լուծման համար անհրաժեշտ միջոցառումներ և գործողությունների ծրագիր: Ռազմավարական ծրագրին կից գործողությունների ծրագրում ներկայացված են պատասխանատու ստորաբաժանումները, վերջնաժամկետները, ինչպես նաև գնահատման համար կատարողականի ցուցիչները:

1.2. Համալսարանն իրականացրել է իր ներքին միջավայրի և գործունեության արտաքին միջավայրի վերլուծություն, ինչպես նաև մի շարք հարցախույզեր, որոնք հաշվի են առնվել ռազմավարական ծրագրի մշակման ժամանակ՝ այդպիսով հաշվառելով շահակիցների կարծիքները և նրանց մասնակից դարձնելով իր ռազմավարական ծրագրի ձևավորմանը: Համալսարանի կառավարման խորհրդի կազմում, որը քննարկում և հաստատում է ռազմավարական ծրագիրը, ընդգրկված են ներքին և արտաքին շահակիցների ներկայացուցիչներ՝ ուսանողներ, դասախոսներ, վարչական աշխատակիցներ, գործատուների ներկայացուցիչներ, հանրային կառավարման մարմինների ներկայացուցիչներ: Արտաքին միջավայրի գնահատման նպատակով իրականացվել է նաև արտաքին անուղղակի ազդեցություն ունեցող գործոնների վերլուծություն՝ PEST գործիքի միջոցով:

1.3. Ռազմավարական նպատակների իրականացման գնահատման համար բուհը պլանավորել և մշակել է գործողությունների ծրագիր, որտեղ նշված են կատարվելիք միջոցառումները, դրանց կատարողները, ակնկալվող արդյունքները, ցուցիչները, ժամկետները և ռիսկային գործոնները: Այդ փաստաթուղթը նպատակ ունի ապահովել ռազմավարական նպատակների իրականացման համար յուրաքանչյուր ստորաբաժանման մասնակցությունը և հիմք հանդիսանալ ծրագրի իրականացման մշտադիտարկման համար: Համալսարանը փորձում է իր նպատակների իրականացման արդյունքները գնահատել՝ ըստ ռազմավարական ծրագրում ընդգրկված գործողությունների ծրագրի կողմնորոշիչ ցուցիչների, ինչպես նաև շահակիցներից հետադարձ կապի միջոցով ստացվող տեղեկությունների: Համալսարանում սահմանված է հաշվետվությունների և հարցումների անցկացման ժամանակացույց տարբեր օղակների համար՝ համաձայն ստացվող տեղեկությունների կարևորության և հրատապության: Նպատակների իրականացման արդյունքների գնահատման հիմնական գործիքը՝ ցուցիչների համակարգը համալսարանն առաջին անգամ է կիրառում (ռազմավարական նախորդ ծրագրում այն չի եղել), և դրանց արդյունավետությունը դեռևս գնահատված չէ:

Դատողություններ: Համալսարանի տեսլականի ձևակերպումը հստակ ցույց չի տալիս, թե ինչի է ուզում հասնել համալսարանը՝ ինչ կարգավիճակում հայտնվել: Առաքելությունը հռչակում է համալսարանի դերը և օգտակարությունը, սակայն ձևակերպած առաքելությունն ու տեսլականը չեն արտացոլում նրա ներկայիս իրական նպատակները, ինչպես օրինակ՝ և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում հիմնականում պրակտիկ և կիրառական գիտելիքներով ու կարողություններով օժտված մասնագետների պատրաստումը: Սահմանված նպատակներն ընդգրկում են համալսարանի գործունեության հիմնական ոլորտները, իսկ գործողությունների ծրագրի առկայությունը

հեշտացնում է խնդիրների կատարումը: Կարևոր է նշել, որ միջազգայնացման շեշտադրում չկա առաքելության կամ տեսլականի մեջ. միայն հետազոտության ոլորտում կարելի է դա տեսնել: Այնինչ բուհը և իր անվանմամբ, և իր համառոտ նկարագրով շեշտադրում է միջազգայնացման դերը, ընդ որում՝ ոչ միայն հետազոտությունների, այլև ուսուցման կազմակերպման, որակի ապահովման հետ կապված: Հաշվի առնելով այն փաստը, որ առաքելությունը վերանայման արդյունքում ըստ էության չի փոխվել (ձևաչափն է փոխվել), կարելի է փաստել, որ շահակիցների կարծիքը և վերլուծությունների արդյունքը էապես չեն անդրադարձել բուհի առաքելության վրա: Մյուս կողմից դիտարկումները ցույց տվեցին, որ բուհի աշխատակիցների կողմից առաքելությունը, տեսլականը և ռազմավարական նպատակները չեն դիտվում որպես գործունեության ուղենիշ: Հիմնական շեշտադրումը համարվում է «գործնական հմտություններով մասնագետների պատրաստումը»: Գործողությունների ծրագիրը ևս թերի է: Մասնավորապես, ներկայացված ցուցիչները գնահատում են միայն վերջնարդյունքը իրականացել է, թե ոչ: Այսինքն՝ կիրառվում է գործընթացների գնահատման վերջնարդյունքային մոտեցում: Ընթացիկ գնահատման ցուցիչներ նախատեսված չեն, այսինքն՝ ընթացքին հետևում կամ արդյունավետության գնահատում չի կատարվում: Բացի այդ, ակնկալվող արդյունքների պարզապես գործողություններ են, իսկ ռիսկային գործոնների հաղթահարման համար չկա որևէ պլանավորում: Վերջինս կարող է հանգեցնել նրան, որ անհաջողության դեպքում հաստատությունը կսահմանափակվի ռիսկային գործոնների մատնանշումով:

Կառավարման խորհրդի կազմում ընդգրկված լինելով՝ ներքին և արտաքին շահակիցներն ունեն հնարավորություն ներկայացնելու իրենց շահերը նպատակների ձևավորման գործընթացում: Սակայն դիտարկումների արդյունքում պարզ դարձավ, որ ռազմավարական նպատակների ձևավորման և սահմանման հարցում շահակիցների մասնակցության հիմքերը քիչ են: Միևնույն ժամանակ շահակիցները վատ են տեղեկացված ռազմավարական նպատակներին: Արտաքին շահակիցների կարիքների լիարժեք ուսումնասիրություն արված չէ և, ըստ այդմ, ռազմավարական ծրագրում դրանց արտացոլումը թույլ է արտահայտված: Սակայն իրականացվող հարցախույզերի և դրանց արդյունքների հաշվառման միջոցով համալսարանը կարող է ապահովել իր ռազմավարության՝ ներքին շահակիցների կարիքներին համապատասխանությունը:

Միևնույն ժամանակ ռազմավարական պլանավորման և վերանայման գործընթացների վերաբերյալ առկա է հիմնականում ընդհանուր նկարագրություն: Որակի ապահովման ուղեցույցում նկարագրված չեն փուլերի պատասխանատուները կամ համապատասխան հաշվետվողականության մեխանիզմները կամ իրականացման քայլերը: Սակայն հարկ է նշել, որ իրականացված է ներքին և արտաքին միջավայրերի օգտակար վերլուծություն, որտեղ ի մի են բերված տարբեր գործիքներով հետազոտման արդյունքները:

Որպես առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականության և ընթացակարգերի հիմք՝ համալսարանը նշում է որակի ապահովման ուղեցույցի 6-րդ բաժինը, սակայն այդ բաժնում նմանատիպ քաղաքականություն և ընթացակարգեր չկան: Որակի ապահովման ուղեցույցի 15-րդ բաժնում նշվում են բուհի հիմնական ռազմավարական ցուցանիշները, որոնց միջոցով գնահատվում է բուհի գործունեության արդյունավետությունը: Սակայն այդ ցուցանիշները չեն կարող նկարագրել բուհի բոլոր ռազմավարական նպատակների իրականացման արդյունավետությունը և ճշգրտման կարիք ունեն: Արդյունքում, համալսարանի ռազմավարական նպատակների իրականացման ցուցանիշները, որոնցով առաջնորդվում է բուհը, այնքան էլ համահունչ չեն նպատակներին: Բացակայում են առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականությունը և ընթացակարգերը:

Գործողությունների ծրագրում բերված ցուցիչները հնարավորություն չեն տալիս գնահատել նպատակների իրականացման որակը: Այնուամենայնիվ, գործողությունների ծրագրով նախատեսված խնդիր – միջոցառում – արդյունքներ – ցուցիչներ մոտեցումը

բավական գործուն է, մանավանդ որ այն մատնանշում է նաև կատարողներին և կատարման ժամկետները: Գնահատման կառուցակարգն ավելի է հստակեցվում այն հանգամանքով, որ վերոնշյալ ցուցիչները չափելի են: Սակայն պակասում են այդ ցուցիչների թիրախային արժեքները, ինչի արդյունքում մեծանում է նպատակների անորոշությունը և հետևաբար՝ դրանց իրականացման գնահատման անորոշությունը:

ԵՄՀ բյուջեն կապակցված չէ ռազմավարական նպատակներին, ինչը կարող է բերել ռազմավարական պլանի իրագործման ձախողման:

Եզրահանգում: Հաշվի առնելով ռազմավարական ծրագրի և դրան կից գործողությունների ծրագրի կառուցվածքն ու ընդգրկունությունը՝ գործունեության ըստ էության բոլոր ոլորտներին վերաբերող նպատակների և խնդիրների առկայությունը, ինչպես նաև կատարված ներքին և արտաքին միջավայրերի վերլուծությունը, որը հաշվի է առնվել ռազմավարական պլանավորման գործընթացում, առաքելությունն ու նպատակներն ապահովում են ռազմավարական նպատակադրման բավարար մակարդակ **և համահունչ են ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին**[6]:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1. Իր նպատակների իրագործմանն ուղղված որոշումների կայացման և իրագործման գործընթացը համալսարանն ապահովում է իր կառավարման կազմակերպական կառուցվածքի միջոցով, որի բաղադրիչների գործառույթներն ու փոխհարաբերությունները կանոնակարգված են համապատասխան փաստաթղթերով: Համալսարանի կառավարումը, պլանավորման համաձայն, իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և ԵՄՀ կանոնադրությանը համապատասխան՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, հիմնադիրների խորհրդի, կառավարման խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթների իրականացմամբ: Կառավարման գործընթացները իրականացվում են համաձայն հաստատված կանոնակարգերի և ընթացակարգերի: Կառավարման համակարգում մարդկային ռեսուրսների ներգրավումը իրականացվում է հաստատված համապատասխան ընթացակարգերով: Ֆինանսների տնօրինման քաղաքականության և աուդիտի նշանակման վերաբերյալ կա անդրադարձ ՈԱ ուղեցույցում, սակայն բացակայում է ռազմավարական ուղղություններով ֆինանսական պլանավորումը: 2014-2018թթ. Ռազմավարական ծրագրի մշակման ընթացքում վերանայվել է համալսարանի կազմակերպական կառուցվածքը, վերափոխվել կամ ստեղծվել են կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնց գործունեությունը բխում է Ռազմավարական ծրագրից և դրա իրագործման նախապայմաններից:

2.2. Գործող կանոնակարգերի հիման վրա համալսարանը փորձում է ներքին շահակիցներին մասնակից դարձնել որոշումների կայացման գործընթացներին, ինչպես նաև հաշվի առնել նրանց կարծիքները՝ ստացված հետադարձ կապի տարբեր ուղիներով: Դասախոսները և ուսանողները ներգրավված են համալսարանի Կառավարման խորհրդի և Գիտական

[6] Ընդգծված մասն ավելացվել է համալսարանի դիտողություններից հետո:

խորհրդի կազմերում: Դասախոսներն ու ուսանողները կարող են դիմել համալսարանի ստորաբաժանումներ համապատասխան խնդիրների դեպքում, իսկ դրանց չլուծման դեպքում՝ նաև ռեկտորին: Համալսարանում նաև մշակվել է կառավարման և վարչարարության քաղաքականության նախագիծ, որով նախատեսված են թափանցիկությունն և հաշվետվողականությունն ապահովող դրույթներ, ինչպես նաև մասամբ նկարագրված են գնահատման և մոնիտորինգի գործընթացները:

2.3. Երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը համալսարանն իրականացնում է իր ռազմավարական ծրագրի միջոցով, մասնավորապես՝ դրան կից գործողությունների ծրագրով, որով նախատեսված են տարաժամկետ միջոցառումներ: Ըստ էության, երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերը մեկտեղված են վերոնշյալ փաստաթղթում: Այդ ծրագրերի իրականացման և մշտադիտարկման կառուցակարգերը ներառված են նույն փաստաթղթում, որով նախատեսված են միջոցառումների կատարողները, արդյունքները, ժամկետները և գնահատման ցուցիչները: Գործողությունների ծրագիրը ներառում է մեկամյա, եռամյա և քառամյա վերջնաժամկետներ. նշվում է յուրաքանչյուր ստորաբաժանման դերը, իրականացման վերջնաժամկետները և գնահատման ցուցիչները:

2.4. Բուհը իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը կատարում է ՈԱ ուղեցույցում նկարագրված արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրության մեթոդներով և համապատասխան վերլուծություններով: Համաձայն ՈԱ ուղեցույցի՝ բուհը պլանավորում է իրականացնել արտաքին և ներքին միջավայրերի վերլուծություն որակի կառավարման համակարգի հնգամյա վերանայման հիման վրա: Իրականացվել է ընդհանուր վերլուծություն՝ ընդգրկելով արտաքին միջավայրի՝ ուղղակի և անուղղակի ներգործության գործոնների վերլուծություն և ներքին միջավայրի վերլուծություն: Նաև իրականացվել է ընդգրկուն հարցում համալսարանի որակի ապահովման կենտրոնի կողմից՝ ուսանողների մասնակցությամբ: Երկու ուսումնասիրություններն էլ իրականացվել են 2014 թ.:

2.5. Մշակված քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության արդյունավետությունը համալսարանը նախատեսում է ապահովել իր՝ որակի կառավարման համակարգով: Համաձայն ԵՄՀ որակի ապահովման քաղաքականության՝ որակի ապահովման նպատակներն են ներդնել և կատարելագործել որակի կառավարման համակարգը՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի չափանիշներին ու Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին համապատասխան, ապահովել մեխանիզմներ որակի ապահովման գործընթացներում շահառուների առավելագույն մասնակցության և որակին միտված թափանցիկ և հաշվետվողական մշակույթի տարածման նպատակով, մշտադիտարկել համալսարանի գործընթացների արդյունավետությունը՝ ապահովելով ծառայությունների շարունակական բարելավումը: Որպես Համալսարանի կառավարման օղակների կողմից որակի կառավարման համակարգի վերահսկման և վերանայման գործընթաց՝ նախատեսված է ամսական և եռամսյակային հանդիպումների անցկացում: Համալսարանում նաև մշակվել է կառավարման և վարչարարության քաղաքականության նախագիծ:

2.6. Գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը համալսարանն իրականացնում է առաջին հերթին հարցումների միջոցով, որոնց արդյունքները պետք է վերլուծվեն որակի ապահովման կենտրոնի կողմից և հաշվի առնվեն գործընթացների հետագա վերանայման ընթացքում: 2014 թ. մշակվել և հաստատվել է կրթական ծրագրերի զարգացման և մշտադիտարկման ընթացակարգ, որի համաձայն՝

համալսարանում պետք է իրականացվեն ընթացիկ ուսումնասիրություններ, տարեկան աուդիտներ և երկարաժամկետ (4-5 տարի) ուսումնասիրություններ՝ արտաքին հավատարմագրման չափանիշների հիման վրա: Ընթացիկ, տարեկան և երկարաժամկետ մշտադիտարկման արդյունքների հիման վրա պետք է կազմվեն բարելավմանն ուղղված գործողության պլաններ, որոնց իրականացումը պետք է վերահսկվի համալսարանի ռեկտորի կողմից: Կրթական ծրագրերի զարգացման և մշտադիտարկման ընթացակարգը դեռևս լիարժեք չի գործարկվել:

2.7. Համալսարանն իր ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների մասին տեղեկությունների տարածումը հիմնականում ապահովում է իր կայքէջի միջոցով: ՈԿՀ առնչվող բոլոր փաստաթղթերը (գործընթացները, զեկույցները, վերլուծությունները) բուհը հասանելի է դարձնում տեղեկատվական ներքին համակարգի միջոցով: Համալսարանն իր կայքի, սոցիալական ցանցերի և ԶԼՄ-ների միջոցով պարբերաբար հրապարակում է տեղեկություններ իր գործունեության վերաբերյալ: Կայքում տեղադրված են տեղեկություններ առանձին մասնագիտությունների վերաբերյալ՝ ըստ կրթաձևերի: Համալսարանի կայքէջի այցելությունների դինամիկան ուսումնասիրվում է նաև համապատասխան գործիքներով (Google Analitics) և գտնվում է համալսարանի Հասարակայնության հետ կապերի և գովազդի բաժնի ուղղակի վերահսկողության ներքո: Համալսարանը գործարկել է ուսումնական գործընթացի կառավարման էլեկտրոնային համակարգ (StudentM), որն ապահովում է տեղեկությունների հասանելիություն ուսանողների համար:

Դատողություններ: Համալսարանի կառավարման կազմակերպական կառուցվածքն ընդհանուր առմամբ հիմնված է ստորաբաժանումների տարանջատման և դրանց գործունեությունների համակարգման սկզբունքների վրա, ինչն իրականացված է բավական արդյունավետ: Միևնույն ժամանակ հստակ տարանջատված չեն Հիմնադիրների խորհրդի և Կառավարման խորհրդի միջև գործառույթները՝ հատկապես ինստիտուցիոնալ բնույթի որոշումների կայացման լիազորությունները: Բացի այդ, դիտարկումները ցույց տվեցին, որ գործունեությունը բուհում հիմնված է առանձին աշխատանքներում մասնագիտացված անձանց վրա, մասնավորապես, ռազմավարական պլանավորման, միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի և որակի ապահովման կենտրոնի դեպքերում բացակայում է փորձի փոխանակումը և գիտելիքների փոխանցումը բուհի այլ մասնագետներին և ասիստենտներին, ինչը կնպաստեր գործունեության կայունությանը և շարունակականությանը տվյալ սուբյեկտների բացակայության պայմաններում:

Ընդհանուր առմամբ ԵՄՀ կառավարման համակարգը բուհական միջավայրին բնորոշ կառավարման ընդունելի համակարգ է: Առկա են բուհի նշած կարիքների համար անհրաժեշտ կառուցվածքային ստորաբաժանումները: Բուհի կառուցվածքային սխեման բավականին պարզ և մատչելի է՝ պայմանավորված նաև բուհի համեմատաբար փոքր չափերով: Կառուցվածքային ստորաբաժանումների թվում ստեղծված են ռազմավարական նպատակների իրականացման համար համապատասխան կենտրոններ և բաժիններ: Բուհում սահմանված են էթիկայի կանոններ, որով պետք է առաջնորդվեն ղեկավարությունը, աշխատակիցները և ուսանողները:

Բուհում թափուր պաշտոնների զբաղեցումը իրականացվում է հաստատված համապատասխան ընթացակարգերի միջոցով: Բուհի ռազմավարական նպատակներում, սակայն, չկան կառավարման արդյունավետության բարձրացման առաջնահերթություններ և ըստ այդմ, համապատասխան բարեփոխումների ծրագիր: Դա պայմանավորված է նրանով, որ բուհի կառավարման համակարգի արդյունավետության վերաբերյալ հստակ վերլուծություններ իրականացված չեն և, բուհի կարծիքով, կառավարման գործող համակարգը ընդհանուր առմամբ բավարարում է իր պահանջներին (իրականացվում են

ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատմանն ուղղված հարցումներ, որոնց արդյունքների հաշվառման մեխանիզմներ, սակայն, չկան):

Ռազմավարական ուղղություններով ֆինանսական պլանավորում չի իրականացվում, ինչը թույլ չի տալիս գնահատել ֆինանսական քաղաքականության արդյունավետությունը: Առկա կանոնակարգերի համաձայն՝ բուհի ներքին շահակիցները (ուսանողներն ու դասախոսները) ներգրավված են բուհի կառավարման մարմիններում, ինչը ապահովում է մասնակցողական կառավարում: Կառավարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ապահովվում են փաստաթղթային հիմքերի հասանելիության, տեղեկատվական ներքին համակարգի և ինտերնետային կայքի միջոցով: Համալսարանում նախատեսված են կառուցակարգեր, որոնք ապահովում են դասախոսների և ուսանողների՝ իրենց վերաբերող որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություն: Խորհուրդների կազմում ներգրավվածությունը, հարցումները, պարբերական հանդիպումները, վարչական մարմիններին և ստորաբաժանումներին դիմելու հնարավորությունը թույլ են տալիս փաստել, որ թե դասախոսները, թե ուսանողները ունեն հնարավորություն դրսևորելու իրենց շահերը կառավարչական գործընթացներում: Սակայն դիտարկումները ցույց տվեցին, որ շահակիցներն ըստ էության պասիվ են օգտագործում իրենց ընձեռած հնարավորությունները որոշումների կայացման, առաջարկությունների ներկայացման հարցում, և մասնակցությունը շատ դեպքերում կրում է զուտ ֆորմալ բնույթ: Բազմամակարդակ պլանավորում համալսարանում, ըստ էության, չի իրականացվում: Նպատակներից և խնդիրներից բխող միջոցառումները չեն աստիճանակարգվում՝ ըստ ժամկետների: Փոխարենը դրանք մեկտեղված են մեկ փաստաթղթում: Արդյունքում դժվարանում է համալսարանի ռազմավարական ծրագրի իրագործումը: Հաշվի առնելով նաև այն, որ համալսարանի ձևակերպած տեսլականը չի արտացոլում զարգացման ձգտումները, կարելի է եզրակացնել, որ համալսարանի զարգացման պլանավորումն իրականացվում է ոչ բավարար անարդյունավետությամբ:

Միևնույն ժամանակ դիտարկումների արդյունքում պարզվեց, որ բուհում գործող կենտրոնները չեն իրականացնում գործունեության պլանավորում, առավել ևս առաքելությունից և նպատակներից բխող:

Համալսարանն իր ռազմավարական ծրագրի մշակման հիմքում դրել է ներքին և արտաքին միջավայրերի վերլուծությունը, որն իրականացվել է բազմաթիվ աղբյուրներից ստացված տեղեկությունների, վիճակագրական տվյալների և ցուցանիշների, հնարավոր կանխատեսումների և իրականացված հետազոտությունների հիման վրա: Համաձայն ՈԱ ուղեցույցի՝ բուհը պլանավորում է իրականացնել արտաքին և ներքին միջավայրերի վերլուծություն որակի կառավարման համակարգի հնգամյա վերանայման հիման վրա: Սակայն հարկ է նշել, որ արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունների հնգամյա պարբերությունը շատ մեծ է, և այդ ընթացքում առաջացող հնարավոր ռիսկերը կարող են հաշվի չառնվել: Այնուամենայնիվ, թեև համալսարանում նոր են ներդրվել արտաքին և ներքին միջավայրերի համալիր ուսումնասիրության և հաշվառման սկզբունքները, և դեռևս հստակեցված չեն ազդող գործոնների մշտադիտարկման մոտեցումները, կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ համալսարանը գիտակցում և կարևորում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը և տիրապետում է դրա համար անհրաժեշտ գործիքակազմի:

Ընդհանուր առմամբ կարելի է տեսնել, որ որակի կառավարման պարբերաշրջանի ներդրումը ըստ էության արմատավորվել է 2014թ-ին, երբ մշակվել են նոր ՌԾ և ՈԱ ուղեցույցը: Թեև որակի կառավարման ամբողջական պարբերաշրջանի կիրառման կառուցակարգերը դեռևս լիարժեք չեն, համալսարանում գիտակցում են վարչարարության արդյունավետության կարևորությունը, և ընթանում են բարեփոխումներ: Այսինքն, բուհում առկա է որակի կառավարման դեռևս միայն պլանավորման մասը, մասամբ նաև իրագործման: Գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության

հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմները հիմնականում նոր են մշակված, դրանց վերաբերյալ կարելի է հիմքեր գտնել միայն 2014թ. վերջին հաստատված փաստաթղթերում:

Բուհը մինչ այժմ չի իրականացրել կանոնակարգված գործընթաց, կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծման և կիրառման գնահատման ուղղությամբ: Արտաքին շահակիցների, մասնավորապես բուհի հետ կառավարման խորհրդում և պրակտիկայի կազմակերպման համար համագործակցող գործատուների հետ իրականացվում են քննարկումներ և որոշ առումով կարծիքների հաշվառում ՄԿԾ-ներում առարկայական փոփոխություններ և բարելավումներ իրականացնելու նպատակով: Արդյունքում ներդրվել են որոշ գործատուների կողմից կարևորվող դասընթացներ: Այդուհանդերձ, արտաքին շահակիցների ներգրավվածությունը համեմատաբար թույլ է: Ներկայումս պլանավորվել են որոշ մեխանիզմներ այդ գործընթացների ակտիվացման համար: Սակայն Համալսարանն ընդհանուր առմամբ տիրապետում է գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման և վերլուծության գործիքակազմին, թեև հստակ չեն այդ վերլուծությունների արդյունքների հաշվի առնման կառուցակարգերը, ինչպես նաև չեն իրականացվում համեմատական ուսումնասիրություններ համալսարանում իրականացվող տարբեր գործընթացների համար:

Բուհի տեղեկատվության տարածման հիմնական մեխանիզմ է դիտարկվում ինտերնետային պաշտոնական կայքը, որը հնարավորություն է տալիս ստանալ անհրաժեշտ ինֆորմացիա բուհի կրթական ծրագրերի, շնորհվող որակավորումների և այլ ծառայությունների վերաբերյալ: Միևնույն ժամանակ, թեև համալսարանն իր կայքի և այլ միջոցներով հրապարակում է տեղեկություններ իր կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ, չեն գործում դրանց որակի վերաբերյալ թարմացվող տեղեկությունների հրապարակման կառուցակարգեր: Չի վերլուծվել ինտերնետային կայքի օգտագործման արդյունավետությունը: Բացակայում են նաև տարածվող տեղեկությունների օբյեկտիվությունը հավաստող գործիքներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով կազմակերպական կառուցվածքի ընդգրկունությունը՝ նպատակներից և խնդիրներից բխող ստորաբաժանումների առկայությունը, դասախոսների և ուսանողների՝ իրենց առնչվող որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորությունները, էթիկայի կանոնների առկայությունը, օղակների գործունեության կանոնակարգվածությունը, գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը՝ համալսարանի կառավարումն ու վարչարարությունը բավարար մակարդակով նպաստում են նպատակների իրագործմանը:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1. Իր առաքելությանը և կրթական չափորոշիչներին ՄԿԾ-ների համապատասխանությունն ապահովելու նպատակով համալսարանում մշակվել են մասնագիտությունների նկարագրեր, որոնք ներառում են մասնագիտությունների կրթական ծրագրերի խնդիրները, վերջնարդյունքները, ընդունելության պահանջները և աշխատանքի

անցնելու հնարավորությունները, դասավանդման և գնահատման մեթոդները, դասախոսներին ներկայացվող պահանջները և այլն: Համալսարանում իրականացվում է բակալավրիատի 3 (Իրավագիտություն, Կառավարում, Օտար լեզու և գրականություն) և մագիստրոսական 1 (Կառավարում) հավատարմագրված կրթական ծրագիր: Գործում է ևս 1 (Իրավագիտություն) մագիստրոսական ծրագիր, որի շրջանավարտները նույնպես ՀՀ ԿԳ նախարարի հրամանով ստանում են պետական դիպլոմներ (հավատարմագրման առաջին փուլի մասնակցության և այնուհետև գործընթացը անավարտ թողնելու պատճառով): Գործում են նաև մասնագիտացումներ (յուրաքանչյուր մասնագիտության համար առաջարկվում է 2-5 մասնագիտացում, սակայն ուսանողների փոքր թվի պատճառով դրանցից ոչ բոլորն են գործարկվում): Կրթական ծրագրերը զարգացվում են ոչ միայն ՀՀ պետական կրթական չափորոշիչների, այլև համագործակից բուհերի ծրագրերի ուսումնասիրությամբ: «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրա հետագա բարելավման նպատակով բուհերին դրամաշնորհների տրամադրման» ծրագրի շրջանակներում իրականացվել է ԵՄՀ-ի Իրավագիտություն կրթական ծրագրի միջազգային փորձի ուսումնասիրություն և բենչմարքինգ, որը օրինակ կհանդիսանա մյուս կրթական ծրագրերի վերանայման համար:

3.2. Համալսարանը ձգտում է կիրառել ուսումնառության այնպիսի մեթոդներ, որոնք կապահովեն ՄԿԾ-ների վերջնարդյունքների ձեռքբերումը: Որակի կառավարմանն առնչվող փաստաթղթերում և ՄԿԾ-ներում սահմանվում են այդ մեթոդները՝ միաժամանակ ընձեռելով դասավանդողներին դասավանդման մեթոդների ընտրության հնարավորություն: Միևնույն ժամանակ համալսարանն իր ձևավորման և զարգացման սկզբից որպես արժեք է ամրագրել ստեղծագործական մտածողությունը, թիմային աշխատանքը, նորարարությունն ու նախաձեռնողականությունը, ինչը մեծ ազդեցություն է ունեցել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության վրա և իր ամրագրումն է ստացել բուհի առաքելությունում և ռազմավարական ծրագրերում: Ուսանողակենտրոն ուսուցման համար կարևորվում են «ինտերակտիվ մեթոդները, որոնք կիրառվում են ուսումնական ծրագրի նպատակներին հասնելու համար»: Ուսումնառության մեթոդները ներկայացված են մասնագիտությունների նկարագրերում, ինչպես նաև առարկայական ծրագրերում: Դասավանդման ընթացքի և արդյունքների վերաբերյալ անցկացվում են ուսանողական հարցումներ՝ ստանալով տեղեկություններ առանձին դասընթացների վերաբերյալ: Իրականացվում են նաև դասալսումներ, դասավանդման մեթոդների արդյունավետության բարձրացմանը միտված ֆոկուս խմբի արդյունքների վերլուծություն: Հարցումների և դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոնների վարիչների և դասախոսների հետ, ինչի հետևանքով կարող են վերանայվել դասավանդման մեթոդները:

3.3. Ուսանողների գնահատումը համալսարանը կազմակերպում է մշակված կարգի՝ ուսանողի գիտելիքի, կարողությունների և հմտությունների գնահատման կանոնակարգի հիման վրա: Ակադեմիական ազնվության և գրագողության դեմ պայքարի հետ կապված բուհն առաջնորդվում է հաստատված «Ակադեմիական ազնվության և գրագողության կանխարգելման կարգով»: Կանոնակարգված են ուսանողների գնահատման մեթոդները, գնահատականի բաղադրիչների կշիռները: Սահմանված են գնահատման չափանիշները: Ուսանողները նախապես ծանոթացվում են գնահատման կարգին: Յուրաքանչյուր դասընթաց գնահատվում է 100 միավորանոց համակարգով (անցողիկը՝ 40): Բուհի գնահատման համակարգը հասանելի է ներքին շահակիցներին: Քննությունները կազմակերպվում են բանավոր, գրավոր, էլեկտրոնային (iTest) կամ համակցված (էլեկտրոնային (iTest) և գրավոր): Յուրաքանչյուր առարկայի քննության կազմակերպման ձևը առաջարկվում է ամբիոնի կողմից և նշվում առարկայական ծրագրում: Անցկացվող հարցումների միջոցով համալսարանը փորձում է պարզել գնահատման կիրառված

մեթոդների արդյունավետությունը և ստուգել, թե ինչքանով է պահպանվում ակադեմիական ազնվությունը: Քննությունների ընթացքը վերահսկվում է ամբիոնների մակարդակով: Նախատեսված է գնահատականների բողոքարկման ընթացակարգ, սակայն գործնականում բողոքարկումները վերաբերում են միայն տեխնիկական հարցերին: Գնահատման համակարգի հետագա կատարելագործման համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները. մշակել գնահատման գործիքների օրինակներ (ռուբրիկներ և այլն) և վերապատրաստել պրոֆեսորադասախոսական կազմին տարբեր հմտությունների, կարողությունների և գիտելիքի գնահատման մեթոդաբանության ուղղությամբ, վերանայել ավարտական աշխատանքների բախշման կարգը, բարելավել քննությունների կազմակերպման և անցկացման գործընթացները, վերացնել էլեկտրոնային (iTest) քննությունների ժամանակ առաջացող տեխնիկական թերությունները:

3.4. ՄԿԾ-ների համապատասխանությունը նմանատիպ այլ ՄԿԾ-ներին համալսարանը փորձում է ապահովել համագործակցության ծրագրերով՝ իրականացնելով փորձի փոխանակում և միաժամանակ ապահովելով շարժունություն և միջազգայնացում: Միջազգային համագործակցության ընդլայնումը հանդիսանում է ԵՄՀ ռազմավարական նպատակներից մեկը, որի իրականացման համար ԵՄՀ-ն համագործակցում է մի շարք օտարերկյա բուհերի հետ (փոխանակման, կրկնակի դիպլոմի և այլ ծրագրեր): Համալսարանում ՄԿԾ-ները կառուցված են ECTS հիման վրա, ինչը թույլ է տալիս հնարավոր դարձնել ուսանողների շարժունությունը՝ կնքելով կրեդիտների փոխճանաչման համաձայնագրեր եվրոպական համալսարանների հետ: ՄԿԾ-ների մշակման ընթացքում ուսումնասիրվել են ԵՄՀ-ի համագործակից բուհերի ծրագրերը՝ վերջիններիս համադրելիության, կրեդիտների փոխճանաչման և միջազգայնացման ապահովման նպատակով: Ուսումնասիրությունների արդյունքում գործող կրթական ծրագրերը համադրվել են համագործակից բուհերի մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ: Որակավորումների միջազգային «թափանցիկության» և արդար ակադեմիական ու պրոֆեսիոնալ ճանաչման բարելավման նպատակով բուհն ուսանողներին տրամադրում է դիպլոմի հավելված, որը համապատասխանում է Եվրոպական հանձնաժողովի, Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ/ՍԵՊԵՍ–ի կողմից մշակված ձևին: Իր նոր ռազմավարական ծրագրով համալսարանը նպատակ ունի ընդլայնել իր ուսանողների և դասախոսների միջազգային շարժունության հնարավորությունները:

3.5. ԵՄՀ-ն, դիտարկելով ուսումնառության որակի շարունակական բարելավումը որպես 2014-2018 թթ. կարևոր ռազմավարական նպատակ, իր կարևոր խնդիրներից մեկն է համարում իրականացվող կրթական ծրագրերի արդիականացման, բարելավման, գնահատման, ինչպես նաև բուհի կողմից նոր կրթական ծրագրերի իրականացման մեխանիզմների ներդնումը: ՄԿԾ-ների մշտադիտարկումը, արդյունավետության գնահատումն ու բարելավումը համալսարանը նախատեսում է իրականացնել կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման կարգի հիման վրա, որով սահմանված են ՄԿԾ-ների բարելավման հիմնական դրույթները և փուլերը: ՄԿԾ-ների մշտադիտարկման քաղաքականությունը հիմնված է շահակիցների կարծիքների հիման վրա. անցկացվում են հարցումներ տարբեր շահակիցների մասնակցությամբ, որոնց շարքում առավել կարևորվում են ուսանողների մասնակցությամբ հարցումները: ՄԿԾ-ների մշտադիտարկումն իրականացվում է ինչպես ընթացիկ և տարեկան, այնպես էլ երկարաժամկետ կտրվածքով՝ արտաքին վերահավատարմագրմանն ընդառաջ: Մշակվել է նաև առանձին դասընթացի գնահատման հարցաթերթ: Բարելավվել են ուսումնական պլանի ձևաչափերը: Ընդհանուր առմամբ մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականությունը նոր է և դեռևս չի գնահատվել և վերանայվել:

Դատողություններ: Բուհի կողմից վերջնարդյունքների հիման վրա 3 ՄԿԾ-ների նկարագրերից համեմատաբար հստակ է մշակված «Իրավագիտություն» ՄԿԾ-ն: Դա թերևս պայմանավորված է ամբիոնների մեջ Իրավագիտության ամբիոնի անձնակազմի ակտիվությամբ և այդ ՄԿԾ-ի մանրամասն նկարագրման ուղղությամբ արտաքին դրամաշնորհով ընձեռնված հնարավորությամբ: Մյուս 2-ը թերի են և առանց մանրամասն նկարագրերի. մասնավորապես, թերի են վերջնարդյունքները և դրանց կապը դասավանդվող առարկաների, դասավանդման մեթոդների հետ: Տեսանելի չէ առարկաների և ՄԿԾ-ի վերջնարդյունքների կապը: Բենչմարքինգի իրականացման համար քաղաքականություն և ընթացակարգեր հաստատված չեն: Առկա է կամընտրական դասընթացների պակաս, սակայն դրանց կիրառման հնարավորությունը համալսարանում օբյեկտիվորեն սահմանափակված է ուսանողների փոքր թվով:

Թեև համալսարանը չունի ուսումնառության մեթոդների ընտրության և արդյունավետության գնահատման հստակ ձևակերպված քաղաքականություն, կիրառվող մեթոդները և դրանց վերանայման կառուցակարգերը միտված են ապահովելու ՄԿԾ-ների նախասահմանված արդյունքները: Հետադարձ կապի միջոցով ստացվող տեղեկություններն ընդհանուր առմամբ ապահովում են կիրառվող մեթոդների արդյունավետության գնահատում: Ընդհանուր առմամբ կարելի է եզրակացնել, որ բուհը փորձում է կիրառել ուսանողակենտրոն ուսուցմանն ուղղված դասավանդման և ուսումնառության մեթոդներ՝ նպատակ ունենալով ստեղծել համագործակցային միջավայր ուսանողների և դասախոսների միջև: Կան պլանավորված գործողություններ մեթոդների կատարելագործման ուղղությամբ: Տարվում են աշխատանքներ դասախոսական կազմի կողմից ինտերակտիվ մեթոդների առավել ակտիվ կիրառման նպատակով: Սակայն հարկ է նշել, որ բուհի աշխատակիցները ուսանողակենտրոն ուսուցման տակ հասկանում են միայն ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Մասնավորապես՝ ուսանողների կողմից միանշանակ բացասաբար են գնահատվում դասավանդման խոսքային մեթոդները և նրանք ամեն կերպ փորձում են խուսափել դասախոսների կողմից այդ մեթոդների կիրառումից, ինչը կարող է խանգարել որոշ առարկաների, որտեղ առանցքային են այդ մեթոդները, վերջնարդյունքների ձեռքբերմանը: Այսինքն կարող ենք եզրակացնել, որ դասավանդման մեթոդները բուհում ընտրվում են ոչ թե առարկայի վերջնարդյունքներին համապատասխան, այլ զուտ ուսանողների համար սովորելու տեսանկյունից հեշտ և հետաքրքիր անցկացնելու համար: Բոլոր կրթական ծրագրերում նկարագրված են ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքները: Դրանով հանդերձ՝ ելքային արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները արտացոլող համապատասխան հիմքերը թերի են և չեն հավաստում նշված գործընթացների արդյունավետությունը: Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգերը ևս բացակայում են:

Ուսանողների գնահատման համակարգը և որդեգրած քաղաքականությունը բավարար հիմք են ստեղծում վերջնարդյունքների գնահատման համար: Բուհի իրականացրած ուսումնասիրությունները ներքին շահակիցների շրջանում հնարավորություն են տալիս ստանալ որոշակի պատկեր բուհի գնահատման համակարգի արդյունավետության և թերացումների վերաբերյալ: Չնայած դրան՝ գնահատման մեթոդները յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար կարիք ունեն նկարագրման վերջնարդյունքների շեշտադրումով: Համալսարանում ներդրված է ուսանողների գնահատման բավական ամբողջական կառուցակարգ, ինչը հեշտացնում է թե գնահատման գործընթացը, թե այդ գործընթացի ընկալումն ուսանողների կողմից: Հատկապես կարևոր է գիտելիքների գնահատման հիմնական չափանիշների առկայությունը: Սակայն թերի են կիրառվող կառուցակարգի հիմնավորումները, մասնավորապես՝ գնահատման բաղադրիչների կշիռները, որոնց հիմնավորումը բուհը տալիս է զուտ 20 բալանոց համակարգում ընդունված

բաղադրիչների կշիռների հետ համեմատման հիման վրա: Դասախոսներն ունեն հնարավորություն սահմանված բաղադրիչների մեծամասնության տակ (այդ թվում՝ լսարանային ակտիվություն, արտալսարանային աշխատանք, միջանկյալ քննություն, վերջնական քննություն, բացի ներկայության) սահմանելու առարկայի վերջնարդյունքների ձեռքբերման պահանջների հիման վրա գնահատում: Սահմանված չեն ՄՈԳ-ի հաշվարկման նորմերը: Սակայն չնայած նրան, որ գնահատման քաղաքականություն առկա է, բուհում կատարված դիտարկումները վկայում են այն մասին, որ գնահատումը հիմնականում դիտարկվում է ոչ թե ուսումնառության արդյունքների ձեռքբերմանը նպաստելու տեսանկյունից, այլ ուսանողներին ըստ գիտելիքների իրար մեջ տարբերակելու համար: Որպես ակադեմիական ազնվության պահպանման կարևոր բաղադրիչ՝ սահմանված է գնահատականների բողոքարկման ընթացակարգը: Ակադեմիական ազնվության պահպանման և գրագողության դեմ պայքարի նպատակով բուհը կատարել է որոշակի քայլեր: Այդ թվում՝ հաստատվել է համապատասխան կարգը, իրականացվել են որոշ բարելավման քայլեր:

Առանձին ուշադրության է արժանի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գնահատման հարցը. պահանջները սահմանված են համապատասխան մեթոդական ցուցումներով, սակայն գործնականում ոչ միշտ են պահպանվում: Մագիստրոսական թեզերի թեմաները հիմնախնդրային չեն, իսկ ուսումնասիրված թեզերն արժեքավոր արդյունքներ չեն պարունակում: Դրանց գրախոսությունները հիմնականում մակերեսային են:

Էրասմուս Մունդուս և Տեմպուս ծրագրերի շրջանակներում ուսումնասիրվել են համագործակից համալսարանների կրթական ծրագրերը՝ սեփական կրթական ծրագրերը դրանց համապատասխանեցնելու նպատակով: Մասնավորապես, կատարվել է լայնածավալ աշխատանք Իրավագիտություն ՄԿԾ-ի ուղղությամբ. ուսումնասիրվել են տարբեր երկրների համանման ՄԿԾ-ները, իրականացվել է բենչմարքինգ, արդյունքում տեղայնացվել և վերանայվել է բուհում գործող ծրագիրը: Սակայն այդ փորձի փոխանցումը բուհի մյուս 2 ՄԿԾ-ներին դեռևս չի իրականացվում պատշաճ մակարդակով: Արդյունքում համալսարանը կարևորում է իր ուսանողների և դասախոսների միջազգանացումը, սակայն չի դիտարկում իր ՄԿԾ-ների բարելավումը՝ որպես միջազգայնացման առաջնային գործոն:

Համալսարանում կիրառվում են ՄԿԾ-ների մշտադիտարկման և գնահատման կառուցակարգեր, սակայն դրանք մեծամասամբ հիմնված են սուբյեկտիվ գնահատումների վրա և չեն լրացվում օբյեկտիվ չափումներով: ՄԿԾ-ների բարելավման կառուցակարգը հիմնված է շահակիցների կարծիքները հաշվի առնելու սկզբունքի վրա: Այդուհանդերձ, ԵՄՀ ՄԿԾ-ների մշտադիտարկման և գնահատման քաղաքականությունը որոշ չափով հստակեցվել է 2014 թ.-ից սկսած, երբ հաստատվել է նոր կանոնակարգը և մշակվել է ՈԱ ուղեցույցը: Նախկինում ՄԿԾ-ների գնահատմանը և վերանայմանն անդրադարձ է կատարվել ըստ անհրաժեշտության՝ ՈԱ կենտրոնի կողմից իրականացված հարցումների արդյունքում բացահայտված խնդիրների, պրոֆեսորադասախոսական կազմի առաջարկների հիման վրա: Անհրաժեշտության դեպքում ռեկտորի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ այդ խնդիրների ուսումնասիրման համար: Բացի այս ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման և բարելավման նպատակով քննարկումներ և առաջարկություններ են ընդունվում նաև համագործակից գործատուներից, ինչի արդյունքում կատարվել են որոշ փոփոխություններ և բարելավումներ: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ՄԿԾ-ների մշտադիտարկման և գնահատման կանոնակարգված գործընթացները բուհը նոր է ներդրել և հստակեցրել: Մշակվել է նոր կարգ: Սակայն մոնիտորինգի և գնահատման իրականացման սխեման կարիք ունի վերանայման և ճշգրտման:

Եզրահանգում: Հաշվի առնելով համալսարանի կողմից առաջարկվող ՄԿԾ-ների մշակվածության ներկա վիճակը, ծրագրերի համակարգված պարբերական

մշտադիտարկման և գնահատման կանոնակարգված գործընթացների բացակայությունը, կրթական և առարկայական ծրագրերի վերջնարդյունքների թույլ կապակցվածությունը, դասավանդման և գնահատման մեթոդների թերի համապատասխանեցումը վերջնարդյունքների հետ, գնահատման համակարգի հիմնավորումների պակասը, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման և գնահատման մակերեսային մոտեցումը՝ կարելի է եզրակացնել, որ համալսարանի մասնագիտությունների կրթական ծրագրերը **չեն նպաստում համալսարանի առաքելության և նպատակների իրագործմանը, շարժունությանն ու միջազգայնացմանը և**[7] վերանայման կարիք ունեն:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1. Առկա ուսուցման բակալավրիատում սովորողների ընդունելությունը կազմակերպվում է ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության, իսկ հեռակա ուսուցման և մագիստրատուրայի ընդունելությունը՝ համալսարանում մշակված կարգի համաձայն: Համալսարանի համար սովորողների հավաքագրման կարևոր աղբյուր է իր հենակետային վարժարանը: Ընդունելությանը նպաստող կառուցակարգ է նաև եռամյա նախապատրաստական դասընթացների անցկացումը, որոնց համար դիմորդը չի վճարում, եթե ուսումը շարունակում է համալսարանում: Հեռակա ուսուցման և մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպվում է համալսարանում ձևավորվող հանձնաժողովների միջոցով: Ուսանողների ընթացիկ ընտրությունը հիմնված է նրանց առաջադիմության ցուցանիշների վրա: Դիմորդների թվի խթանման նպատակով համալսարանը տեղեկություններ է տարածում իր կայքի, սոցիալական ցանցերի և գովազդի միջոցներով Համալսարանում նաև առկա են կրթաթոշակների տրամադրման և ուսման վարձերի զեղչման կառուցակարգեր: Ուսանողների հավաքագրման և ընտրության կիրառվող մեթոդների արդյունավետությունը հիմնականում գնահատվում է ուսանողների թվի դինամիկայով: Համալսարանը վեր է լուծում ուսանողների թվի փոփոխության պատճառները:

4.2. Ուսանողների կրթական կարիքները համալսարանը բացահայտում է հարցումների միջոցով: Համալսարանում անցկացվում են հարցումներ տարբեր խմբերի մասնակցությամբ և տարբեր թեմաներով. ուսանողների կողմից դասախոսների գնահատում, դասընթացների գնահատում, կրթական միջավայրի գնահատում, նաև շրջանավարտների հարցումներ և այլն: Ուսանողների կարիքները գնահատող պարբերական հարցումները մշտապես զարգացել են, իսկ դրանց արդյունքները դարձել են քննարկման թեմաներ, որոշման կայացման հիմքեր, երբեմն նաև պատժի և խրախուսման գործիքներ: Հարցումների՝ որպես ուսանողների կարիքների վերհանման կառուցակարգի գործունության գնահատում ընդհանուր առմամբ չի իրականացվում: Ուսանողներն ունեն իրենց կարիքների ներկայացման այլ հնարավորություններ՝ առաջին հերթին կառավարման մարմիններում ներգրավվածության շնորհիվ: Կազմակերպվում են նաև ֆոկուս խմբեր:

---

[7] Ընդգծված մասն ավելացվել է համալսարանի դիտողություններից հետո:

4.3. Համալսարանը փորձում է ապահովել անհրաժեշտ խորհրդատվության տրամադրումն ու լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը՝ նախատեսելով առարկայական ծրագրերով համապատասխան դասաժամեր և վերահսկելով դրանց կատարումը: Կազմակերպվում են խորհրդատվություններ քննություններից առաջ: Խորհրդատվություն է համարվում նաև ավարտական և հետազոտական աշխատանքների կատարմանն օժանդակումը: ԵՄՀ կարիերայի կենտրոնը պարբերաբար կազմակերպում է Կարիերայի օրեր, տարբեր սեմինարներ, դասընթացներ, խորհրդատվական հանդիպումներ, անհատական խորհրդատվություններ՝ ուղղված աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը: Ներկայիս ինտերակտիվ հաղորդակցման պայմաններում դասախոսները կիրառում են Moodle վիրտուալ լսարանի հնարավորությունները ուսանողներին տրամադրելու պարտադիր և լրացուցիչ գրականություն, անհրաժեշտ այլ նյութեր, ինչպես նաև խորհրդատվություն են տրամադրում էլեկտրոնային փոստի միջոցով: Ըստ մեթոդական խորհրդի 2012 թ. որոշման՝ դասավանդվող առարկաների շրջանակներում ավելացվել են ուսանողներին խորհրդատվություն տրամադրող ժամերը, հանձնարարվել է ամբիոնի վարիչներին ուժեղացնել վերահսկողությունը դասախոսների կողմից տրամադրվող խորհրդատվական ժամերի նկատմամբ:

4.4. Վարչական աշխատակազմին դիմելու կանոնակարգ և ժամանակացույց համալսարանում չկան: Ուսանողներին տեղեկատվություն տրամադրելու նպատակով, յուրաքանչյուր ուսումնական տարվա առաջին օրը հայտարարվում է «Կողմնորոշման օր», որի ընթացքում ներկայացվում են համալսարանում գործող հիմնական կարգերը, ուսանողների իրավունքերն ու պարտականությունները, գործող ստորաբաժանումները, նրանց գործառույթները, միջազգային ծրագրերը: Բոլոր ուսանողները գրանցվում են MOODLE վիրտուալ լսարանում, որտեղ տեղադրված են ինչպես մանրամասն նկարագրությամբ բոլոր առարկայական ծրագրերը, այնպես էլ դասընթացների նյութերը և հարցաշարերը: Ուսանողները գրանցվում են նաև StudentM ներքին տեղեկատվական համակարգում: Բոլոր իրադարձություններին ուսանողները տեղեկանում են նաև անձնական էլեկտրոնային փոստերի միջոցով:

4.5. Համալսարանը նպաստում է ուսանողների կարիերային գործատուների հետ կապերի հաստատման, սեմինարների, կոնֆերանսների կազմակերպման, աշխատանքի վերաբերյալ հայտարարությունների տարածման, պրակտիկայի կազմակերպման միջոցով: Բուհի ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ իրականացնող հիմնական կառույցի՝ Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնի հիմնական նպատակն է «նպաստել աշխատանքային շուկայում համալսարանի ուսանողների և շրջանավարտների մրցունակության զարգացմանը, շրջանավարտների և համալսարանի միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը»: Կենտրոնի գործունեությունը ներառում է նաև պարբերական հանդիպումների կազմակերպումն ուսանողների, շրջանավարտների և գործատուների մասնակցությամբ: Բացի այդ՝ ուսումնառության վերջին կուրսերում ուսանողները պրակտիկա են անցնում: Համալսարանում գործում է Իրավաբանական կլինիկա, որը ևս պրակտիկայի կազմակերպման հարթակ է իրավագիտության մասնագիտության ուսանողների համար: Կենտրոնն իրականացնում է «Կարիերայի օրեր» միջոցառումները, որոնց մշտապես ներկայանում են արտաքին շահակիցներ՝ ՀՀ Գործատուների միությունը, այլ բուհերի ներկայացուցիչներ, հասարակական կառույցներ, գործատուներ, աշխատուժի տեղավորման գործակալություններ և այլն, ինչպես նաև ներքին շահակիցներ՝ ուսանողներ, վարչական աշխատողներ, պրոֆեսորադասախոսական կազմ և այլն: Համալսարանն անցկացնում է

հարցումներ՝ պարզելու Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնի գործունեության արդյունավետությունը, նաև պարբերաբար իրականացնում է պրակտիկայի գնահատում:

4.6. Համաձայն իր ռազմավարական ծրագրի՝ համալսարանը պետք է նպաստի հետազոտական և նորարարական նախաձեռնություններում ուսանողների ներգրավվածության մեծացմանը՝ խրախուսելով ուսանողների և ասպիրանտների, ինչպես նաև դասախոսների հետ համատեղ նորարարական նախաձեռնությունները և մասնակցությունը հետազոտական նախագծերին: Համալսարանի կազմում գործում է Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոն, որը պարբերաբար կազմակերպում է ուսանողական գիտաժողովներ, հրապարակվում են գիտական զեկույցների ժողովածուներ:

4.7. Համալսարանը ուսանողների իրավունքների պաշտպանությունն իրականացնում է ուսանողական ինքնավարության ապահովման, որոշումների ընդունմանը մասնակից դարձնելու, ինչպես նաև կրթական գործընթացներում իրավունքների պաշտպանության կառուցակարգերի միջոցով: Համաձայն ԵՄՀ Ուսանողների իրավունքների պաշտպանի գործունեության կարգի՝ իրավունքների պաշտպանությունը բուհը փորձում է իրականացնել անկախ մարմնի միջոցով, որն իրեն հասցեագրված դիմում-բողոքները, դժգոհությունները քննարկում և լուծում է ղեկավարվելով արդարության և մարդասիրության սկզբունքներով, ինչպես նաև ՀՀ օրենքներով և ԵՄՀ իրավական ակտերով: Համալսարանի հիմնադրումից ի վեր գործում է ուսանողական խորհուրդ: ԵՄՀ ուսանողական խորհուրդն ակտիվորեն մասնակցում է ինչպես բուհի ներքին շահակիցներին առնչվող հիմնախնդիրների բարձրաձայնմանը, միջոցառումների կազմակերպմանը, այնպես էլ հարաբերություններ է հաստատում և զարգացնում արտաքին շահակիցների հետ: Իսկ 2013թ.-ից գործող ուսանողների իրավունքների պաշտպանն ընտրվում է յուրաքանչյուր տարի և կոչված է իրականացնելու ուսանողների իրավունքների պաշտպանությունն և շահերի ներկայացումը համալսարանի կառավարման օղակներում: Ուսանողական խորհուրդը և Ուսանողների իրավունքների պաշտպանը չունեն բյուջե: Ուսանողները ներկայացված են համալսարանի կառավարման և գիտական խորհուրդներում: Առկա են քննական գնահատականների բողոքարկման կանոնակարգեր: Համալսարանն անցկացնում է հարցումներ՝ պարզելու ուսանողների տեղեկացվածությունն ու բավարարվածությունը: 2014 թ. բուհում հաստատվել է Ուսանողների բողոքների քննարկման կարգը, որը սակայն, չի գործում:

4.8. Ուսանողներին կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատումը համալսարանը իրականացնում է հարցումների միջոցով՝ կիրառելով գնահատման քանակական և որակական հետազոտություններ: Համալսարանում անցկացվում են հարցումներ սովորողների և շրջանավարտների մասնակցությամբ՝ գնահատելու դասախոսներին, դասընթացները, համալսարանի այլ ծառայությունները, ինչպես նաև շրջանավարտների մրցունակությունն աշխատաշուկայում: Հարցումների մի մասի համար սահմանված է ժամանակացույց, մասնավորապես՝ դասախոսների գնահատումն իրականացվում է ամեն տարի: Վերջինս կանոնակարգված գործընթաց է. սահմանված են ուսանողների կողմից դասախոսների գնահատման չափանիշները, անցկացման ընթացակարգը և գնահատման արդյունքների օգտագործումը: Վերլուծությունները ներկայացվում են կառավարման մարմիններին, համապատասխան բարելավումներ ձեռնարկելու նպատակով: Ժամանակի ընթացքում Որակի կենտրոնի կողմից կատարելագործվել և հստակեցվել են ուսանողներին տրամադրվող ծառայությունների գնահատման մեխանիզմները, մշակվել են նոր հարցաթերթիկներ:

Դատողություններ: Բուհն իր ընդունելությունը և ուսանողների հավաքագրումն իրականացնում է հաստատված կարգերի համաձայն: Փորձում է դառնալ «որակյալ կրթություն տրամադրող բարձրագույն կրթական հաստատություն»՝ դրանով ավելացնելով ուսանողների ներհոսքը: Վերջին տարիներին համեմատաբար նվազել է դիմորդների քանակը՝ կապված միասնական ընդունելության քննությունների համակարգին համալսարանի ներգրավվելու կառավարության պահանջի հետ: Բուհը դրա պատճառը տեսնում է ոչ թե սեփական քաղաքականության անարդյունավետության, այլ կառավարության կողմից «ոչ հավասարազոր պայմաններ ունեցող բուհերի նկատմամբ նույնատիպ մրցակցային քաղաքականության» կիրառման և «ավանդաբար դեպի պետական բուհեր ծնողների և դիմորդների կողմնորոշման» մեջ: Սակայն, մյուս կողմից նշվում է, որ ավելացել են հեռակա ուսուցման համակարգ ընդունվողների և երկրորդ կուրսում հեռակայից առկա տեղափոխվող ուսանողների քանակը: Բուհում անցկացվող ընդունելության քննությունները (հեռակայի և մագիստրատուրայի համար) փաստացի անցկացվում են հարցազրույցների տեսքով: Բուհը փորձում է խթանել ընդունելությունը ավագ դպրոցների հետ համագործակցության, սեփական հենակետային վարժարանների, նախապատրաստական դասընթացների և նրանց շրջանավարտների համար խրախուսման մեխանիզմների կիրառման միջոցով: Թերի են բուհի կողմից իրականացվող հեռակա ուսուցման ընդունելության արդարությունը և թափանցիկությունն ապահովող ընթացակարգերը: Ընդհանուր առմամբ համալսարանում կանոնակարգված են ընդունելության բոլոր գործընթացները, և դրանք հասանելի են դիմորդներին: Սակայն մեծապես հիմնվելով հենակետային վարժարանից սովորողների հոսքի վրա՝ համալսարանի ընդունելության մոտեցումներն էլ են զգալիորեն «պատվիրակված» վարժարանին:

Բուհը փորձում է իր ուսանողների կարիքների վերհանումն իրականացնել քանակական և որակական հետազոտությունների միջոցով: Այդ նպատակով անցկացվում են տարբեր հարցումներ, ֆոկուս խմբեր: Արդյունքները հրապարակվում են և քննարկվում: Որոշ դեպքերում փորձ է արվում դրանց հիման վրա բարելավման քայլեր իրականացնել: Սակայն, վերհանված կարիքների հիման վրա էական բարելավումներ ըստ էության չկան և թերի են ծառայությունների գնահատման արդյունքների ներդրման մեխանիզմները: Հարկ է նշել նաև, որ կիրառվող մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ դեռ չեն իրականացվել: Այսպիսով՝ հարցումների միջոցով համալսարանն իրոք կարողանում է վերհանել ուսանողների կրթական կարիքները, սակայն կանոնակարգված չեն այդ կարիքների բավարարմանն ուղղված հետագա գործընթացները:

Բուհի ՄԿԾ-ներում և յուրաքանչյուր առարկայական ծրագրում նախատեսվում են լրացուցիչ խորհրդատվական ծառայություններ, որոնք կարող են նախատեսվել ուսանողի առաջարկով: Լրացուցիչ խորհրդատվական ծառայություններ տրամադրելու համար գործում են տարբեր ստորաբաժանումներ և մարմիններ: Ըստ ներկայացված տվյալների բավական մեծ տոկոս են կազմում այդ ծառայություններից օգտվող և դրանցից գոհ ուսանողները: Սակայն գործնականում ուսանողները հազվադեպ են ստանում լրացուցիչ խորհրդատվական ծառայություններ: Մասնավորապես, ուսանողների կողմից որպես խնդիր է նշվում այն հանգամանքը, որ դասաժամի տևողությունը չի բավարարում ուսանողին անհրաժեշտ գիտելիքների ձեռքերման համար, ինչը ըստ երևույթին չի փոխհատուցվում լրացուցիչ խորհրդատվական ծառայություններով: Այսինքն՝ առարկայական ծրագրերով նախատեսված մեխանիզմը ըստ էության չի գործում: Արդյունքում, իր փաստաթղթերում համալսարանը նախատեսում է լրացուցիչ պարապմունքների անցկացման և խորհրդատվության տրամադրման հնարավորություններ, սակայն հավաստի ներկայացված չէ դրանց փաստացի կազմակերպման հաճախությունը: Համալսարանում նաև բացակայում են լրացուցիչ պարապմունքների անցկացման և խորհրդատվության տրամադրման վերահսկողության հստակ կառուցակարգեր:

Բուհում առկա չէ ռեկտորին կամ վարչակազմի այլ անդամին ուսանողի դիմելու կարգ կամ ժամանակացույց: Բուհում ուսանողների կողմից հավելյալ օժանդակման կամ ուղղորդման հետ կապված խնդիրները բարձրացվում են կուրսերի ավագների մոտ, ովքեր ներկայացնում են դրանք ամբիոնների ավագներին, վերջիններս՝ ուսանողական խորհրդում, որի կողմից էլ անհրաժեշտության դեպքում ներկայացվում է բուհի ղեկավար մարմիններին: Սույն գործող մեխանիզմը, սակայն չի նպաստում ուսանողի հանդեպ ծառացած խնդիրների արագ արձագանքմանը և լուծմանը: Մյուս կողմից բոլոր հարցերը չէ, որ հասնում են հասցեատիրոջը՝ կախված միջանկյալ օղակների քննարկման արդյունքներից: Այսպիսով, համալսարանում նախատեսված են պրոֆեսորադասախոսական կազմին դիմելու որոշ ընթացակարգեր, սակայն վարչական աշխատակազմին դիմելու հստակ ընթացակարգեր չեն գործում:

Բուհում կարևորվում են ուսանողների հետագա կարիերային ուղղված գործընթացները: Դա են վկայում այդ ուղղությամբ բուհի կատարած որոշակի քայլերը, ինչպես օրինակ՝ տարեկան կազմակերպվող «Կարիերայի օրեր» միջոցառումները, ամբիոնների աշխատանքը պրակտիկայի արդյունավետության և ուսանողների կարիքներին համապատասխանության համար, ինչպես նաև «Կրթությունից աշխատաշուկա» խորագրով սերտիֆիկատային վերապատրաստումը՝ ՀՀ Մասնագիտական կողմնորոշման կենտրոնի հետ համատեղ: Արդյունքում՝ համալսարանն ընդհանուր առմամբ կիրառում է ուսանողների կարիերային աջակցող ընթացակարգեր, սակայն չի գնահատում դրանց արդյունավետությունը: Կարիերային ուղղված ծառայությունները հիմնականում ուղղորդված են ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպություններում հետագա համապատասխան աշխատանքների տեղավորմանը: Այդ կազմակերպությունների կողմից բուհում անցկացվում են կարիերային նպաստող որոշ սեմինարներ: Միևնույն ժամանակ գործատուները նախընտրում են ինքնուրույն ընտրել իրենց ապագա աշխատակիցներին:

Բուհում ուսանողները հիմնականում ներգրավված չեն գիտահետազոտական աշխատանքներում, մանավանդ բակալավրի աստիճանում: Խնդիրն այն է, որ բուհում իրականացվող գիտահետազոտական աշխատանքները մեծ ծավալ չեն կազմում: Սակայն հարկ է նշել, որ բուհը եղանակներ է գտնում ուսանողների հետազոտական կարողությունները զարգացնելու համար: Մասնավորապես, ուսանողները մասնակցում են համալսարանում կազմակերպվող գիտաժողովներին, դասախոսները իրենց անձնական հետազոտական աշխատանքներին ծանոթացնում են դասերի ընթացքում, մագիստրատուրայի ուսանողները գիտամանկավարժական պրակտիկան անցկացնում են հենց բուհում՝ իրենց թեզի ղեկավարի դասերի ընթացքում սեմինարների տեսքով ուսանողներին ներկայացնելով սեփական աշխատանքը: Մշակված չեն խրախուսման մեխանիզմներ ուսանողների գիտահետազոտական աշխատանքներում ներգրավման համար: Համալսարանում ավելի տարածված է ուսանողների գիտահետազոտական աշխատանքները կապել նրանց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման հետ: Համալսարանում չկա Ուսանողական գիտական ընկերություն, չկա գիտական խորհրդատուների ինստիտուտ, չկա գործընթացների կանոնակարգվածություն:

Ուսանողների իրավունքների պաշտպանությունը բուհում իրականացվում է հիմնականում ուսանողական խորհրդի և ուսանողների իրավունքի պաշտպանի միջոցով՝ հաստատված կանոնակարգերի համաձայն: Ուսանողների իրավունքներն ու պարտականությունները ներկայացվում են ուսանողների կնքած պայմանագրի և առանձին մշակված «Ուսանողների իրավունքները և պարտականությունները» փաստաթղթի միջոցով: Հետևաբար՝ ընդհանուր առմամբ կարելի է եզրակացնել, որ առկա են բավարար կառույցներ և համապատասխան փաստաթղթային հիմքեր ուսանողների իրավունքների պաշտպանության համար, սակայն թերի են ներկայացված կատարված աշխատանքները: Ուսանողական խորհրդի ձևավորման ընթացակարգը հիմնված է ուսանողական ինքնավարության սկզբունքի վրա. մասնավորապես՝ կիրառվում են ընտրական

կառուցակարգեր: Սակայն հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողներն այդքան էլ գոհ չեն իրենց շահերը պաշտպանող մարմինների գործունեությունից: Դիտարկումների արդյունքում պարզ դարձավ, որ ուսանողների իրավունքի պաշտպանը հանդիսանում է ուսանողական խորհրդի անդամ, և ըստ էության չի կարող հանդես գալ որպես անկախ մարմին: Մյուս կողմից, իրավունքների պաշտպանին դիմելիս անանուն նամակները չեն դիտարկվում, ինչը կարող է խոչընդոտել մեծ խնդիրների վերհանմանը: Այսինքն իրավունքների պաշտպանը առնչվում է ոչ թե խնդիրների, այլ անձանց հետ: Մյուս կողմից նշվում է, որ իրավունքի պաշտպանը բուհում որևէ մեկին հաշվետու չէ, ինչը թույլ չի տալիս խոսել նրա գործունեության անկախության մասին: Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ բուհում ուսանողների իրավունքների պաշտպանության մարմինը ըստ էության ուսանողական խորհուրդն է, որի կողմից սակայն, դեռ չեն բարձրացվել ուսանողներին հուզող խնդիրներ, որոնց լուծումը կբերեր էական բարեփոխումների:

Բուհը իրականացնում է քանակական և որակական հետազոտություններ իր ուսանողներին տրամադրվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման համար: Վերջին տարիներին այդ հետազոտությունները իրականացվում են պարբերաբար՝ տարվա կտրվածքով: Արդյունքներն ու վերլուծություններն ամփոփվում և ներկայացվում են կառավարման մարմիններին: Չնայած դրան՝ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա բարելավման գործընթացները դանդաղում են, կարելի է տեսնել միայն փաստաթղթային հիմքերի հստակեցումներ: Մյուս կողմից հետազոտությունների արդյունքներից ուսանողները տեղեկացված չեն: Այսպիսով, համալսարանում գործում են որոշ կառուցակարգեր, որոնց միջոցով ուսանողները գնահատում են ստացված ծառայությունների որակը, սակայն թերի է այդ գնահատումների արդյունքների օգտագործումը: Նաև չկան հարցումների արդյունավետությունը հիմնավորող մոտեցումներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով ուսանողների հավաքագրման, կարիքների վերհանման և դրանց բավարարման ընթացակարգերի առկայությունը և կիրառման արդյունքները, ուսանողների կարիերային նպաստող մոտեցումները, ուսանողների շահերը ներկայացնող մարմինների՝ ուսանողական խորհրդի և ուսանողների իրավունքների պաշտպանի առկայությունը, ուսանողների բավարարվածության մակարդակը ուսումնական միջավայրից՝ կարելի է եզրակացնել, որ համալսարանը բավարար մակարդակով տրամադրում է ուսանողներին համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1. ԵՄՀ-ն պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության քաղաքականությունը և ընթացակարգերը ձևակերպված են բուհում հաստատված «ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգով»: Վերջինս սահմանում է դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման ընթացակարգն ու պայմանները, տարբեր տարակարգերի որակական և քանակական բնութագրերը, ինչպես նաև առանձին բաժնով ներկայացված են պաշտոնների տեղակալման չափանիշները: Աշխատանքային ներքին կանոնակարգով (կարգապահական կանոններ) սահմանված է աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման, այլ աշխատանքի

տեղափոխման ընդհանուր կարգը: Առանձին փաստաթղթով սահմանված է ամբիոնի վարիչի ընտրության կարգը: Կրթական ծրագրերի պահանջներին համապատասխանությունը նախատեսված է ապահովել պաշտոնների անձնագրերի միջոցով: Պաշտոնի անցնելու հիմքում դրված է մրցույթի իրականացումը, որի արդյունքներն ամփոփվում են ամբիոնի նիստում: Թեկնածուները ներկայացվում են ԵՄՀ գիտական խորհրդի նիստում, որտեղ փակ քվեարկությամբ որոշվում է պաշտոնների տեղակալումը: Համալսարանն իրականացնում է իր պրոֆեսորադասախոսական կազմի բազմագործոն գնահատում, որը հիմք պետք է հանդիսանա թե նրանց խրախուսման (հավելավճարներով), թե պատժի (այդ թվում՝ աշխատանքից ազատման) համար:

5.2. Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները համալսարանը սահմանում է աշխատանքային նկարագրերի միջոցով: Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոններին ներկայացվող նվազագույն պահանջները կազմվում են համալսարանի Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի կողմից՝ հիմք ընդունելով մասնագիտության կրթական ծրագրերի ներդրման պատասխանատուների՝ ամբիոնների վարիչների կողմից ներկայացվող պահանջները, ինչպես նաև համալսարանի ռազմավարական խնդիրները: Ուսանողի կողմից դասախոսի գնահատման հարցաթերթում ներառված են հարցադրումներ, որոնց միջոցով վերհանվում է ուսանողի կարծիքը դասախոսի մասնագիտական և մեթոդական պատրաստվածության վերաբերյալ: Հարցումների արդյունքները ներկայացվում են ամբիոնների վարիչներին, քննարկվում անհատապես կամ ամբիոնի նիստին: Բացի այդ՝ դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական պահանջները տեղ են գտել ՄԿԾ-ների նոր ձևաչափով մշակված նկարագրերում:

5.2. Դասախոսական կազմի գնահատումը համալսարանը իրականացնում է ընթացիկ և պարբերական գնահատման տարբեր միջոցների համադրմամբ: Մասնավորապես, մասնագիտական որակների գնահատման համար ԵՄՀ ՈԱ կենտրոնի կողմից մշակվել է «Դասալսումների անցկացման և քննարկման կարգ», ըստ որի ամբիոնի վարիչի պարտականություններից է ամբիոնի դասախոսների դասալսումները և դրանց քննարկման կազմակերպումը դասախոսական կազմի որակի շարունակական բարելավման նպատակով: Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական և մեթոդական որակների անընդհատ աճի ապահովման նպատակով որակի կենտրոնը մշակել է նաև «Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման և հավելավճարի սահմանման» կարգ, որտեղ նախատեսվում է մրցութային հիմունքներով դասակարգել դասախոսներին հավելավճարի սահմանման նպատակով: Համալսարանում հաստատված կարգերի համաձայն պետք է իրականացվի դասախոսների բազմագործոն գնահատում՝ ինքնագնահատման, ուսանողների հարցման և ամբիոնի վարիչի գնահատման համադրմամբ: Այդպիսով, պետք է գնահատվի դասախոսի ուսումնամեթոդական աշխատանքը (ինքնագնահատում, գնահատում ամբիոնի վարիչի կամ մեթոդական խորհրդատուի կողմից, դասընթացի գնահատում ուսանողների կողմից), գիտական գործունեությունը (ինքնագնահատում) և հասարակական գործունեությունը (ինքնագնահատում): Գնահատման յուրաքանչյուր բաղադրիչի ձևավորման համար մշակված են համապատասխան կարգեր: Գնահատումը պետք է կատարվի նախանշված աշխատանքային գործունեության, աշխատանքային պլանների, և դրանց կատարման փաստացի արդյունքների համապատասխանության հիման վրա, ինչպես նաև ինքնագնահատման, դասալսումների և ուսանողների կողմից լրացված գնահատման թերթիկների արդյունքներով: Գնահատման բազմագործոն մոտեցումը դեռևս լիարժեք չի փորձարկվել և դրա արդյունավետության գնահատման կառուցակարգ դեռևս չի մշակվել:

5.4. Համալսարանի ռազմավարական նպատակներից մեկն է ներդնել ուսումնառության որակի շարունակական բարելավման մեխանիզմներ՝ նպաստելով պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների մասնագիտական և մեթոդական որակավորումների բարձրացմանը: Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվել է Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումների կարգը, ըստ որի իրականացվում են դասախոսների մասնագիտական, մեթոդական, հետազոտական, վարչարարական վերապատրաստումներ: Վերջին երկուսը հիմնականում իրականացվել են անհատական խորհրդատվության միջոցով: Դասախոսների ընթացիկ վերապատրաստումներն իրականացվում են համալսարանի որակի ապահովման կենտրոնի, ամբիոնների, միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի կողմից, ինչպես նաև նրանց համատեղ ջանքերով: Վերապատրաստումների արդյունավետության ուղղակի գնահատում չի իրականացվում, սակայն դրանց անհրաժեշտությունը և արդյունավետությունը մասամբ գնահատվում է ներքին շահակիցների կարիքների և ներքին միջավայրի վերլուծության իրականացմամբ ԵՄՀ որակի ապահովման կենտրոնի կողմից:

5.5. Բուհը ձգտում է ապահովել պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը՝ մշակելով խրախուսման մեխանիզմներ: 2014թ. մշակվել է ԵՄՀ հետազոտական գործունեության խթանման դրամաշնորհների տրամադրման կարգը: Բուհում դասախոսական կազմի կայունության համար կիրառվում են խրախուսման քայլեր, այդ թվում՝ արտերկրյա վերապատրաստումների ուղարկում, հետազոտական գործունեության իրականացման համար դրամաշնորհների տրամադրում, հավելավճարներ: Պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունության ստուգման համար բուհը հիմնվում է վիճակագրական տվյալների վրա՝ 3 և ավելի տարվա աշխատողների տոկոսը դիտարկելով: Կիրառվող մեխանիզմների էական բարելավումներ չկան՝ պայմանավորված համալսարանի ֆինանսական հնարավորություններով:

5.6. Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացը համալսարանը նախատեսում է ապահովել գործունեության ընթացիկ գնահատման, դրա արդյունքների հաշվառման, ինչպես նաև վերապատրաստումների միջոցով: Համալսարանը պլանավորում է խթանել ԵՄՀ դասախոսների որակական անընդհատ աճը, գիտահետազոտական աշխատանքների ակտիվությունը, արտալսարանային աշխատանքները ուսանողների հետ, ուսումնամեթոդական և գիտամեթոդական աշխատանքները, մասնակցությունը համալսարանի և նրա ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ դասախոսների աշխատանքի տարբերակված վարձատրման համակարգի հիման վրա: Համալսարանում մշակվել է պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման և հավելավճարի սահմանման կարգ, որով նախատեսված բազմագործոն գնահատման արդյունքներով դասախոսները պետք է խրախուսվեն: Մշակվել է նաև Հետազոտական գործունեության խթանման դրամաշնորհների տրամադրման կարգ: Մշակված մոտեցումների արդյունավետությունը դեռևս չի գնահատվել, քանի որ դրանք լիարժեք չեն կիրառվել: Փորձարկումը և ամբողջական կիրառումը նախատեսվում է իրականացնել 2015-2016 ուսումնական տարվա ընթացքում:

5.7. Անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմը համալսարանը որոշում և ապահովում է աշխատանքի ձևավորված կառուցվածքի և պարտականությունները հստակեցնող փաստաթղթերի հիման վրա: Կազմակերպական կառուցվածքում ներառված են վարչական և ուսումնաօժանդակ բնույթի մարմիններ՝ ըստ համալսարանի կողմից իրականացվող գործառույթների: Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեությունը կարգավորվում է պաշտոնների անձնագրերի միջոցով: Բոլոր հիմնական ծառայությունները գնահատվում են ուսանողների կողմից: Ուսումնաօժանդակ

աշխատակիցների գնահատման հիմնական մեխանիզմը ուսանողների կողմից գնահատումն է, ինչպես նաև Մարդկային ռեսուրսների բաժնի և ռեկտորի կամ անմիջական ղեկավարի հետ անցկացվող զրույցները (քննարկվում են հիմնական կատարված աշխատանքները նախորդ եռամսյակի համար և պլանավորվում հաջորդ եռամսյակի ուղղությունները): Այդպիսով գնահատվում է արդյունքների ապահովման մակարդակը, սակայն ուսումնաօժանդակ աշխատակիցների գնահատման, խրախուսման և առաջընթացի ապահովման ընթացակարգ բուհում առայժմ մշակված չէ:

Դատողություններ: Պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության քաղաքականությունն ու ընթացակարգերը բխում են համալսարանի կրթական ծրագրերի պահանջներից: Ընտրությունը իրականացվում է մրցութային կարգով՝ ըստ բուհի կողմից պրոֆեսորադասախոսական կազմի տարբեր տարակարգերի համար սահմանված պահանջների: Որակի ապահովման կենտրոնի կողմից կիրառվող բազմագործոն մոտեցումն ուղղված է պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության օբյեկտիվ գնահատմանը: Սակայն թերի է ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականությունը: Ներկայումս ուսումնաօժանդակ կազմի ընտրության կարգը դեռ նախագծային փուլում է:

Համալսարանում մշակվող աշխատանքային նկարագրերում սահմանվում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները, որոնք ընդհանուր առմամբ բխում են ՄԿԾ-ներից: Սակայն, հարկ է նշել, որ բերված պահանջների նկարագրերը վերաբերում են դասախոսական կազմի տարակարգերին ընդհանուր առմամբ, և չկա շեշտադրում յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար առանձնացված պահանջների հետ կապված:

Դասախոսական կազմի գնահատման մոտեցումները համալսարանում բավական ամբողջական են, հստակ և փաստաթղթավորված: Սակայն թերի է այդ մոտեցումների արդյունավետության գնահատումը: Թեև ներկայումս մշակված կարգի լիարժեք կիրառում դեռևս չի իրականացվել (առավելապես ֆինանսական խնդիրների պատճառով), այն, հիմնված լինելով և ուսանողների, և ամբիոնի վարիչի կարծիքների, ինչպես նաև ինքնագնահատման վրա, միտված է ապահովելու դասախոսների օբյեկտիվ գնահատում: Մյուս կողմից՝ կազմակերպվում են նաև դասալսումներ:

Համալսարանում մշակված են վերապատրաստման ընթացակարգերը, իրականացնում են համապատասխան գործընթացներ: Մասամբ ապահովվում է ներքին և արտաքին գնահատումների արդյունքների հաշվառումը վերապատրաստման ուղղությունների և թեմաների որոշման ժամանակ: Այդուհանդերձ, դիտարկումների արդյունքում պարզվեց, որ հիմնականում հաշվի են առնվում ոչ թե ներքին և արտաքին գնահատումների արդյունքները, այլ ընթացիկ հնարավորությունները: Վերապատրաստումների արդյունավետության գնահատում ընդհանուր առմամբ չի իրականացվում. նման գնահատում կարելի է համարել միայն դասախոսների ընդհանուր բազմագործոն գնահատականի ենթադրյալ աճը: Այդուհանդերձ, համալսարանը հաստատված կանոնակարգով փորձում է կատարելագործել իր դասախոսական կազմի որակը՝ իրականացնելով ինչպես ներբուհական, այնպես էլ այլ բուհերի հետ համատեղ վերապատրաստումների ծրագրեր: Արդյունքում կարող ենք եզրակացնել, որ բուհում և բուհից դուրս կազմակերպվում են որոշ վերապատրաստումներ, սակայն դրանք հիմնված չեն ներքին և արտաքին գնահատումների և բացահայտված կարիքների վրա:

Բուհն իր նպատակների իրականացման համար ձևավորել է պրոֆեսորադասախոսական կազմ, որի կայունությունը փորձում է ապահովել ուղղակի մրցակիցների հետ համեմատած համապատասխան նպաստավոր պայմանների ստեղծման և անձնակազմի շահագրգռման միջոցով: Սակայն մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունության երաշխավորմանն ուղղված գործնական աշխատանքներ ընդհանուր առմամբ

չեն իրականացվում: Մասնավորապես, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի կողմից նշվում է, որ բուհում ներկայումս խնդիր է բարձր որակավորմամբ մասնագետների ներգրավումը, քանի որ վերջիններս արդեն զբաղված են, իսկ նրանց բարձր վարձատրությամբ ներգրավման համար բուհի ֆինանսական միջոցները չեն բավարարում: Մյուս կողմից, դասախոսական կազմում կան անդամներ, որոնք դասավանդում են շատ թվով առարկաներ: Սա նույնպես վկայում է դասախոսական կազմի անկայունության մասին: Որոշ դեպքերում պայմանագրային հիմունքներիով ներգրավվում են մասնագետներ իրենց առարկաներով, որոնք ոչ միշտ են բխում ՄԿԾ-ների ուսումնական պլանների պահանջներից, ինչն ընդհանուր առմամբ ևս բացասական է ազդում դասախոսական կազմով ապահովվածության վրա: Խնդիր է նաև գիտական աստիճան ունեցող մասնագետների ներգրավումը:

Համալսարանը մշակել է դասախոսական կազմի գնահատման և դրա հիման վրա խրախուսման կարգ: Սակայն մասնագիտական առաջընթացի հիմքում դասախոսների գիտական նվաճումներն են, որոնք դեռևս ցածր մակարդակի վրա են, բայց համալսարանը փորձում է դա խթանել: Համալսարանի ֆինանսական վիճակը դեռևս թույլ չի տալիս լիարժեք կիրառել մշակված ընթացակարգերը:

Ռազմավարական նպատակների իրականացման առումով համալսարանը փորձել է ձևավորել անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ բնույթի ստորաբաժանումները: Հաստիքացուցակով սահմանված են դրանց աշխատակիցները: Սակայն, դիտարկումները ցույց տվեցին, որ բուհի վարչական և ուսումնաօժանդակ կազմը ընդհանուր առմամբ չի նպաստում ռազմավարական նպատակների իրականացմանը, քանի որ նախ՝ ուսումնաօժանդակ և վարչական կազմում ընդգրկված աշխատակիցների թիվը բավարար չէ արդյունավետ գործունեություն ծավալելու համար, և մյուս կողմից՝ պատասխանատվությունները բաշխված են անհատ անձանց վրա, որոնք փորձի և գիտելիքների փոխանցում մյուսներին չեն իրականացնում: Արդյունքում, այդ օղակների համագործակցությունը բուհում ռազմավարական նպատակների իրականացման համար դառնում է անարդյունավետ: Թեև համալսարանի կողմից իրականացվել են աշխատակազմի գործունեության որակի վերաբերյալ հարցումներ, աշխատակազմի խրախուսման և առաջընթացի ապահովման ընթացակարգ մշակված չէ: Մշակված չեն նաև վարչական և ուսումնաօժանդակ կազմի ատեստավորման մասնագիտական չափանիշեր և կատարելագործման մեխանիզմներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով ՄԿԾ-ների կատարումը երաշխավորելու առումով բարձրակարգ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կիրառվող մեխանիզմների և կայունության վտանգները, գիտական աստիճան և կոչում ունեցող կազմի պակասը, ոչ թե ըստ կարիքների, այլ ըստ հնարավորության մոտեցումը վերապատրաստումների իրականացմանը, մասնագիտական առաջընթացն ապահովող կառուցակարգերի բացակայությունը, մարդկային ռեսուրսներով վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի ցածր ապահովվածությունը՝ կարելի է եզրակացնել, որ համալսարանի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը բավարար չէ ռազմավարական նպատակների իրագործման և ՄԿԾ-ների իրականացման համար:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1. Համալսարանի ռազմավարական նպատակներից է գիտական ներուժի կայուն զարգացումը, հետազոտությունների և նորարարությունների կիրառելիության ապահովումը, ինչին հասնելու համար առանձնացված են երկու խնդիրներ. նպաստել հետազոտական ներուժի և նորարարությունների զարգացմանը, ինչպես նաև նպաստել հետազոտական և նորարարական նախաձեռնություններում ուսանողների ներգրավվածության մեծացմանը: Համալսարանն իր ձևավորման և զարգացման հենց սկզբից նորարարությունը որդեգրել է իբրև արժեք, ընդ որում՝ նորարար մոտեցումները վերաբերել են թե՛ դասավանդման մեթոդներին, թե՛ կառավարմանը: Միևնույն ժամանակ, համալսարանն իրեն մշտապես դիրքավորել է իբրև դասավանդող, պրակտիկ հմտություններն ու կարողությունները կարևորող բուհ: Ռազմավարական ծրագրին կից գործողությունների ծրագրով նախատեսված են համապատասխան միջոցառումներ՝ ըստ խնդիրների: Բարելավում կարելի է համարել վերջին տարիներին բուհի կողմից հետազոտական ոլորտի կարևորման գիտակցումը և համապատասխան խրախուսման մեխանիզմների գործարկման փորձերը, սակայն էական բարելավումներ դեռևս չկան:

6.2. Հետազոտական գործունեության իրականացումը բուհը փորձում է կարգավորել 2014 թ. հաստատված ՌԾ-ում տեղ գտած հետազոտական ոլորտին առնչվող ռազմավարական պլանավորմամբ և համապատասխան միջոցառումների պլանով: Համալսարանը ձգտում է նպաստել գիտահետազոտական ներուժի և նորարարությունների զարգացմանը՝ փորձելով իրականացնել թեմատիկ ներքին և արտաքին դրամաշնորհային ծրագրեր, կազմակերպելով գիտաժողովներ, խրախուսելով պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական գործունեությունը: Որպես ուսումնասիրությունների հիմնական ուղղություններ սահմանվել են «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներն ու առաջնահերթությունները», որոնց շրջանակներում յուրաքանչյուր տարի կազմակերպվում են գիտաժողովներ: Ամբիոններն իրենց հետազոտությունների շրջանակներում իրականացնում են գիտական սեմինարներ, կլոր սեղաններ ու քննարկումներ: Համալսարանի միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի գործառույթներից է ներքին դրամաշնորհների տրամադրման գործընթացների կազմակերպումը: Հետազոտական գործունեության որոշ արդյունքներ հրատարակվում են, ինչպես նաև ներկայացվում գիտաժողովների ժամանակ: Հետազոտական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման այլ կառուցակարգեր չեն կիրառվում: Բուհի նոր ՌԾ-ում հետազոտության ոլորտին նվիրված ծրագրերի իրականացումը բուհը նախատեսում է գնահատել Գործողությունների ծրագրում բերված ցուցիչների միջոցով:

6.3. Հետազոտությունների և զարգացման ոլորտում համալսարանն իր գործունեությունը փորձում է հնարավորինս կանոնակարգել իր կողմից մշակված և հաստատված մի շարք փաստաթղթերի միջոցով: Բացի այնպիսի հիմնարար փաստաթղթերից, ինչպիսիք են Ռազմավարական ծրագիրը, դրան կից Գործողությունների ծրագիրը, Որակի ապահովման ուղեցույցը՝ համալսարանում հաստատվել են հետազոտական գործունեության խթանման դրամաշնորհների տրամադրման կարգը, հետազոտական արդյունքների հրատարակման, հետազոտության վերհանված տվյալների վավերացման և հրապարակայնացման կարգը, յունիթների հրատարակման կարգը, Ակադեմիական ազնվության և գրագողության կանխարգելման կարգը: Նշված կարգերով սահմանվում են հետազոտությունների և զարգացման ոլորտին վերաբերող ընթացակարգերը: Սակայն այս ընթացակարգերը Համալսարանում համեմատաբար նոր են սահմանվել, և դրանց գնահատման կառուցակարգ դեռևս մշակված չէ: ԵՄՀ հետազոտության և զարգացման կենտրոնի կողմից պարբերաբար կազմակերպվող գիտաժողովները նպաստում են ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի

գիտական ակտիվացմանը: Ամբիոնների դասախոսները մասնակցում են ամենամյա գիտաժողովներին, որոնց արդյունքները տպագրվում են առանձին ժողովածուներով: Մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողները աշխատանքներ են ներկայացնում ուսանողական գիտաժողովներին: Ավարտական կուրսերի ուսանողների զեկույցները հիմնականում առնչվում են նրանց ավարտական աշխատանքներին կամ մագիստրոսական թեզերին: Հետազոտությունների խթանման նպատակով համալսարանը համագործակցում է մի քանի գիտական գրադարանների հետ:

6.4. Հետազոտական գործունեության միջազգայնացումը համալսարանը ձգտում է ապահովել միջազգային գիտաժողովներին մասնակցությամբ, գիտական հանդեսներում հրապարակումներով, օտարերկրյա բուհերի հետ համագործակցային հարաբերությունների հաստատումով: Միջազգային հետազոտական ոլորտի հետ կապված բուհի ՌԾ նպատակներին և խնդիրներին կից պլանավորված միջոցառումներից են. հետևողականորեն բարձրացնել ԵՄՀ հետազոտական կենտրոնի կողմից կազմակերպվող գիտաժողովների ճանաչելիությունը՝ նպաստելով թե՛ տեղական, թե՛ օտարերկրյա մասնակիցների թվաքանակի ավելացմանը, նպաստել ԵՄՀ ճանաչելիության բարձրացմանն արտերկրում՝ ընդլայնելով գործընկերների թվաքանակը, նրանց հետ համագործակցության հնարավորությունները: Այս ոլորտում փաստացի իրականացվող հիմնական գործընթացներից են օտարերկրյա բուհերի հետ համատեղ վերապատրաստումների ու գիտաժողովների կազմակերպումը և մասնակցությունը: Համալսարանի ուսանողներ և դասախոսներ վերապատրաստումներ են անցել օտարերկրյա մի շարք համալսարաններում: Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմն ունի որոշ հրապարակումներ օտարերկրյա գրախոսվող ամսագրերում: 2011թ. Լիտվայի Միկոլաս Ռոմերիս համալսարանի հետ համատեղ մեկնարկել է «Էլեկտրոնային բիզնեսի կառավարում» կրկնակի դիպլոմի մագիստրոսական ծրագիրը «ՄԱՅՔՐՈՍՈՖԹ» ընկերության հայաստանյան ներկայացուցչության և Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (UITE) աջակցությամբ: Այս ծրագրի շրջանակներում Լիտվայից հրավիրված դասախոսները ուսանողներին ներկայացրել են իրենց համալսարանում իրականացվող հետազոտություններին և մագիստրոսական ատենախոսություններին ներկայացվող պահանջները: Հետազոտական գործունեության միջազգայնացման գործընթացների արդյունավետության գնահատման կառուցակարգեր չեն կիրառվում:

6.5. Համալսարանը փորձում է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումն ապահովել՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելով ուսանողներին և մագիստրոսներին, ինչպես նաև ավելացնելով հետազոտական բնույթի բաղադրիչներ ուսումնառության գործընթացներում: Համալսարանի դասախոսներն իրենց գիտական աշխատանքների արդյունքները և փորձը կիրառում են համապատասխան կրթական ծրագրերում, հատկապես մագիստրատուրայում դասավանդվող առարկայական ծրագրերում: Բակալավրի նախաավարտական և մագիստրանտների գիտահետազոտական պրակտիկան կազմակերպվում է՝ հաշվի առնելով նրանց ավարտական աշխատանքների կամ մագիստրոսական թեզերի թեմաները՝ գործնական հետազոտություններ իրականացնելու նպատակով: Յուրաքանչյուր տարի կազմակերպվում է ուսանողական գիտաժողով, որտեղ զեկույցներով հանդես են գալիս բակալավրի և մագիստրատուրայի ուսանողները: Ելույթների հիմնական մասն առնչվում է ուսանողների ավարտական աշխատանքներին կամ մագիստրոսական թեզերին: Ուսանողները նաև մասնակցում են տարբեր միջբուհական գիտաժողովների, դատախաղերի, մրցույթների և դասընթացների: Համալսարանում կազմակերպվում են գիտագործնական և գիտամեթոդական սեմինարներ: Հետազոտական բաղադրիչը

գնահատվում և վերանայվում է՝ որպես ամբողջ ուսումնական գործընթացի մաս, այսինքն՝ գործում են նույն կառուցակարգերը, ինչ կրթական ծրագրերի համար: Հետազոտական բաղադրիչի կշիռը բարձրացնելու նպատակով բոլոր մասնագիտությունների գծով բակալավրի ուսումնական պլաններում երկրորդ և երրորդ կուրսերի համար ներդրվել է առանձին կուրսային աշխատանք (2 կրեդիտ), որի շրջանակներում ուսանողները ծանոթանում են հետազոտության հիմնական մեթոդներին, կուրսային աշխատանք գրելու պահանջներին, այդ թվում՝ հղումներ կատարելու կանոններին և գրագողության դեմ պայքարին: Դասընթացի շրջանակներում ուսանողները կուրսային աշխատանքի թեմա են ընտրում իրենց նախընտրած առարկայից և ստացած գիտելիքները կիրառում եմ կուրսային աշխատանք կատարելու ընթացքում: Հետազոտական հմտությունների հետագա զարգացման համար բուհը բակալավրիատում ներդրել է «Հետազոտության մեթոդների ներածություն», իսկ մագիստրատուրայում՝ «Գիտական հետազոտության մեթոդաբանություն» դասընթացները:

Դատողություններ: Համալսարանն ինքն է նշում, որ մշտապես դիրքավորվել է իբրև դասավանդող, պրակտիկ հմտություններն ու կարողությունները կարևորող բուհ, ինչի արդյունքում բուհի ներսում նույն չափով չեն զարգացել գիտական ավանդույթները: Համալսարանի հետազոտական հետաքրքրությունները բավական անորոշ են, նախանշված չեն համապատասխան ուղղությունները: Հետազոտական ոլորտի զարգացման անհրաժեշտությունն առավել կարևորվել է վերջին տարիներին: Կարևոր է նաև այն փաստը, որ բուհի կառավարման օղակն այլևս գիտակցում է գիտահետազոտական ուղղվածության առաջնահերթությունը: Այդ ուղղությամբ բուհի նոր ռազմավարական ծրագրում դրվել են նպատակ և խնդիրներ: Չնայած այդ ամենի, բուհում դեռևս չի գործում ռազմավարական մոտեցում հետազոտական ոլորտի զարգացման համար:

Թեև մշակված է գիտական ներքին դրամաշնորհային ծրագրերի իրականացման կարգ, սակայն նման ծրագրեր բուհում դեռևս չեն իրականացվել: Հետազոտական ծրագրերի թիվը և դրանցում դասախոսական կազմի ներգրավվածության աստիճանը ցածր է: Մյուս կողմից՝ համալսարանը հիմնական հետազոտական գործունեություն է համարում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարումը: Սակայն վերջիններիս որակի և արդյունքների հրապարակայնության ապահովման կառուցակարգերը խիստ թերի են, ինչը թույլ չի տալիս դրանք դիտարկել՝ որպես լիարժեք հետազոտական գործունեություն: Բուհն ըստ էության դեռևս չունի հետազոտական ոլորտի զարգացման ուղղություններ, ուստի և միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր դեռևս չեն կազմվել: Սահմանված չեն ամբիոնների հետազոտական ուղղությունները:

Ընդհանուր առմամբ որպես հետազոտությունների իրականացումը և զարգացումը ապահովող քաղաքականություն բուհը դիտարկում է վերջերս մշակված որոշ կարգերը և դրանցով սահմանված ընթացակարգերը: Սակայն դրանք դեռևս լիարժեք չեն կիրառվել, և չեն իրականացվել դրանց արդյունավետության գնահատման գործողություններ: Այդուհանդերձ, առկա փաստաթղթերն ու գործընթացները վկայում են որոշակի ընթացակարգերի, բայց ոչ քաղաքականության մասին: Բացի այդ, վերջիններս հստակեցման և թիրախավորվման, բուհի հետաքրքրություններին համապատասխանեցման կարիք ունեն:

Համալսարանը կարևորում է իր գործունեության միջազգայնացումը և ձգտում է հնարավորինս շատ համագործակցել օտարերկրյա համալսարանների հետ: Սակայն այդ համագործակցության բուն հետազոտական բաղադրիչը շատ փոքր է: Ըստ էության, հիմնականում իրականացվում են վերապատրաստումներ, փորձի փոխանակում, բայց ոչ համատեղ հետազոտություններ: Սեփական հետազոտությունների արդյունքների միջազգայնացումը ցածր մակարդակի վրա է, ինչի մասին վկայում է օտարերկրյա պարբերականներում հրապարակումների փոքր թիվը: Համալսարանը չունի նաև հետազոտությունների միջազգայնացման գնահատման կառուցակարգեր:

Ընդհանուր առմամբ համալսարանը կարևորում է կրթական և գիտական գործընթացների երկկողմանի կապը՝ մի կողմից ուսանողներին ներգրավելով հետազոտական ծրագրերում և գիտաժողովներում, մյուս կողմից՝ ավելացնելով հետազոտական բաղադրիչը ուսումնառության գործընթացում: Ուսումնական պլաններում ներառվել են նոր առարկաներ՝ նվիրված հետազոտական մեթոդների ուսումնասիրությանը: Կազմակերպվում են ամենամյա գիտաժողովներ, որոնց մասնակցում են նաև ուսանողներ: Ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում ևս Համալսարանը փորձում է շեշտադրել հետազոտական բաղադրիչը: Մագիստրանտները իրենց գիտական ղեկավարի դասընթացների ընթացքում ուսանողներին են ներկայացնում սեմինարներ՝ նվիրված իրենց թեզերի թեմաներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով հետազոտական ոլորտում համալսարանի հետաքրքրությունների և հավակնությունների անորոշությունը, միջնաժամկետ և կարճաժամկետ հետազոտական ծրագրերի սակավաթվությունը, կիրառական հետազոտական և նորարարական աշխատանքներում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության թույլ ներգրավվածությունը, հետազոտությունների միջազգայնացման և կրթական ծրագրերում արդյունքների կիրառության ցածր աստիճանը՝ կարելի է եզրակացնել, որ հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ համալսարանում հրատապ բարելավումների կարիք ունեն:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1. Ուսումնառության համար նպաստավոր միջավայր և ֆինանսական անկախություն ապահովելու նպատակով համալսարանը ձգտում է ձևավորել իր ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված ենթակառուցվածքներ և բարձրացնել դրանց օգտագործման արդյունավետությունը: Համալսարանում առկա են կահավորված լսարաններ, ցուցադրությունների կազմակերպման համար տեղադրված են ֆիքսված պրոյեկտորներ, յուրաքանչյուր ամբիոն ունի դյուրակիր համակարգիչներ և պրոյեկտորներ: Բացի այդ՝ համալսարանում առկա են երկու համակարգչային լսարան, քննարկումների դահլիճ, գրադարան: Գրադարանում թղթային և էլեկտրոնային տարբերակներով առկա են ուսումնական պլանին համապատասխան դասընթացների համար նախատեսված հիմնարար դասագրքեր, պրակտիկումներ, օրենսգրքեր, նորմատիվ իրավական ակտերի ժողովածուներ և այլ ուսումնական ձեռնարկներ: Մշակման փուլում է գրադարանի կայքը: Համալսարանն անցկացնում է հարցումներ՝ պարզելու ուսանողների՝ ուսումնական միջավայրի առանձին բաղադրիչներով բավարարվածության աստիճանը:

7.2. Ելնելով առաջնահերթություններից և ՌԾ պլանավորված ուղղություններից՝ ամբիոնները և ստորաբաժանումները ներկայացնում են իրենց բյուջեները, որոնք քննարկվում, վերանայվում և հաստատվում են ռեկտորի կողմից: Ֆինանսական միջոցների պլանավորումը և բաշխումը ԵՄՀ-ում մինչ 2014թ. իրականացվել է հիմնականում համալսարանի հաշվապահության կողմից իրականացվող տարեկան պլանավորման միջոցով: Ըստ էության չի իրականացվել ֆինանսական պլանավորում ըստ բուհի ռազմավարական ուղղությունների: 2014թ. մշակած որակի ապահովման ուղեցույցի

համաձայն՝ բուհը որոշ չափով հստակեցրել է ֆինանսական պլանավորման քաղաքականությունը: Ֆինանսների մոնիթորինգն իրականացվում է ԵՄՀ ռեկտորի կողմից ֆինանսական կառավարման բաժնի հետ համատեղ: Ֆինանսական կառավարման բաժինը ներկայացնում է ընթացիկ հաշվետվություններ ռեկտորին: Վերջինս ներկայացնում է տարեկան հաշվետվություն կառավարման խորհրդին: Կառավարման խորհուրդը տարեկան նիստում որոշում է կայացնում նաև տվյալ տարում ներքին կամ արտաքին ֆինանսական աուդիտի անցկացման վերաբերյալ:

7.3. Մինչ 2014թ. ֆինանսական միջոցների պլանավորման և բաշխման հիմքում դրվել է կրթական ծրագրերի ձևաչափերում նախատեսված և դրանց իրականացման համար պատասխանատուների կողմից պահանջված ռեսուրսների ցանկը, աշխատակիցների կողմից ներկայացված պահանջագրերը, որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացված հարցումները և այլն: Ըստ Որակի ապահովման ձեռնարկի և ըստ նոր մոտեցման՝ ամբիոններում և ստորաբաժանումներում նախատեսվում է ամփոփել յուրաքանչյուր ուսումնական տարվա համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսների ցանկերը ու քանակությունը և հիմնավորումներով ներկայացնել ռեկտորին: Պլանավորումների հիմքում նախորդ տարիների ընդունելության ցուցանիշների վերլուծությունն է և պլանավորվող տարվա համար կանխատեսումները: Բուհը ներկայումս ֆինանսական անկախության տեսանկյունից խիստ նպատակահարմար է գտնում ապահովել մի կողմից դիմորդների կայուն հոսք, մյուս կողմից ֆինանսական մուտքերի այլընտրանքային աղբյուրներ: Ամբիոնների ընթացիկ գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերումն իրականացվում է «Գնումների կազմակերպման ընթացակարգին» համապատասխան: Հաշվի առնելով վերջին տարիներին առկա ուսուցման համակարգում ընդգրկվող ուսանողների նվազող թվաքանակը ԵՄՀ-ն իրականացրել է ֆինանսական մուտքերի այլընտրանքային աղբյուրների ներգրավում: Կրթական ծրագրերի իրականացման համար կարևոր նշանակություն է ունեցել բուհի 2012-2014 թթ. մասնակցությունը դրամաշնորհային ծրագրերին և համագործակցությունները այլ կազմակերպությունների, օրինակ՝ ՎիվաՍելլ ՄՏՍ-ի հետ: Բարելավվել է համակարգչային սենյակը, ստեղծվել է ևս մի նոր համակարգչային լսարան, քննարկումների դահլիճ: Համալսարանի գրադարանը վերանորոգվել և ապահովվել է նոր կահույքով ու համակարգիչներով, սկսվել է գրադարանի ավտոմատացման գործընթացը, համալսարանի ողջ տարածքում ստեղծվել է Wi-Fi ինտերնետային կապ:

7.4. Ռեսուրսային բազան համալսարանը ձգտում է ձևավորել դրանց պլանավորմամբ՝ հիմք ընդունելով աշխատակիցների կողմից ներկայացած պահանջագրերը, մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման անհրաժեշտ ռեսուրսները, ՈԱ կենտրոնի կողմից իրականացված ուսումնասիրությունների հաշվետվությունները, աուդիտի և շահակիցների շրջանում իրականացված հարցման արդյունքները: Իրականացվում է տարեկան գույքագրում, հիմնական միջոցների համար սահմանվում են պատասխանատուներ համապատասխան ստորաբաժանումներից: Որակի ապահովման կենտրոնի կողմից պարբերաբար իրականացվում են հարցումներ: Հարցումների արդյունքների քննարկումների հիման վրա համալսարանի ղեկավարությունը նախաձեռնում է շտկումներ:

7.5. Տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացների կառավարումը համալսարանը իրականացնում է ըստ իր կողմից մշակված Գործավարության կանոնակարգի և Փաստաթղթերի կառավարման ընթացակարգի: Ծառայությունների մատուցման շուրջ ամբողջական և հավաստի տեղեկատվությունը տարածվում է արտաքին շահառուների շրջանում ԵՄՀ կայքի միջոցով, առանձին դեպքում նաև հրապարակումների, ԶԼՄ-ների միջոցով: Համալսարանում գործում է ուսումնական գործընթացի կառավարման

ներքին տեղեկատվական համակարգ՝ Student M: Աշխատակիցներին ու սովորողներին տրամադրվում է էլեկտրոնային փոստի հատուկ հասցե: Գործում է MOODLE վիրտուալ լսարանը: Առկա է համակարգչային ներքին ցանց: Հարցումները ևս իրականացվում են էլեկտրոնային տարբերակով: Գործիքների արդյունավետությունը ստուգվում է ԵՄՀ Որակի ապահովման կենտրոնի կողմից պարբերաբար անցկացվող մոնիթորինգի միջոցով, ինչպես նաև շահակիցների շրջանում իրականացվող հարցումներում ներառելով համապատասխան հարցադրումներ՝ գնահատելու տեղեկատվական համակարգերի առանձին բաղադրիչների արդյունավետությունը: Փոփոխությունների ընդհանուր միտումը փաստաթղթաշրջանառության էլեկտրոնայնացումն է, որի շրջանակներում ներդրվել և ընդլայնվել են համապատասխան գործիքներ: 2010-2015թթ. Ռազմավարական նպատակների իրականացմանն ընդառաջ, բուհի աշխատակիցներն ավտոմատացրել են մի շարք գործընթացներ:

7.6. Բուհը փորձում է ստեղծել ապահով և անվտանգ միջավայր՝ ստեղծված համապատասխան հաստիքների միջոցով իրականացվող առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններով: Համալսարանում գործում է պահակային ծառայությունը, առկա է հակահրդեհային ազդանշանային համակարգ, իրականացվում է մասնաշենքի տեսահսկում: Համալսարանն ունի նաև հոգեբան, ով անհրաժեշտության դեպքում տրամադրում է հոգեբանական ծառայություններ ինչպես աշխատակիցներին, այնպես էլ ուսանողներին: Դիտարկումների արդյունքում պարզվեց, որ համալսարանի տարածքում գործում է առանձին բժշկական կենտրոն, որը սակայն չի հանդիսանում համալսարանի ենթակառուցվածք և չունի հստակ ամրագրված պարտականություններ ուսանողների հանդեպ:

Համալսարանը միջազգային համագործակցության շրջանակներում ներգրավված է «Հատուկ կարիքներով մարդկանց հասանելիությունը հասարակությանը» (ASPIRE) TEMPUS IV ծրագրում: Կրթական ծրագրերի զարգացումից զատ՝ համալսարանը վերապատրաստել է աշխատակիցների՝ հատուկ կարիքներով անձանց հետ աշխատելու ուղղությամբ, ինչպես նաև ապահովել վերջիններիս համար սովորելու և աշխատելու հարմարավետ պայմաններ:

7.7. Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատումը համալսարանը փորձում է իրականացնել հարցումների միջոցով: Հարցումների անցկացման հաճախականությունները և մեթոդաբանությունը կանոնակարգվում են որակի ապահովման փաստաթղթերով: Չնայած դրան՝ ծրագրերի իրականացման համար տրամադրվող ռեսուրսների գնահատում դասավանդողների կողմից դեռ չի իրականացվել: Հարցումների՝ որպես մեխանիզմ և էլեկտրոնային հարցաշարերի որպես գործիքի վստահելիության և արդյունավետության գնահատում համալսարանը դեռևս չի իրականացնում:

Դատողություններ: ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր ստեղծելու նպատակով բուհը որոշ ներդրումներ և բարելավումներ է կատարել՝ լսարանների ընդհանուր հարմարավետության և տեխնիկական հագեցվածության ապահովման ուղղությամբ: Ուսումնական անհրաժեշտ ռեսուրսների նկարագրություն կա ՄԿԾ-ների նոր ձևաչափում: Բուհը ռեսուրսներով ապահովվածության հիմնական նպատակ է դիտում ուսումնառության որակի բարձրացումը և համագործակցային մեթոդների կիրառման ընդլայնումը: Շահակիցներից ստացված արձագանքները միայն ուսանողների կողմից են, այնինչ պակաս կարևոր չէ դասավանդող կազմի արձագանքը և վերհանված կարիքները, ինչը նախատեսված է նոր ՌԾ-ի 4.3 խնդրի միջոցառումների պլանավորման մեջ, սակայն դեռևս չի իրականացվել: Համալսարանի ղեկավարությունը գտնում է, որ առկա լսարանային ֆոնդը բավարար է ուսանողների ներկայիս թվաքանակի համար, սակայն

միակ ուսումնական հարկաբաժնում զուգահեռ տեղի են ունենում **ավագ դպրոցի և համալսարանական** խմբերի[8] դասապրոցեսները: Տեխնիկական հագեցվածությունն ընդհանուր առմամբ բավարար է, սակայն ուսանողները դրա ավելացման անհրաժեշտություն են տեսնում: Գրադարանային ֆոնդը քանակապես և որակապես բավարար է ուսումնառության բնականոն գործընթացն ապահովելու համար: Ունենալով նաև զարգացման լավ հնարավորություններ՝ համալսարանը դեռևս չի գնահատում առկա ռեսուրսների օգտագործման նպատակայնությունը:

Համալսարանի ռեսուրսային բազան բավարար է մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար: Սակայն վերջիններս մշակվում են՝ առկա ռեսուրսային բազան հաշվի առնելով, և արդյունքում համալսարանի ռեսուրսային բազան որոշակիորեն սահմանափակում է ուսումնառության գործընթացները (օրինակ՝ ոչ բոլոր լսարաններն են տեխնիկապես զինված): Մյուս կողմից՝ ռեսուրսային բազայի ընդլայնումը կաշկանդված է համալսարանի ֆինանսական կարողություններով:

Բուհում մինչև 2014թ. ֆինանսական պլանավորում իրականացվել է ըստ անհրաժեշտության, այլ ոչ ըստ ռազմավարական ուղղությունների: Ներկայացված են վերջին տարիների ֆինանսական ցուցանիշները, սակայն կատարված չէ վերլուծություն, թե ինչքանով են կատարված ծախսերը ուղղված համալսարանի նպատակների իրականացմանը: Բուհի ղեկավարությունը նույնպես նշում է, որ ֆինանսական ռեսուրսները այնքան էլ չեն բավարարում բուհի արդյունավետ գործունեության համար և այդ ուղղությամբ առաջիկայում ֆինանսական նոր աղբյուրների ներգրավման անհրաժեշտություն կա: Թեև համալսարանը ձգտում է եկամուտների բազմատեսակացման, ներկայացված չեն կոնկրետ միտումները:

Բուհը փորձում է ֆինանսական պլանավորման ոլորտում հստակեցումներ մտցնել 2014թ. հրատարակված որակի ապահովման ուղեցույցով, սակայն դեռևս չի իրականացրել ֆինանսական պլանավորում նոր ընթացակարգի համապատասխան:

Համալսարանում առկա են ֆինանսական ռեսուրսների բաշխման որոշ ընթացակարգեր, սակայն չկա հստակ քաղաքականություն. սահմանված չեն ռեսուրսների բաշխման առաջնահերթությունները կամ դրանց որոշման սկզբունքները: Որպես ֆինանսական ռեսուրսների բաշխման հիմք որոշ առումով ծառայում է ռազմավարական ծրագիրը:

Համալսարանում փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է մշակված ընթացակարգերով: Տեղեկատվության արտաքին և ներքին շրջանառության գործընթացները հիմնված են որոշակի սկզբունքների՝ հասանելիության, թափանցիկության, հարմարավետության վրա: Դրական է այն հանգամանքը, որ համալսարանը ստեղծել է միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ և ապահովել վերջինիս մատչելիությունը ուսանողների և աշխատակիցների համար: Բուհում վերջին տարիներին էական փոփոխություններ են կատարվել՝ ուղղված բուհի ներսում տեղեկատվության տարածման և փաստաթղթաշրջանառության հեշտացման ուղղությամբ: Ներդրվել են հետևյալ համակարգերը. Ուսումնական գործընթացի կառավարման ներքին տեղեկատվական համակարգ Student M, Էլեկտրոնային հաղորդակցություն և պլանավորում, MOODLE վիրտուալ լսարան, էլեկտրոնային թեստեր, ներքին ցանց, էլեկտրոնային հարցումներ և տվյալների բազա: Դրանց շնորհիվ բուհում փաստաթղթաշրջանառությունը և տեղեկատվության տարածումը փորձ է արվում իրականացնել էլեկտրոնային տարբերակով, ինչը հնարավորություն է տալիս վիրտուալ գործիքների միջոցով ավելի արդյունավետ դարձնել նշված գործընթացները: Սակայն դիտարկումների արդյունքում պարզ դարձավ, որ փաստաթղթաշրջանառության ներքին համակարգը դեռևս չի գործարկվում, տվյալների բազան դեռ մուտքագրման կարիք ունի: Այդ

[8] Փոփոխվել է համալսարանի դիտողությունների հիման վրա: Հին տեքստում եղել է. «... **դպրոցական, քոլեջային** և համալսարանական խմբերի... »:

պատճառով բուհում դեռևս ցածր մակարդակի վրա է տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և, ընդհանրապես, կառավարման արդյունավետությունը: Առկա են նաև ստորաբաժանումների միջև գործավարության գործառույթների բաշխման հետ կապված խնդիրներ:

Համալսարանը գործարկում է անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ծառայություններ և համակարգեր՝ միաժամանակ ապահովելով նաև առողջապահական անվտանգությունը: Բուհը փորձում է ապահովել առողջապահական անվտանգությունը իր տարածքում գործող բժշկական կենտրոնի միջոցով, որը սակայն չի հանդիսանում իր ենթակառուցվածքը: Համալսարանը ձգտում է իր ենթակառուցվածքները հարմարեցնել հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին՝ հասանելի դարձնելով կրթական ծառայությունները: Համալսարանում հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար նախատեսված ուսումնական նյութեր չկան, միայն ենթակառուցվածքն է հարմարեցված անվասայլակով տեղաշարժվելու համար:

Համալսարանն ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության և արդյունավետության գնահատումը հիմնականում իրականացնում է հարցումների և քննարկումների միջոցով: Սակայն դրանց կիրառման արդյունավետությունը ուսումնասիրված չէ:

Եզրակացություն: Հաշվի առնելով լսարանային ֆոնդով, տեխնիկական հագեցվածությամբ և գրադարանային ֆոնդով ապահովվող կրթական միջավայրը, ֆինանսական մուտքերի աղբյուրների դիվերսիֆիկացման միտումը, ուսումնական գործընթացի կազմակերպման, հաղորդակցման և փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգերի կիրառությունը, անվտանգության համակարգի առկայությունը, ռեսուրսներին առնչվող կարիքների բացահայտմանն ուղղված հարցումների անցկացումը՝ կարելի է եզրակացնել, որ համալսարանն ունի անհրաժեշտ ռեսուրսներ ուսումնական միջավայրի ապահովման և ռազմավարական նպատակների իրականացման համար:

Եզրահանգում: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1. Համալսարանն իր առջև խնդիր է դրել «բարձրացնել ԵՄՀ գործունեության թափանցիկությունը՝ ներդնելով բուհի կողմից շնորհվող որակավորումների, գիտահետազոտական աշխատանքների և մշակումների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ հաշվետվողականության մեխանիզմներ»: Բուհում ներքին հաշվետվողականությունն ապահովվում է ներքին տեղեկատվական համակարգի միջոցով: Արտաքին հաշվետվողականությունը հիմնականում ապահովվում է ծառայությունների մատուցման շուրջ տեղեկատվությունը ԵՄՀ կայքում տեղադրելու միջոցով: Համալսարանի ռեկտորը յուրաքանչյուր տարի հաշվետվություն է ներկայացնում Կառավարման խորհրդին տարեկան գործունեության վերաբերյալ: Ռեկտորի ամփոփ հաշվետվության մեջ ընդգրկվում են բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները: ԵՄՀ-ն պետության և հասարակության առջև հաշվետվողականություն ապահովում է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությանը, Գիտության պետական կոմիտեին, Ֆինանսների նախարարությանը, Ազգային վիճակագրական ծառայությանը, առանձին դրամաշնորհային

ծրագրերի համար՝ ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ-ին և ԵՄ ծրագրերը համակարգող արտերկրյա բուհերին հաշվետվողականությամբ: Հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը, ինչպես նաև տրամադրվող տարբեր ծառայությունների որակը գնահատվում է ԵՄՀ Որակի ապահովման կենտրոնի կողմից պարբերաբար անցկացվող հարցումների միջոցով: ԵՄՀ Որակի ապահովման ուղեցույցով սահմանվում են ներքին և արտաքին հաղորդակցության ուղիները, թափանցիկության ապահովման հիմնական մոտեցումները:

8.2. Ըստ որակի ապահովման քաղաքականության՝ բուհի աշխատանքի հիմնական սկզբունքներից է հանդիսանում թափանցիկությունը: Համալսարանը փորձում է իր ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը ապահովել՝ տարածելով ամբողջական և հավաստի տեղեկություններ իր կայքի, ֆեյսբուքյան էջի, այլ սոցիալական կայքերի, հրապարակումների, ԶԼՄ-երի միջոցով: Համալսարանի էլեկտրոնային կայքը պարունակում է նյութեր՝ համալսարանի կառուցվածքի, կրթական ծրագրերի, նորությունների, իրականացված միջոցառումների, միջազգային համագործակցության և այլնի վերաբերյալ: Կայքում մշտապես կատարվում են համապատասխան փոփոխություններ, անընդհատ թարմացվում և տեղադրվում են նյութեր: Համալսարանի պաշտոնական կայքէջում տեղադրվում են գործունեությանը վերաբերվող կարգերը, ընթացակարգերը և այլ իրավական փաստաթղթերը: Փաստաթղթերը ներքին շահակիցներին հասանելի են նաև փաստաթղթերի էլեկտրոնային ռեգիստրի միջոցով, որտեղ վերջիններս կարող են հղել նաև փոփոխությունների կատարման առաջարկություններ (համակարգում գործող ֆորումի միջոցով): Կայքի և այլ կապուղիների արդյունավետության գնահատման համար համալսարանն անցկացնում է հարցումներ ներքին շահակիցների շրջանում, ինչպես նաև հետևում իր համացանցային ռեսուրսների հաճախումների վիճակագրությանը:

8.3. Համալսարանը փորձում է հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապն ապահովել իր կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության միջոցով՝ ըստ արտաքին շահակիցների առանձին խմբերի: Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնը հիմնական կապող օղակն է ԵՄՀ ներքին շահառուների, շրջանավարտների և գործատուների միջև: Կենտրոնը իրականացնում է միջոցառումներ՝ ապահովելով նաև այլ բուհերի, դպրոցների, միջին մասնագիտական կրթական հաստատությունների մասնակցությունը: ԵՄՀ Հասարակայնության հետ կապերի և գովազդի բաժինն ապահովում է տեղեկատվության թարմացումը ԵՄՀ կայքէջում, ինչպես նաև այլ ցանցերում, ապահովում է համագործակցություն լրատվամիջոցների հետ, պետական և մասնավոր հատվածը ներկայացնող տարբեր կազմակերպությունների հետ և այլն: ԵՄՀ Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնն ապահովում է համալսարանի հետազոտություններին և զարգացմանն ուղղված ծրագրերով ներքին և արտաքին (տեղական և միջազգային) շահակիցների հետ ակտիվ համագործակցությունը: ԵՄՀ Որակի ապահովման կենտրոնը. ապահովում է ԵՄՀ կրթական ծառայությունների վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների կարծիքի հավաքագրումը և որակի ապահովման գործընթացներում վերջիններիս ակտիվ մասնակցությունը, ապահովում է ներքին և արտաքին հաղորդակցության ուղիների արդյունավետության անընդհատ բարձրացումը, հետևում է կառավարման օղակների հաշվետվողական և թափանցիկ կառավարման մշակույթի պահպանմանը և այլն: Համալսարանում հետադարձ կապի ապահովման հիմնական մեխանիզմներն են աշխատակիցների կոնտակտային տվյալների հրապարակայնությունը, էլեկտրոնային փոստը, այդ թվում՝ անանուն նամակներ ուղարկելու հնարավորությամբ, ՈԱ կենտրոնի կողմից պարբերաբար իրականացվող

հարցումները, ինչպես նաև կառավարման մարմիններում ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը:

8.4. ԵՄՀ առաքելության երեք տիրույթներից է «Հանրային ծառայությունների ապահովումը», համալսարանի տեսլականն է «Պատրաստել փոփոխությունների պատրաստակամ անհատների, ովքեր կդառնան նորարար, մրցունակ ու սոցիալապես պատասխանատու մասնագետներ և օրինակելի քաղաքացիներ»: Համալսարանի տարբեր ստորաբաժանումներ ունեն հասարակական ծառայությունների մատուցման գործառույթներ, պարբերաբար իրականացնում են միջոցառումներ՝ հասարակական տարբեր խմբերի համար: 2011թ.-ից ԵՄՀ-ում գործում է Իրավաբանական կլինիկան, որը մի կողմից նպաստում է ԵՄՀ ուսանողներին իրենց գործնական հմտությունների զարգացմանը, մյուս կողմից՝ աջակցում է ֆինանսապես անապահով անձանց մասնագիտական խորհրդատվությամբ: ԵՄՀ-ում որպես առանձին ստորաբաժանում գործում է Դասընթացների կենտրոնը, որը կազմակերպում է տարբեր մասնագիտական կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացներ՝ ապահովելով ուսանողների, շրջանավարտների, ինչպես նաև արտաքին այլ շահակիցների կարողությունների շարունակական բարելավումը: Համալսարանը յուրաքանչյուր տարի իրականացնում է թրեյնինգներ Երևանի, ինչպես նաև Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերի դպրոցների աշակերտների և պետական քոլեջների ուսանողների համար՝ փափուկ (թիմային աշխատանքի, արդյունավետ հաղորդակցության և այլ) հմտությունների զարգացման նպատակով: ԵՄՀ-ում գործում է նաև «Եվրասիա» բանավեճի ակումբը, որը բաց է բոլոր ցանկացողների համար: Ակումբի շրջանակներում իրականացվում են հանդիպումներ, աշխատաժողովներ, քննարկումներ, դասընթացներ բանավեճի կանոնների և ձևաչափերի վերաբերյալ, ներբուհական և միջբուհական բանավեճեր, ինչպես նաև հանրային բանավեճեր ուսանողներին հուզող հարցերի վերաբերյալ: Ակումբի կողմից մշակվել և հրատարակվել է Ձեռնարկ բանավիճողների համար, որն անվճար տարածվում է տարբեր կրթական հաստատություններում և շահագրգիռ անձանց շրջանակներում: Համալսարանը պարբերաբար իրականացնում է նաև անվճար վերապատրաստման դասընթացներ բուհերի և միջին մասնագիտական հաստատությունների դասախոսների համար՝ փոխանցելով ուսուցման և ուսումնառության համագործակցային մեթոդների շուրջ կուտակված փորձը: Անցկացված միջոցառումները գնահատվում են ԵՄՀ Որակի ապահովման կենտրոնի կողմից՝ միջոցառման ավարտին մասնակիցների կողմից լրացվող հարցաթերթերի միջոցով:

Դատողություններ: Բուհում հաշվետվողականության մեխանիզմներից կենտրոնականը ռեկտորի տարեկան հաշվետվության ներկայացումն է, որն իր մեջ ներառում է բուհի այդ տարվա գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ տեղեկատվություն: Սակայն կարելի է նկատել, որ ղեկավարման ստորին օղակների և աշխատակազմի հաշվետվողականության մեխանիզմները հստակեցված չեն, մշակված չեն դրանց պարբերաբար ներկայացման և կանոնակարգման մեխանիզմները: Ակտիվ կիրառվում է նաև ինտերնետային կայքը արտաքին շահակիցներին տեղեկատվության տրամադրման համար: Այդպիսով, համալսարանում մասամբ կանոնակարգված է ներքին հաշվետվողականությունը, որը պարբերական բնույթի է և ընդհանուր առմամբ տարեկան գործընթաց է: Արտաքին հաշվետվողականությունը կանոնակարգված չէ, սակայն համալսարանը ձգտում է այն ապահովել՝ օգտագործելով առկա հնարավորությունները:

Բուհը փորձում է գործընթացների հրապարակայնություն ապահովել հիմնականում էլեկտրոնային ռեսուրսների, այդ թվում՝ ինտերնետային կայքի և փաստաթղթերի էլեկտրոնային ռեգիստրի միջոցով: Ինտերնետային պաշտոնական կայքում տեղադրվում են գործունեությանը վերաբերվող բոլոր կարգերը, ընթացակարգերը և այլ իրավական փաստաթղթերը: Կայքն անընդհատ թարմացվում է, և տեղադրվում են նյութեր, որոնք

համալսարանի գործունեությունը դարձնում են ավելի թափանցիկ և հանրության համար մատչելի: Մյուս կողմից բուհը կարևորում է նաև Ռազմավարական ծրագրի հրապարակայնացումը և դրան համապատասխան Ռեկտորի տարեկան հաշվետվության ներկայացումը և տարածումը:

Բուհը հասարակության հետ կապի ձևավորման և հետադարձ կապի ապահովման նպատակով ունի մի քանի կենտրոններ, որոնց գործառույթները առնչվում են այդ նպատակին: Առավել ակտիվ է գործում բուհի Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնը: Մյուս կողմից հետադարձ կապ է ապահովվում այն գործատուների կողմից, որոնք համագործակցում են բուհի հետ: Հետադարձ կապի գործող մեխանիզմները կիրառվում են համապատասխան վերլուծություններ իրականացնելու համար: Այդպիսով՝ համալսարանը ձևավորել է հնարավորություններ հետադարձ կապի դրսևորման համար, սակայն ընդհանուր առմամբ չի կիրառում հետադարձ կապի խթանման կառուցակարգեր: Համալսարանը ձգտում է հնարավորինս ընդլայնել այն միջոցառումների շրջանակը, որոնք միտված են փոխանցելու հասարակությանը համալսարանում ձևավորված գիտելիքներն ու արժեքները: Թեև համալսարանը փորձում է գնահատել նմանատիպ միջոցառումների արդյունավետությունը շահակիցների տարբեր խմբերի համար, մշակված չէ այդ գնահատման հիման վրա հետագա բարելավման ընթացակարգը:

Եզրահանգում: Հաշվի առնելով ներքին հաշվետվողականության սահմանված կարգը և դրա իրականացման արդյունքները, հիմնական շահակիցների բավարարվածությունը գործընթացների թափանցիկությունից և ընթացակարգերի հասանելիությունից, արտաքին շահակիցների հետ կապեր հաստատող ստորաբաժանումների առկայությունը և դրանց գործունեության արդյունքները, հասարակությանը տարաբնույթ ծառայությունների մատուցման մշակույթի առկայությունը՝ կարելի է եզրակացնել, որ համալսարանն ապահովում է բավարար մակարդակով հաշվետվողականություն պետությանը և հասարակությանը:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1. Իր արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականությունը համալսարանը սահմանում է իր ռազմավարական նպատակների և դրանցից բխող խնդիրների միջոցով, ինչպես նաև Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի գործունեության կարգով: Համալսարանն իր ռազմավարական նպատակներից է համարում միջազգային համագործակցության ընդլայնումը և նշում է, որ միջազգայնացման իր ռազմավարությունը կառուցելու է հետևյալ խնդիրների լուծման միջոցով. խթանել ԵՄՀ միջազգային կրթական, գիտական և այլ համագործակցային ծրագրերի ավելացմանը, ինչպես նաև ընդլայնել ԵՄՀ ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների և վարչական աշխատակիցների շարժունակության հնարավորությունները դեպի օտարերկրյա գործընկեր բուհեր և այլ շահակից կազմակերպություններ և հակառակը: Նախկին ռազմավարական ծրագրի նպատակների համար՝ համալսարանն իր նոր ծրագրով նախանշել է այլ խնդիրներ:

9.2. Համալսարանի արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականության իրականացման գործընթացների համակարգումը նախատեսվում է ապահովել Միջազգային

կապերի և հետազոտությունների կենտրոնի միջոցով: Կենտրոնն իրականացնում է միջազգային տարբեր հաստատությունների և ուսումնական կենտրոնների հետ համագործակցության եզրեր գտնելու, համագործակցության պայմանագրեր կնքելու գործունեություն: Բացի այդ կենտրոնն իրականացնում է ուսանողների կարճաժամկետ և երկարաժամկետ փոխանակման ծրագրեր, նպաստում է համալսարանի անդամակցմանը տարբեր միջազգային կոնսորցումներին, ստեղծում է ակտիվ կապեր միջազգային և տեղական դրամաշնորհային կազմակերպությունների հետ, դրամաշնորհներին դիմելու գործընթացում աջակցություն է ցուցաբերում պրոֆեսորադասախոսական կազմին և այլն: Միջազգային համագործակցությունը հիմնականում իրականացվում է նախագծային հիմունքներով, և առանձին ծրագրերի համակարգումն իրականացնում են նախագծերի պատասխանատուները և համակարգողները, ովքեր նշանակվում են ռեկտորի կողմից՝ կենտրոնի և ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորի առաջարկությամբ: Բուհը փորձում է խրախուսել տարբեր ստորաբաժանումների մասնակցությունը միջազգային գործընթացներին, այդ գործընթացների նախաձեռնողներին նշանակելով որպես համակարգող և նախագծի ղեկավար՝ հնարավորություն տալով ստանալ հավելյալ եկամուտներ: Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի գործունեության որակի գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր նախագծի պայմանագրի հիման վրա՝ հիմնականում դոնորների և ծրագրի համակարգողների կողմից:

9.3. Համալսարանը ձգտում է խթանել միջազգային կրթական, գիտական և այլ համագործակցային ծրագրերի ավելացումը, մասնավորապես՝ ընդլայնել միջազգային համագործակցությունը օտարերկրյա շահակիցների (բուհերի, հետազոտական կազմակերպությունների, հասարակական կառույցների, պետական մարմինների, գործարար միջավայրի և այլնի) հետ: Համալսարանն ունի համագործակցության մի շարք պայմանագրեր, մասնակից է ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրերի: Իրականացվել են փոխադարձ այցելություններ, արտաքին այլ շահակիցների ներգրավման ուղղությամբ աշխատանքներ: Համալսարանի Գործողությունների ծրագրով սահմանված են արդյունքների գնահատման ցուցիչներ, մասնավորապես՝ օտարերկրյա բուհերի, հետազոտական կազմակերպությունների, հասարակական կառույցների, պետական մարմինների, կորպորացիաների հետ կնքվող մեմորանդումների, պայմանագրերի և այլ համաձայնագրերի թվաքանակը, միջազգային հետազոտական և նորարարական նախագծերում մասնակցող ԵՄՀ դասախոսների թվաքանակի աճը, ԵՄՀ-ի և օտարերկրյա համալսարանների հետ համատեղ իրականացվող ՄԿԾ-ների թվաքանակի աճը, ԵՄՀ-ում ուսուցանող օտարերկրյա ուսանողների և ասպիրանտների թվաքանակի աճը:

9.4. Միջազգային համագործակցային ծրագրերում ներգրավվածության ընդլայնման նպատակով համալսարանը ձգտում է ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և ուսանողների օտար լեզուների իմացության բավարար մակարդակ՝ իրականացնելով օտար լեզուների իմացության բարձրացմանն ուղղված վերապատրաստումներ: Ինչպես վարչական, այնպես էլ դասավանդող կազմը հիմնականում տիրապետում է որևէ օտար լեզվի, քանի որ օտար լեզուների տիրապետումը համալսարանում աշխատանքի անցնելու հիմնական չափանիշներից է: Համալսարանում պարբերաբար կազմակերպվում են օտար լեզվի լրացուցիչ անվճար դասընթացներ այն ուսանողների և դասախոսների համար, ովքեր ցանկանում են մասնակցել միջազգային փոխանակման ծրագրերին: Համալսարանն ստացել է թույլտվություն ՀՀ ԿԳՆ-ից Էրազմուս Մունդուս ծրագրի շրջանակներում իրականացնել դասընթացներ անգլերեն լեզվով օտարերկրյա ուսանողների համար, որոնք կազմակերպվում են անգլերեն լեզվին տիրապետող ԵՄՀ դասախոսների կողմից: Համալսարանում իրականացվում են

հարցումներ՝ պարզելու, թե ինչքանով է օտար լեզուների իմացության սահմանափակությունը խոչընդոտում ներքին շահակիցների մասնակցությանը միջազգային ծրագրերին:

Դատողություններ: Թեև համալսարանը չունի արտաքին կապերի հաստատումը խրախուսող առանձին փաստաթղթավորված քաղաքականություն ու ընթացակարգեր՝ ռազմավարական ծրագրի համապատասխան ձևակերպումները բավարար հիմք են փորձի փոխանակումը, զարգացումը և միջազգայնացումը ուղղորդելու համար: Համալսարանն իր գործունեությամբ կարևորում է միջազգայնացումը և արտաքին կապերի հաստատումը՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ բուհի արտաքին ճանաչման և շարժունության ապահովման համար: Միևնույն ժամանակ թերի են սահմանված համալսարանի՝ տեղական կազմակերպությունների հետ համագործակցության հավակնությունները և համապատասխան քաղաքականությունը: Նաև նկատելի է, որ բուհի միջազգայնացմանն ուղղված քայլերն ընդհանուր առմամբ հիմնված են դրամաշնորհային ծրագրերին մասնակցության վրա, ինչը ֆինանսական այլընտրանքային աղբյուր հանդիսանալուց զատ կարող է նաև խանգարել բուհի սեփական քաղաքականության զարգացմանն այս ուղղությամբ և փաստացի գործընթացները տանել ոչ թե ուսանողների կարիքների վերլուծության հիման վրա բուհին անհրաժեշտ, այլ նշված ծրագրերի նպատակների իրականացման ուղղվածությամբ:

Բուհը ներկայումս նոր ռազմավարական ծրագրում սահմանել է «Միջազգային համագործակցության ընդլայնում» նպատակ, որի համար նախանշել է համապատասխան խնդիրներ և գործողությունների պլան: Դա իր հերթին կարող է հանդիսանալ հետագա գործունեության կարգավորման և ուղենշման հիմք:

Բուհը վերջին տարիներին կարողացել է զարգացնել համագործակցությունը միջազգային հաստատությունների հետ: Դրան մեծապես նպաստել են Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի գործունեությունը և մասնակցությունը դրամաշնորհային ծրագրերին: Միջազգային համագործակցության համար խրախուսվում են նաև մյուս ստորաբաժանումները. գործընթացներն ընդհանուր առմամբ բավական ապակենտրոնացված են և ներկայումս ներառում են համալսարանի համարյա ողջ կառուցվածքը: Արդյունքում ստեղծվել են համագործակցության եզրեր, իրականացվել համատեղ ծրագրեր արտասահմանյան այլ բուհերի հետ և ապահովվել որոշակի շարժունություն: Փոխադարձ այցելությունները և արտաքին այլ շահակիցների ներգրավման ուղղությամբ աշխատանքները որոշակի ազդեցություն են ունեցել ուսումնական միջավայրի, առարկայական ծրագրերի և դասավանդման մեթոդների զարգացման վրա: Սակայն վաղ է խոսել տրամադրվող կրթության և միջազգայնացման գործընթացների հստակ փոխկապակցվածության և նկատելի զարգացումների մասին: Թեև համալսարանը կարևորում է միջազգային համագործակցությունը, հստակ սահմանված չէ այդ համագործակցության նպատակայնությունը և կապը կրթական գործընթացի հետ: Համագործակցության արդյունավետության գնահատման կառուցակարգերը ևս թերի են:

Ընդհանուր առմամբ համալսարանն ընձեռում է հնարավորություններ ներքին շահակիցներին՝ բարելավելու օտար լեզուների իրենց իմացությունը՝ միևնույն ժամանակ ապահովելով որոշակի նվազագույն մակարդակ աշխատանքի ընդունման և ուսանողների ընդունելության գործընթացներով: Այդուհանդերձ, համալսարանում օտար լեզուներով դասավանդումն իրականացվում է խիստ սահմանափակ: Բուհում իրականացված ուսումնասիրությունները փաստում են, որ օտար լեզվի իմացությունը դեռ շարունակում է մնալ միջազգայնացման գործընթացներին խոչընդոտող հիմնական խնդիրներից մեկը, և կազմակերպված լրացուցիչ պարապմունքները էական ազդեցություն չեն ունեցել խնդրի լուծման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով համալսարանի միջազգայնացման ընդհանուր ձգտումը, ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությունը փոխանակման մի շարք ծրագրերին, արտաքին կապերի և միջազգայնացման ենթակառուցվածքի առկայությունը և համագործակցության ազդեցությունը ուսումնական միջավայրի, առարկայական ծրագրերի և դասավանդման մեթոդների զարգացման վրա, օտար լեզուների իմացության բարձրացմանն ուղղված քայլերը՝ կարելի է եզրակացնել, որ համալսարանը բավարար մակարդակով է խրախուսում իր գործունեության միջազգայնացումը և արտաքին կապերի հաստատումը:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1. Որակի ապահովման ուղղությամբ իր հավակնությունները համալսարանը նկարագրել է 2012թ. հաստատված «Որակի ապահովման քաղաքականության» մեջ: Բացի քաղաքականությունից համալսարանում որակի ապահովման հիմնարար փաստաթղթերն են Ռազմավարական ծրագիրը, որով սահմանված են համալսարանի նպատակները, Որակի ապահովման ուղեցույցը և Որակի ապահովման կենտրոնի գործունեության կարգը: Որակի ապահովման քաղաքականությամբ սահմանված է դրա վերանայման պարբերականությունը: Քաղաքականության իրականացման արդյունավետությունը գնահատվում է յուրաքանչյուր տարի համալսարանի կառավարման խորհրդի ամփոփիչ նիստում: Ներկայիս մոտեցումները, որոնք ամրագրվել են Որակի ապահովման ուղեցույցում, դեռևս լիարժեքորեն չեն ներդրվել և գնահատվել: ՈՒղեցույցը մշակվել է 2014թ. «Կրթության որակ և համապատասխանություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

10.2. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարումն իրականացնող հիմնական ստորաբաժանումը համալսարանի Որակի ապահովման կենտրոնն է: Կենտրոնը ապահովված է անհրաժեշտ տարածքներով և նյութատեխնիկական ռեսուրսներով, որոնք ձեռք են բերվել «Կրթության որակ և համապատասխանություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Կենտրոնը ունի ղեկավար և ևս մեկ աշխատակից, որոնց ներկայացվող պահանջները նախատեսված են համապատասխան պաշտոնների անձնագրերով: Որակի ապահովման առանձին հարցերի կարգավորման համար համալսարանում ձևավորվում են աշխատանքային խմբեր: Բյուջեում որակի ապահովման գործընթացներին տրամադրվող ծախսեր չեն նախատեսվում, բայց նյութական և ֆինանսական ռեսուրսները տրամադրվում են պահանջագրերի հիման վրա: Որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է, և հիմնական մեխանիզմների աշխատունակության ստուգում բուհը դեռ չի իրականացրել: Ապագայում, ըստ որակի ապահովման ուղեցույցի, նախատեսվում է իրականացնել ներքին աուդիտ որոշակի պարբերականությամբ:

10.3. Որակի ապահովման գործընթացներին ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը համալսարանն ապահովվում է հիմնականում հարցումների միջոցով, որոնց նպատակներն ու պարբերականությունը սահմանված են Որակի ապահովման ուղեցույցով: Անցկացվում են նաև քննարկումներ ֆոկուս խմբերով: Մասնավորապես, բուհի

որակի կենտրոնը իրականացրել է ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման վերլուծություններ, ֆոկուս խմբեր ուսանողների մասնակցությամբ և համապատասխան վերլուծություններ, ուսանողների կողմից դասախոսների գնահատման վերլուծություններ, նորավարտ շրջանավարտների հարցումներ, ամբիոնների միջև համեմատական վերլուծություններ, խորքային հարցումներ դասախոսների հետ: Իրականացված չէ արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրություն, չնայած ՈԱ կենտրոնն իր առաջնային խնդիրներից է դա համարում: Չկան նաև վարչական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների ուսումնասիրություններ: Փաստացի ներքին և արտաքին շահակիցները թույլ պատկերացում ունեն բուհում որակի ապահովման գործընթացների և նպատակների մասին: Արտաքին շահակիցների անմիջական ներգրավվածությունը գործընթացներին նույնպես թույլ է:

10.4. Որակի ապահովման համակարգի պարբերաբար վերանայումը համալսարանը փորձում է իրականացնել Որակի ապահովման ուղեցույցով նախատեսված ընթացակարգերի, ինչպես նաև բենչմարքինգի միջոցով: ՈՒղեցույցով նախատեսված է որակի կառավարման համակարգի վերանայման չորս պարբերաշրջան. 4-5 տարին մեկ՝ ըստ ռազմավարական ծրագրի վերանայման, տարեկան՝ ըստ տարեկան պլանների կատարման արդյունքների, եռամսյակային և ամսական՝ ընթացիկ հարցերի քննարկմամբ: Որակի կառավարման համակարգը համապատասխանեցվում է Որակի ապահովման եվրոպական ընկերակցության (ENQA) և ՈԱԱԿ-ի պահանջներին ու չափանիշներին: Բուհում որակի ապահովման համակարգի առաջին վերանայումը փաստացի տեղի է ունեցել 2010թ., երբ Որակի ապահովման և ակադեմիական գնահատման կենտրոնը վերակազմավորվել է Որակի ապահովման կենտրոնի: Ամբողջովին փոխվել են կենտրոնի գործառույթները՝ փորձելով ավելի համահունչ դարձնել որակի ապահովման ազգային և եվրոպական ուղենիշներին: 2012թ. հաստատվել է ԵՄՀ որակի ապահովման քաղաքականությունը: 2014թ. հրատարակվել է ԵՄՀ որակի ապահովման ուղեցույցը:

10.5. Համալսարանը փորձում է իր որակի կառավարման համակարգի և ինքնավերլուծության միջոցով ապահովել բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար: Բուհը որակի արտաքին գնահատման համար բավարար փաստաթղթային և տեղեկատվական հիմքեր ձևավորելիս առաջնորդվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների/չափորոշիչների պահանջներով, տվյալների այն քանակությամբ, որը ներկայացված է ինքնավերլուծության ձևաչափով և դրանց վերլուծության ՈԱԱԿ-ի մեթոդաբանությամբ:

10.6. ԵՄՀ-ն, համաձայն որակի ապահովման քաղաքականության, իր հիմնական սկզբունքներից է համարում թափանցիկությունը, որի ապահովման համար փորձում է շահակիցներին հասանելի դարձնել բուհի բոլոր քաղաքականությունները, ընթացակարգերը, հաշվետվությունները և այլ փաստաթղթերը: Արտաքին շահառուների շրջանում իր գործունեության վերաբերյալ ամբողջական և հավաստի տեղեկությունների տարածումը համալսարանը հիմնականում փորձում է ապահովել իր կայքի կամ ՁԼՄ-ներում հրապարակումների միջոցով, իսկ ներքին շահառուների շրջանում՝ տեղեկատվական ներքին համակարգի և գործընթացներում ընդգրկվածության միջոցով: Ռեկտորի տարեկան հաշվետվությունները տեղադրվում են համալսարանի կայքում, իսկ հարցումների արդյունքները հասանելի են ներքին շահակիցներին: Տեղեկատվության տարածման արդյունավետությունը բուհը նաև գնահատում է ուսանողների շրջանում անցկացված համապարփակ հարցումների ժամանակ թափանցիկության վերաբերյալ հարցադրումներ անելու միջոցով, որոնց հիման վրա կատարում է արդյունքների դիտարկում, իրականացվում են ինտերնետային կայքի այցելության թվի դիտարկումներ, դիտարկվում են

ԿԳՆ-ի կողմից բուհերի վարկանիշավորման ցուցանիշները: 2014 թ.-ից բուհում ներդրվել է ներքին տեղեկատվական ռեգիստր, որտեղ բուհը ներառելու է բուհում գործող փաստաթղթային հիմքերը:

Դատողություններ: Որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը համալսարանում ներկայացված են փոխլրացնող փաստաթղթերում, որոնցով սահմանված են որակի ապահովման հավակնությունները, սկզբունքները, գործընթացներն՝ ըստ ոլորտների, պատասխանատուները և այլն: Համալսարանի որակի ապահովման ներքին համակարգի ձևավորման համար կարևոր դեր է կատարել հրատարակված Որակի ապահովման ուղեցույցը: Ընդհանուր առմամբ, առաջնորդվելով ստեղծված փաստաթղթային հենքով, համալսարանը կարող է ապահովել որակի կառավարման կանոնակարգված ընթացակարգեր:

Որակի ապահովման կառույցը ներկայումս ապահովված է անհրաժեշտ տարածքներով և տեխնիկական միջոցներով: Գործընթացների իրականացման նյութական և ֆինանսական ռեսուրսներն ընդհանուր առմամբ տրամադրվում են՝ ըստ կարիքների և հնարավորությունների՝ հիմնականում երաշխավորելով բավարար մակարդակ: Չնայած նրան, որ բուհում որակի ներքին ապահովման որոշ գործընթացներում (հարցումներ, վերլուծություններ) կիրառվում են ավտոմատացված գործիքներ, որակի ապահովման կենտրոնում առկա է մարդկային ռեսուրսների պակաս: Կենտրոնի գործառույթները հիմնականում իրականացվում են միայն կենտրոնի ղեկավարի կողմից, ինչը վերջինիս բացակայության դեպքում պատճառ է հանդիսանում գործընթացների արդյունավետության նվազման: Բուհում զգացվում է որակի ապահովման մասնագետների խիստ կարիք: Մարդկային ռեսուրսների սակավությունը կարող էր լրացվել, եթե բուհի այլ աշխատակիցներ ևս աջակցեին և կցվեին կենտրոնին: Սակայն, փաստացի նման ժամանակավոր աշխատանքային խմբերի ստեղծման դեպքերն ընդամենը երկուսն են՝ «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի իրականացման շրջանակներում և 2014-18 թթ. ռազմավարական ծրագրի մշակման համար: Մյուս կողմից մարդկային ռեսուրսների ներգրավման առումով կարող էր նպաստավոր լինել դասախոսական կազմի և ուսանողական ներկայացուցիչների մշտական ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներին: Բուհն ինքն էլ է նշում, որ առկա է նման խնդիր՝ «շահակիցների կարիքների կանոնակարգված ուսումնասիրություններ և վերլուծություններ իրականացնելու նպատակով հիմնական ռիսկերից է կենտրոնի փոքրաթիվ մարդկային ռեսուրսների առկայությունը»:

Ներքին շահակիցներն անմիջականորեն մասնակցում են որակի ապահովման գործընթացներին հարցումների և հետադարձ կապի այլ միջոցներով, կառավարման մարմիններում ներկայացված լինելով, ինչպես նաև աշխատանքային խմբերի կազմերում ներգրավվելով: Արտաքին շահակիցներից համալսարանն, ըստ էության, կարևորում է գործատուների կողմից ներկայացվող պահանջների ուսումնասիրությունը և բավարարվածությունը շրջանավարտների գիտելիքներից, կարողություններից և հմտություններից: Այսպիսով, եթե ներքին շահակիցների մասնակցությունն ապահովվում է ոչ միայն որպես տեղեկության աղբյուր, այլև որակի ապահովման համակարգի մասնակիցներ, ապա արտաքին շահակիցների մասնակցությունը խիստ սահմանափակ է: Արտաքին շահակիցների ներգրավվածություն կարելի է դիտարկել միայն կառավարման խորհրդում գործատուներից և պետական կառավարման մարմիններից համապատասխան ներկայացուցիչների առկայությունը:

Համալսարանում առկա են ուսումնասիրություններ միայն ուսանողների, դասախոսների և շրջանավարտների կարիքների վերհանման ուղղությամբ: Սակայն այդ վերլուծությունները սպառիչ չեն, մասնավորապես, որոշ վերլուծություններ միայն Կառավարման ամբիոնի կողմից են: Իրականացված չէ արտաքին շահակիցների կարիքների

ուսումնասիրություն, չնայած ՈԱ կենտրոնը իր առաջնային խնդիրներից է դա համարում: Չկան նաև վարչական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների ուսումնասիրության հիմքեր:

Մյուս կողմից կարելի է տեսնել, որ բուհում իրականացվող գործընթացների որակի ուսումնասիրությունները հարցումների, ֆոկուս խմբերի և այլ գործիքների միջոցով հստակ նպատակային ուղղվածություն չեն ունեցել: Դա է վկայում այն, որ վերլուծության արդյունքները էական ազդեցություն չեն ունեցել հետագա բարելավումների առումով. քիչ են հիմքերը, որոնք հնարավորություն են տալիս տեսնել վերլուծությունների հիման վրա առանձնացված հիմնախնդիրները և դրանց հաղթահարման գործողությունների արդյունքները: Բուհը 2014թ. իր ներքին միջավայրի վերլուծության մեջ նշում է ուսումնասիրությունների արդյունքում դուրս բերված որոշ հիմնախնդիրներ (օրինակ. անձնակազմի և ուսանողների օտար լեզվի մակարդակի բարձրացում, դասախոսական կազմի վերապատրաստումների կազմակերպում, խրախուսման մեխանիզմների կիրառում), որոնց հաղթահարման գործողությունները դեռևս պլանավորման փուլում են: Կանոնակարգված չէ Որակի ապահովման կենտրոնի և Ուսանողական խորհրդի կապը: Շրջանավարտների նախաձեռնությամբ համալսարանում բարելավումներ չեն իրականացվել:

Համալսարանը նախատեսում է որակի կառավարման իր համակարգի պարբերական վերանայման կառուցակարգեր՝ ապահովելու համակարգի ճկունությունը: Բենչմարքինգ ևս իրականացվում է, որի արդյունքները ներդրվում են՝ ըստ նպատակահարմարության և ռեսուրսային հնարավորությունների: Հաստատվել է որակի ապահովման քաղաքականությունը, վերանայվել են որակի ապահովման կենտրոնի գործառույթները և որոշ կարգեր՝ համապատասխանեցվելով հավատարմագրման չափանիշներին:

Որակի ապահովման արտաքին գնահատման համար հիմքեր ապահովող հիմնական գործիքը համալսարանում ինքնավերլուծությունն է: Վերջինս իր ձևաչափով և տեղեկատվության ծավալով համապատասխանեցված է հավատարմագրման չափանիշներին և չափորոշիչներին:

ԵՄՀ-ն փորձում է շահակիցներին հասանելի դարձնել բուհի քաղաքականությունները, ընթացակարգերը, հաշվետվությունները և այլ փաստաթղթերը: Դրա համար հիմնականում կիրառում են ինտերնետային կայքի և 2014 թ. ներդրված ներքին տեղեկատվական ռեգիստրի հնարավորությունները: Սակայն ներքին տեղեկատվական ռեգիստրը բուհում դեռ ամբողջությամբ չի գործում. փաստաթղթային բազան ամբողջությամբ ներբեռնված չէ: Ինտերնետային կայքի շնորհիվ բուհի կանոնակարգային փաստաթղթերը հասանելի են շահակիցների համար:

Բուհը որակի գործընթացների հետ կապված իր թափանցիկության ապահովման գնահատումը կատարում է ուսանողների հարցումներով: Սակայն կիրառվող հարցաշարի միջոցով դժվար է պարզաբանել, թե որքանով է ապահովվում թափանցիկությունը և հասանելիությունը, կամ որքանով են օգտագործվում կայքի հնարավորությունները ուսանողների կողմից տեղեկատվության ձեռք բերելու համար: Ընդհանուր առմամբ վերլուծված չէ, թե ուսանողների և դասախոսների քանի տոկոսն է օգտվում ինտերնետային կայքից որակի ապահովման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար, և այդ մեխանիզմը որքանով է ծառայում իր նպատակին:

ԿԳՆ վարկանիշավորման տվյալներով բուհը որոշ ցուցանիշներով հաջողություններ է գրանցել, ինչը նույնպես համարում է արդյունավետ աշխատանքի արդյունք:

Եզրահանգում: Հաշվի առնելով որակի ապահովման համակարգի ձևավորման փուլում գտնվելը, քաղաքականության և ընթացակարգերը նկարագրող փաստաթղթերի գոյությունը, որակի ապահովման համակարգի մի շարք մշակված և կիրառության մեջ գտնվող մեխանիզմների առկայությունը, տարբեր պարբերականությամբ իրականացվող գործընթացների արդյունքները և համակարգի վերանայման ընթացակարգերը,

թափանցիկություն և հաշվետվողականություն ապահովելու համալսարանի քայլերը՝ օգտագործելով ինտերնետային կայքի և ներքին տեղեկատվական ռեգիստրի հնարավորությունները՝ կարելի է եզրակացնել, որ համալսարանի՝ որակի ապահովման ներքին համակարգը հեռանկարում կարող է ապահովել որակի մշակույթի ձևավորում և նպաստել գործընթացների շարունակական բարելավմանը:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելությունը և նպատակները	**Բավարար է**
2. Կառավարումն ու վարչարարությունը	**Բավարար է**
3.Մասնագիտության կրթական ծրագրերը	**Անբավարար է**
4. Ուսանողները	**Բավարար է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը	**Անբավարար է**
6. Հետազոտությունը և զարգացումը	**Անբավարար է**
7. Ենթակառուցվածքը և ռեսուրսները	**Բավարար է**
8.Հասարակական պատասխանատվությունը	**Բավարար է**
9. Արտաքին կապերը և միջազգայնացումը	**Բավարար է**
10. Որակի ներքին ապահովման համակարգը	**Բավարար է**

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրությունը

28.07.2015թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

Տիգրան Մնացականյան – 2008թ. ավարտել է Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանը <<Կառավարում>> մասնագիտությամբ՝ որպես դիպլոմավորված մասնագետ: 2011 թ. շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ՝ «Հանրային կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությունները (ՀՀ օրինակով)» թեմայով: Հետազոտությունների ոլորտը ներառում է հանրային կառավարումը, ռազմավարական կառավարումը, ռիսկերի կառավարումը և այլն: 2011թ.-ից՝ ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ: 2008-2011թթ.՝ ՀՊՏՀ ուսանողական գիտական ընկերության խորհրդի նախագահ: Հրատարակել է գիտական հոդվածներ կառավարման տեսության, հանրային կառավարման պատմության, հանրային կառավարման ժամանակակից հիմնախնդիրների և արդյունավետության գնահատման մեթոդաբանության ու բարձրացման, տեղական ինքնակառավարման հիմնախնդիրների վերաբերյալ: Մասնակցել է բարձրագույն կրթության որակի բարձրացման հարցերին նվիրված միջազգային գիտաժողովի: 2013 թ. ընդգրկվել է ՈԱԱԿ փորձագիտական խմբում՝ որպես փորձագետ: Ինտելեկտուալ խաղերի երևանյան ակումբի փոխնախագահն է:

Ռոմեյն Հուլպիա - ծնված 21.04.1946թ., հոգեբանական և մանկավարժական գիտությունների մագիստրոս է, ունի փիլիսոփայական և մանկավարժական գիտությունների դոկտորին համապատասխան որակավորում՝ տրված Գենտի համալսարանի կողմից, հիմք ընդունելով գիտական հոդվածները:

Աշխատանքային գործունեության ընթացքում զբաղեցրել է մի շարք պաշտոններ, որոնք են՝ ա/խորհրդատու «Psycho MedicalSocial» կենտրոնում, բ/բանակային ծառայություն՝ հետնակի սպա, ավելի ուշ՝ բանակային ծառայության պոտենցիալ թեկնածուների ընտրության և հավաքագրման կենտրոնի սպա, գ/կառավարման դասընթացավար, վերապատրաստող «General Motors» Անտվերպեն 1970թ.: «Կրթական քաղաքականություն» և «Կրթական փորձ» դասընթացների պատասխանատուն է եղել Գենտի համալսարանի Հոգեբանություն և կրթական գիտություններ ֆակուլտետում շուրջ 21 տարի, Ֆլեմանդական կրթության՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման ծրագրի ղեկավարը, Բոսնիա և Հերցոգովինայում գտնվող համալսարանների՝ «Որակի ապահովման համակարգի» ներդրման խմբի անդամ, ինչպես նաև երկու փորձագիտական այցի ղեկավար նույն երկրում, Հոլանդա-ֆլամանդական հավատարմագրման ասոցացիայի կողմից 20 նոր կրթական ծրագրերի հավատարմագրման ղեկավար, Որակի ապահովման բելգիական VLHORA և VLHUR, ինչպես նաև նիդեռլանդական NVAO կազմակերպությունների փորձագետ:

Մկրտիչ Ավագյան - 1977–ին ավարտել է Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը (որակավորումը՝ Անգլերեն և ֆրանսերեն լեզուների մասնագետ, ուսուցիչ), 2000 թ-ին Չիկագոյի Իլինոյսի պետական համալսարանում Ամերիկագիտության մասնագիտացում (որակավորումը՝ ամերիկագետ): Փիլիսոփայական գիտությունների թեկնածու է, լեզվաբանության դոցենտ: Պաշտպանել է ատենախոսություն «Փաստարկում և լեզու» թեմայով:

1979 թվականից դասավանդել է Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում, 2010-ից առ այսօր Խ.Աբովյանի անվան հայկական պետական

մանկավարժական համալսարանում: 1987-ից Վ.Բրյուսովի անվան ԵրԼՀ-ի ուսումնական բաժնի վարիչ, Օտար լեզուների ֆակուլտետի դեկան, պրոռեկտոր: 2011թ. Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կրթական բարեփոխումների և որակի ապահովման վարչության պետն է:

Հեղինակ է 2 բուհական, 1 դպրոցական դասագրքերի, ունի 30-ից ավել հոդվածներ լեզվաբանական փաստարկման, ամերիկագիտության, բրիտանագիտության և կրթության կառավարման ոլորտներում:

Անդամակցել է ԵԽ-ի ԺԼԵԿ-ին 2008-2010թ.թ., ԱՊՀ լեզվաբանական բուհերի ասոցիացիային 2010թ., ԵԽ կրթության դիրեկտորատի, ՅՈՒՆԵՍԿՈ-ի, ՏԱՍԻՍ, ՏԵՄՊՈՒՍ ծրագրերի շրջանակներում մասնակցել է շուրջ 30 միջազգային գիտաժողովների նվիրված կրթության արդի բարեփոխումներին, որակի ապահովման խնդիրներին:

Մասնակցել է ՀՊՄՀ որակի ապահովման, ինքնավերլուծության իրականացման աշխատանքներին:

Գագիկ Քթրյան –2007թ-ին ավարտել է ԵՊՀ-ն՝ ստանալով ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի մագիստրոսի աստիճան: 2007-2010թթ եղել է ԵՊՀ թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասպիրանտ: 2010թ-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը. ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու է: Ունի տպագրված 5 գիտական հոդված, որից 3-ը միջազգային հեղինակավոր ամսագրերում: 2011թ-ին մասնակցել է "Հարմոնիկ անալիզ և մոտավորություններ - V" միջազգային գիտաժողովին:

2010թ-ին արժանացել է մրցանակի՝ ՀՀ Սպորտի և երիտասարդության նախարարության կողմից կազմակերպված "Երիտասարդների գիտատեխնիկական և գիտահետազոտական նախագծերի մրցույթում" հաղթելու համար:

2008թ.-ից առ այսօր դասավանդում է Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանում: 2012-2014թթ. համատեղությամբ դասավանդել է ԵՊՀ մագիստրատուրայում: 2011-2015թթ. եղել է Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի որակի ապահովման կենտրոնի ղեկավար և կրթական բարեփոխումների գծով պրոռեկտոր: 2015թ.-ից զբաղեցնում է ՀՀ ՊՆ մարշալ Ա.Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտի ուսումնամեթոդական բաժնի որակի ապահովման և վերլուծության բաժանմունքի պետի պաշտոնը:

2013 և 2014թթ. ղեկավարել է Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանում ինքնավերլուծության գործընթացը: Մասնակցել է կրթական համակարգի բարեփոխումներին և որակի ապահովմանը նվիրված ՈԱԱԿ-ի կազմակերպած եռափուլ վերապատրաստումներին:

Աստղիկ Պետրոսյան – ՀՊՄՀ Կրթության կառավարում մասնագիտության մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանող է, ԵԹԿՊԻ-ի ռեկտորի օգնականը: Հայկական կարմիր խաչի ընկերություն անդամ է: Մասնակցել է "Education Quality and Relevance" (EQRP) on the cooperation between Kh.Abovyan Armenian State Pedagogical University and the University of Oulu (2013), International conference "Chess in Schools" (ICCS) (2014) միջազգային գիտաժողովներին, 2014թ. Որակի շաբաթին՝ «Որակի մշակույթի ամրապնդումը ՀՀ մասնագիտական կրթական համակարգում որակավորումների ճանաչման ապահովումը» շահակիցների երրորդ համաժողովին,
Միջազգային թատերական ինստիտուտի/ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կատարողական արվեստների բարձրագույն ցանցի կոնֆերանսին: Կամավոր մասնակցել է ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ ինքնավերլուծության խմբի աշխատանքներին: ՈԱԱԿ-ի կողմից իրականացված ուսանող-փորձագետների վերապատրաստման դասընթացների մասնակից է:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Եվրասիա միջազգային համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցերի

11.05.2015 թ.–14.05.2015 թ.

	11.05.2015 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ	9:30	10:15	45 րոպե
2	Հանդիպում պրոռեկտորների հետ	10:30	11:30	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	11:45	12:45	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	13:45	45 րոպե
5	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	14:00	15:00	60 րոպե
6	Հանդիպում շրջանավարտների հետ	15:15	16:15	60 րոպե
7	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ	16:30	17:30	60 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:30	60 րոպե

	12.05.2015 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում դասախոսների հետ	9:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	10:45	11:45	60 րոպե
3	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	12:00	13:30	90 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:15	45 րոպե
5	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ	14.30	15:45	75 րոպե
6	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	16:00	17:00	6 0 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	18:30	90 րոպե

	13.05.2015թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ՈՒԽ անդամների հետ	9:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում բակալավրիատի ուսանողների հետ	10:45	12:00	75 րոպե
3	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	12:15	13:45	90 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	14:00	14:45	45 րոպե
5	Հանդիպում մագիստրատուրայի ուսանողների հետ	15:00	16:00	60 րոպե
6	Հանդիպում ուսանողների իրավունքների պաշտպանի հետ	16:15	16:45	30 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	18:30	90 րոպե

	14.05.2015 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում որակի ապահովման կենտրոնի հետ	9:30	10:30	60 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	10:45	12:00	75 րոպե
3	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:15	13:15	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:15	45 րոպե
5	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	14:15	14:45	30 րոպե
6	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	15:00	15:45	45 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:45	16:15	30 րոպե
8	Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ	16:30	17:15	45 րոպե
9	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:30	60 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափանիշ
1	ԵՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն	1-10
2	ԵՄՀ կանոնադրություն	1, 2
3	ԵՄՀ Որակավորումների շրջանակ	1, 3
4	ԵՄՀ 2014-2018 թթ. ռազմավարական ծրագիր	1-10
5	ԵՄՀ Կառավարման խորհրդի նիստերի արձանագրություններ	1-10
6	ԵՄՀ գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների գնահատում	1-10
7	ԵՄՀ Որակի ապահովման ուղեցույց	1-10
8	Հարցաթերթերի ձևաթղթեր և օրինակներ	1-10
9	ԵՄՀ ռեկտորի տարեկան հաշվետվություններ	1-10
10	ԵՄՀ 2010-2015 թթ. ռազմավարական ծրագիր	1-10
11	ԵՄՀ կառավարման խորհրդի գործունեության կանոնակարգ	2
12	ԵՄՀ գիտական խորհրդի գործունեության կանոնակարագ	2
13	ԵՄՀ գիտական խորհրդի նիստերի արձանագրություններ	2, 3, 5, 6
14	ԵՄՀ ռեկտորի ընտրության ընթացակարգ	2
15	ԵՄՀ ամբիոնի գործունեության կանոնակարգ	2
16	ԵՄՀ ամբիոնի վարիչի ընտրության կարգ	2
17	ԵՄՀ մեթոդական խորհրդի գործունեության կանոնակարգ	2
18	ԵՄՀ գործավարության կանոնակարգ	2
19	ԵՄՀ ուսանողների իրավունքների պաշտպանի գործունեության կանոնակարգ	2, 4
20	ԵՄՀ ուսանողական խորհրդի կանոնադրություն	2, 4
21	Որակի ապահովման կենտրոնի գործունեության կարգ	2, 10
22	Ֆինանսական կառավարման բաժնի գործունեության կարգ	2, 7
23	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի գոծունեության կարգ	2, 5
24	Հասարակայնության հետ կապերի և գովազդի բաժնի գործունեության կարգ	2, 8
25	Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի գործունեության կարգ	2, 6, 9
26	Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնի գործունեության կարգ	2, 4
27	Գրադարանի գործունեության կարգ	2
28	Աշխատանքի աշխատանքային էթիկայի և վարքագծի կանոններ	2, 5
29	Աշխատողի ներքին կարգապահական կանոններ	2, 5
30	Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ	2, 5
31	ԵՄՀ Փաստաթղթերի կառավարման ընթացակարգ	2

32	ԵՄՀ Որակի ապահովման քաղաքականություն	2, 10
33	ԵՄՀ կառավարման և վարչարարության քաղաքականության նախագիծ	2, 7
34	ԵՄՀ հիմնադիրների խորհրդի նիստերի արձանագրություններ	2, 7
35	Կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման կարգ	3
36	«Կառավարում» մասնագիտության նկարագիր	3
37	«Իրավագիտություն» մասնագիտության նկարագիր	3
38	«Օտար լեզուներ» մասնագիտության նկարագիր	3
39	Ուսանողի գիտելիքի, կարողությունների և հմտությունների գնահատման կանոնակարգ	3
40	Առարկայական ծրագրի ձևաչափ	3
41	Կրթական ծրագրի մշակման ձևաչափ	3
42	Առարկայական ծրագրեր	3
43	Մեթոդական խորհրդի նիստերի արձանագրություններ	3
44	Իրավաբանական կլինիկայի գործունեության կարգ	3
45	Ակադեմիական ազնվության և գրագողության կանխարգելման կարգ	3
46	Պրակտիկաների կազմակերպման կարգեր	3
47	Ուսումնական պլաններ	3
48	Դիպլոմի հավելված	3
49	Այլ կազմակերպությունների հետ պայմանագրեր, համաձայնագրեր, հուշագրեր	3, 8, 9
50	Ավարտական աշխատանքների նախապատրաստման և պաշտպանության կազմակերպման մեթոդական ցուցումներ	3
51	Մագիստրոսական թեզերի նախապատրաստման և պաշտպանության կազմակերպման մեթոդական ցուցումներ	3, 6
52	Ամբիոնների նիստերի արձանագրություններ	3, 5
53	Մագիստրոսական ատենախոսություններ և ավարտական աշխատանքներ	3, 6
54	Պրակտիկայի ծրագրեր, հաշվետվություններ	3, 4
55	Պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածություններ	3, 5
56	ԵՄՀ սովորողների ընդունելության կարգ	4
57	Օգնությունների տրամադրման կարգ	4
58	Ուսման վարձի գեղչման կարգ	4
59	ԵՄՀ ուսանողի պայմանագրի օրինակ	4
60	Բողոքների քննարկման կարգ	4
61	Ռեկտորի հրամանը անվճար անգլերենի դասընթացների իրականացման վերաբերյալ	4, 5, 8, 9
62	Ուսանողների՝ քննական թեստի վերաբերյալ բողոքարկման արդյունքների որոշման օրինակ	4
63	ԵՄՀ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների պաշտոնների անձնագրեր	5

64	Ամբիոնի վարիչի պաշտոնի անձանգիր	5
65	Ուսանողի կողմից դասախոսի գնահատման կարգ	5
66	Աշխատանքային պայմանագրերի օրինակ	5
67	Պրոֆեսորադասախսական կազմի հաստիքացուցակ	5
68	Վարչական աշխատակիցների հաստիքացուցակ	5
69	Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման և հավելավճարի սահմանման կարգ	5
70	Դասախոսների վերապատրաստման կարգ	5
71	ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոններ անձնագրեր	5
72	Ամբիոնների վարիչների դասալսումների արդունքներ	5
73	Աշխատակազմի ձևավորման, գնահատման, զարգացման քաղաքականություն	5, 10
74	ԵՄՀ հետազոտական գործունեության խթանման դրամաշնորհների տրամադրման կարգ	6
75	ԵՄՀ յունիթների հրատարակման կարգ	6
76	Հետազոտական արդյունքների հրատարակման, հետազոտության վերհանված տվյալների վավերացման և հրապարակայնացման կարգ	6
77	ԵՄՀ մասնաշենքի հատակագիծ	7
78	ԵՄՀ գնումների կազմակերման ընթացակրգ	7
79	Ընթացիկ անհրաժեշտ գնումների զեկուցագրի ձևաչափ	7
80	Պահանջագրի ձևաչափ	7
81	ԵՄՀ ֆինանսական հաշվետվություններ	7

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1) Բակ
2) Բանավեճի ակումբ
3) Բուժկետ
4) Բուֆետ
5) Գործատուների հետ կապի և կարիերայի կենտրոն
6) Գրադարան
7) Իրավագիտության ամբիոն
8) Լսարաններ
9) Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն
10) Կոնֆերանս սրահ
11) Համակարգչային լսարաններ
12) Հանդիպումների դահլիճ
13) Մարզադահլիճ
14) Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոն
15) Ներքին ցանցի սերվեր
16) Որակի ապահովման կենտրոն
17) Վերելակ
18) Ցուցատախտակներ
19) Ուսանողական խորհուրդ
20) Ուսումնական մաս
21) Օտար լեզուների և գրականության ամբիոն
22) Ֆրանսերենի լսարան

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԲՈՒՀ -Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԲԿԵՏ – Բարձրագույն կրթության եվրոպական տարածք
ԵԹԿՊԻ-Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ
ԵՄ - Եվրոպական միություն
ԵՄՀ - Եվրասիա միջազգային համալսարան
ԵԽ – Եվրոպայի խորհուրդ
ԵրԼՀ - Երևանի լեզվաբանական համալսարան
ԵՊՀ - Երևանի պետական համալսարան
ԶԼՄ - Զանգվածային լրատվամիջոց
ԻՊ - Իրավունքների պաշտպան
ԾԻԳ - Ծրագրերի իրականացման գրասենյակ
ԿԳՆ - Կրթության և գիտության նախարարություն
ՀԿ - Հասարակական կազմակերպություն
ՀՊՏՀ – Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ՄԿԾ - Մասնագիտության կրթական ծրագիր
ՄՈԳ - Միջին որակական գնահատական
ՄՈՒՀ - Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ - Որակի ապահովում
ՈԱԱԿ - Որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱԿ - Որակի ապահովման կենտրոն
ՈԱՇ - Որակավորումների ազգային շրջանակ
ՈԿՀ - Որակի կառավարման համակարգ
ՊԴԿ – Պրոֆեսորադասախոսական կազմ
ՊԴ – Պրոֆեսորադասախոսական
ՊՆ – Պաշտպանության նախարարություն
ՊԻԳԲ – Պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում
ՌԾ - Ռազմավարական ծրագիր
ՍՊԸ - Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
SS – Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՈԻԳԸ - Ուսանողական գիտական ընկերություն
ՈԻԽ – Ուսանողական խորհուրդ
ECTS - European credit transfer and accumulation system